ՏԱՍՆՅՈԹ

Դայջեսթ

Ձմեռ - 2019/2020

Բովանդակություն

Արագածոտն 6 - 8

Աննա Սարգսյան
Սուսաննա Գրիգորյան
Վալյա Գասպարյան

Արարատ 10 - 17

Անուշ Մարգարյան
Դավիթ Գորգոյան
Էսթեր Ասատրյան
Ռազմիկ Գասպարյան
Վալենտինա Չիլինգարյան

Արմավիր 18 - 21

Անի Հարությունյան
Աննա Անդրեասյան
Քրիստինե Աչոյան

Գեղարքունիք 22 - 29

Մարիամ Տոնոյան
Մերի Ավետիսյան
Զարինե Կիրակոսյան
Նելլի Խաչատրյան

Լոռի 30 - 37

Մարատ Սիրունյան
Մարգարիտա Ոսկանյան
Մարգարիտա Ղազարյան
Մարիամ Բարսեղյան
Մելինե Հայրապետյան
Շուշան Ներսիսյան
Վահան Չոբանյան

Կոտայք 38 - 41

Արտյոմ Սաֆարյան
Սուրեն Կարապետյան

Շիրակ 42 - 43

Ելենա Հովհաննիսյան
Հովհաննես Սարգսյան

Բովանդակություն

Սյունիք 44 - 51

Անահիտ Բադալյան
Մարիամ Աբրահամյան
Նինա Առուստամյան
Սևակ Միրաբյան
Շուշան Ստեփանյան

Վայոց Ձոր 52 - 55

Աստղիկ Յունանյան
Նանե Եղիազարյան

Տավուշ 56 - 60

Հայկ Քալանթարյան
Մարիամ Միքայելյան
Սերյոժա Առաքելյան

Երևան 61 - 69

Անետա Բաղդասարյան
Անուշ Դավթյան
Ջուլիա Աբրահամյան
Լիլիթ Վարդանյան
Մարիամ Նալբանդյան

Բովանդակություն

6 Ամենաթանկս
7 Մանդարինի հոտը
8 Իմ կանաչ հեծանիվը
10 Պատմություններ օվկիանոսի այն կողմից
12 Հետհաշվարկ
13 695
14 Միասնականները մոտենում են
15 Ես արդեն զինվոր եմ
16 Մոտիվացված լինելու չորս պայման
17 Ինչպես ստանալ վարորդական վկայական
18 Աստված ու Թուփակը
19 Կյանքը սուրճի բաժակում
20 Էլ առաջվանը չենք
21 Թող լինի
22 Իմ «Տարվա մարդը». Քույրս
24 Ինչպես է ծնվում իմ բանաստեղծությունը
25 Ինչ եմ սովորում ԵԹԿՊԻ-ում
26 Ճոխ փասադների ու մաքուր կոշիկների հետևում
27 Ձոն տաքսիստին
28 Մեկ-մեկ երբեմն ու հաճախը տեղերով փոխած
30 Հո՜րի, լաո...
31 Մեզ համար ապրած կյանք
32 Ամուր հավատք, հզոր բանակ, պաշտպանված հայրենիք. Գոռ Խուդինյան
33 Իսկ գիտե՞ք՝ ով է ամենաանկարևորը
34 Խաղաղ առավոտների պատրանքը
36 Թեյի սեղան
37 Գյուղում ուրիշ է
38 Ծանոթացեք. Յուրի Սաքունց
40 Ոչ ոքից չե՜նք գերադասում
42 Հավաքելու ժամանակը
43 Գյումրի. հիշողության մեխեր
44 Կապանը՝ երիտասարդության մայրաքաղաք
45 Այն, ինչ մենք սիրում ենք
46 Երջանիկ հայերեն
47 Ինձ մանկություն կտանե՞ք
48 Ես դեռ սպասում եմ
49 Իմ «Տարվա մարդը». Դու կհաղթես, Արմեն
50 Փայլուն աչքերով իմ սիրուն պապը
52 Անկապ նյութ
53 Առաջին կուրսեցու անսովոր կյանքը
54 Զինվորի ընկերուհու անկեղծ խորհուրդներ
56 Երկրի ափի մեջ. ժամփորդական օրագիր
58 Ինչքան օտար, նույնքան էլ հարազատ
59 Տարվա վերջին նյութս, բայց առաջին անգամ բանակից
62 Ֆրանսիական օրագիր
64 Այն մասին, թե ինչ է նշանակում սովորել հաշվապահություն
65 Դատարկ ափսեներ
66 «Թատրոնն անընդմեջ ստեղծագործական ընթացք է». Երվանդ Մանարյանի հիշատակին

Լուսանկարները՝ Հռիփսիմե Եղիազարյանի, Աիդա Շահբազյանի, Լիլիթ Վարդանյանի, Արմեն Հարությունյանի, Սիրան Մանուկյանի, Լուսինե Բաբայանի, Աշոտ Հարությունյանի, Հովհաննեսս Սարգսյանի, Անետա Բաղդասարյանի, Անուշ Դավթյանի, Զարինե Կիրակոսյանի, Լիդա Արմենակյանի, Անի Ավետիսյանի, Դիանա Շահբազյանի

,

Երևան, Աբովյան 48, բն. 19
Էլ. փոստ. 17am.reporter@gmail.com
www.17.am, www.mananayouth.org

Ամենաթանկս

Հերթական նամակս եմ գրում, որ կարդալու են շատերը, բայց չես կարդալու դու, որովհետև արդեն վերադարձած կլինես զինվորական ծառայությանդ: Իմ տասնութ տարվա ընկեր, բարեկամ, հարազատ… Թերևս նախընտրեմ այս երեք բառերով սահմանափակվել, այլապես բոլոր բառարանները թերթելու դեպքում էլ չեմ կարողանա զգացածս արտահայտել բառերով, որովհետև հայերենի և աշխարհիս ոչ մի լեզվի մեջ հպարտությունն ու հավատարմությունը, սերն ու կարոտը մեկ բառով հանդես չեն գալիս: Ամանորյա նվերս դու էիր, սպասածիցս ուշ եկար, բայց գալդ կարգավորեց տոնական տրամադրությունս: Իմ ողջ կյանքը քիչ չէ՞, որ հիշեմ քեզնից ամիսների կարոտս առնելու րոպեները. քեզ տեսնելուն պես պարզապես դուրս թռա մեքենայից, արցունքների մեջ կորած մոռացա դուռն անգամ փակել ու գրկեցի, գրկեցի քեզ մի այնպիսի ջերմությամբ, որով երբևէ գրկած չկայի: Վերջին ժամանակներս երևի թե այդքան ուրախ չէի եղել, ու հենց այդ պահին էր, որ կարող էին ինձ հարցնել՝ ինչպե՞ս ես, ու առանց երկար-բարակ մտածելու կասեի՝ լավ եմ, որովհետև քեզ տեսնում եմ ո՛չ նկարների մեջ, այլ հենց իմ աչքերով, իմ առջև կանգնած: Հիմա էլ արցունքներս գլորվում ու ընկնում են ծրարի վրա: Դեռ շատ ու շատ նամակներ պիտի գրեմ ու շատ արցունքներ են թափվելու: Հա, ես նույնն եմ մնացել, բայց դու փոխվել էիր, կապույտ աչքերիդ մեջ ընթեռնելի էր «կարոտ» բառը: Իմ փոխված, բայց և նույն տասնութ տարվա ընկեր, բարեկամ, հարազատ… Արդեն կարոտում եմ:

Աննա Սարգսյան

Մանդարինի հոտը

Փողոցներից նորից մանդարինի հոտ է գալիս:
Գիշերը էլ մութ չէ: Երբ աչքերդ կկոցում ես, քաղաքը մեծ, գունավոր լաքա է դառնում:
Նոր տարիներից միշտ էլ մանդարինի հոտ է եկել: Ուղղակի առաջ, երբ սեղանի մի ծայրից մյուսը ուտելով գալիս էիր, էլ մանդարինի պես մանրուքին ուշադրություն չէիր դարձնում:
Իհարկե, խնդիրներ միշտ էլ եղել են: Օրինակ. Նոր տարվա սեղանից հետո դժվարությամբ էիր շնչում, չէիր կարողանում շարժվել, ընկերներդ էլ մյուս կողմից աղանդեր էին հյուրասիրում՝թարմ ու սառը ձյան տեսքով, հետո էլ ստիպված էիր մամային բացատրել, թե ոնց է հնարավոր 10 րոպեում մինչև ներքնազգեստը թրջվել:
Կամ ավելի վատ, կարգին ձյուն ոչ էլ գալիս էր, ձնագնդին ցեխագնդի էր դառնում ու ամանորյա նոր-նոր սպիտակ սվիտերը, որից վիզդ քոր էր գալիս, տեսքը մի քիչ կորցնում էր:
Բայց փոխարենը քննության համար երկար բարակ, անիմաստ ու անհետաքրքիր նախադասություններ անգիր չէիր անում՝ ամեն անգամ ավելի հստակ պատկերացնելով, որ միևնույն է, ոչ մի բանի չես հասնելու, որովհետև դրա համար գոնե մի քիչ պետք է սիրես ինչ-որ անում ես, կամ էլ ուղղակի ամեն ինչին մի քիչ թեթև նայես:
Սիրել չես փորձում, թեթև նայել էլ չի ստացվում:
Գնալով Նոր տարվա հրաշքը կորում է, անհետանում է ոնց որ խանութների ցուցափեղկերից հզոր ռենջերներով քաղցր բամբակները, հեռուստաէկրաններից էլ՝ Ջեյիդն ու Լուկասը:
Գնալով ավելի ու ավելի ես նմանվում էն ծերուկին, որ նկարի մեջ լաց է լինում, որովհետև շուրջը ոչինչ չի փոխվում:
Ամեն տարի սպասում ես, որ ուր որ է կգան, ձեռքիցդ կբռնեն, կտանեն մեկ ուրիշ նկար, բայց ոչ ոք չի գալիս: Իսկ դու քո նկարին շատ ես ընտելացել ու խիզախություն էլ չունես ինքնուրույն հեռանալու համար:
Վախենում ես, որ հաջորդ անգամ, երբ փողոցներից էլի մանդարինի հոտ գա, նույնիսկ քննությունները չեն լինի, որ գոյությունդ արդարացնեն:

Սուսաննա Գրիգորյան

Իմ կանաչ հեծանիվը

Երբ հայրս մեքենայից իջեցրեց, միանգամից հասկացա, որ մյուս հեծանիվներիցս շատ է տարբերվում: Նախ, միանգամից կարելի էր վարել՝ անիվներն արդեն պինդ էին: Կանաչ էր, հետո էլ մեծ էր, հետո էլ ես էի մեծ ու առանց էն փոքր ակների էլ ինձ հասանելի էր: Ես՝ մեծ, ինքը՝ մեծ, սազում էինք: Համ էլ մի քանի մետր հեռու գնալն էլ էր սազում, մանավանդ, որ ընկերներս տարածքում էին, ես էլ ցույց տալու բան ունեի:

Բակի երեխեքը, որ նստում էին ու ոտքերը հասնում էր ոտնակներին, ուրեմն մեծ էին, որ վարում էին: Էլ իրենց հասնող չկար: Ինձ դուր էր գալիս, որ հեծանիվիս հասնելու համար օժանդակ միջոցներ էին օգտագործում՝ քար ոտքի տակ, ընկեր, ծնող, լաց: Ինձ համարյա վարելու ժամանակ չէր մնում, բայց ես գոհ էի, ինձ հո վարե՞լը չէր պետք: Տեր լինելն էլ մեծ բան էր:

Բայց ինչպես ամեն բան, հեծանիվ վարելն էլ իր ժամանակն ունի, ու ձմեռը բերեց այդ ժամանակի վերջը: Փառքիս հովանավորին սպասում էր ավտոտնակը: Բայց ինչպես ամեն բան, ձմեռն էլ իր վերջն ունեցավ:

«Ես, որ էսքան մեծացել եմ, բա կանաչս ի՞նչ չափսերի կլինի: Անցած տարվա փոքրերը, ում չէր հետաքրքրում, հիմա մեծացած կլինեն, ու կանաչիս երկրպագուները կշատանան»,- մտածում էի ու մի հսկայի պատկերացնում, որի հետ միասին ավտոտնակն էլ էր աչքիս մեծանում: Հայրս բացեց ավտոտնակի դուռը, դուրս բերեց: Չճանաչեցի, չհավատացի:

Չէի հաշվարկել, որ ինքն իմ նման բոյովանալու հատկություն չունի, բայց իմ համեմատ փոքր դառնալ կարող է: Բայց մի բան էլ կա, որ էլ չունի՝ զարմացնելու կարողություն: Հասարակացել էր:

Մի պահ ինձ թվաց, որ ձմռան ամբողջ ցուրտն իր վրա է եղել, կուչ է եկել, բակի երեխեքն էլ մի-մի բան թռցրել են վրայից ու ակներից էլ կտրել:

Չէ, բայց ես մեծացել էի. լաց չեղա:

Վալյա Գասպարյան

Պատմություններ օվկիանոսի այն կողմից

Ողջու՜յն, մեկ դարաշրջան է չենք հանդիպել... Իրականում, եթե իմ դասընկեր Դավիթը լսեր սա, ապա կասեր, որ հումորի զգացումս ինչպես միշտ, ինչ-որ մեկի բռունցքներին է բախվել:

Սակայն Դավիթն այժմ բանակում է, ինչպես իմ մյուս ընկերները, որոնց անչափ կարոտել եմ: Բայց վստահ եմ, որ եթե Դավիթը կամ նրանցից որևէ մեկը կարդար հոդվածս, ապա կասեր, երջանիկ է, որ ինձ հետ հանդիպումը ևս երկու տարով հետաձգվել է: Դե՛, ես չեմ նեղանում, որովհետև գիտեմ, որ կատակում են (հը՛մ, իրականում գիտեմ, որ չափից շատ եմ խոսում ու երբեմն առիթ եմ հանդիսանում, որ նրանց նեյրոնները ինքնասպան լինեն):

Լավ, անցնեմ բուն նյութին: Ինչպես տեսնում ես՝ այս ընթացքում բոլորիս կյանքում ինչ-որ փոփոխություն է եղել: Օրինակ, իմ կյանքում ավելացել է ակնոցը, նաև՝ քաշս: Հա՛, քիչ մնաց մոռանայի. նաև երկիրը, որտեղ ապրում եմ: Այս փոփոխությունները ՖԼԵՔՍ փոխանակման ծրագրի շնորհիվ է, որն ինձ հնարավորություն է տվել մեկ ակադեմիական տարի ուսանել ԱՄՆ-ում՝ Կանզաս նահանգի Հատչինսոն ավագ դպրոցում:

Բայց ավելի կարևորն այն է, որ երկար դադարից, մաքառումներից, հերթական «ալարումների» տեղատարափը հաղթահարելուց հետո, ես կրկին վերագտա գրելու ցանկությունս: Այսօր եկել եմ, որ օվկիանոսի այն կողմից քեզ հետ կիսվեմ իմ փոքրիկ պատմություններով ու զրույցներով, որոնք հուսամ քեզ դուր կգան: Ուզում եմ նաև նշել, որ հնարավոր է՝ դրանք քեզ անավարտ անհեթեթություններ թվան, բայց ինձ համար ինչ-որ խորհուրդ ունեն...

Միսս Ստատսմենը

-Good morning. My name is Anush. I am an exchange student from Armenia,- ողջունեցի կենսաբժշկության ուսուցչուհուս առաջին ուսումնական օրը:

-Բարև, ո՞նց ես, ես լավ եմ,- պատասխանեց նա ինձ հայերենով՝ հանգեցնելով բբերիս լայնացմանը և դոպամինիս մակարդակի բարձրացմանը:

Սկզբում մտածեցի, որ նա հայ է, ու արդեն պատրաստվում էի հայկական ավանդական քոչարին միացնել, խորոված պատրաստել ու նշել այդ փաստը: Չեմ թաքցնի, այդ մի քանի նանովայրկյանների ընթացքում հազար ու մեկ վարկած մտածեցի նրա հայ լինելու ու հայերեն խոսելու փաստի մասին, սակայն դրանք ապացուցելու ճանապարհին, միսս Ստատսմենը (այդպես է ուսուցչիս անունը) առաջ քաշեց այնպիսի փաստեր, որոնք միանգամից հերքեցին դրանք: Նա պատմեց, որ ծնվել է Գլենդելում ու շրջապատված է եղել հայերով: Իրականում, հաճախ կատակում է, որ կիսով չափ հայ է: Ավելին, առաջին եռամսյակում չկար մի դասաժամ, որ Հայաստանի պատմությունից, մշակույթից, խոհանոցից ու սովորություններից չխոսեինք: Միսս Ստատսմենը հիշում է, որ ապրիլի 24-ին գրեթե ոչ ոք դպրոց չի գնացել, որովհետև դպրոցում մեծամասամբ հայեր են եղել, ու իր ընտանիքն էլ, ինչպես ամեն հայ ընտանիք, անսահման ցավով է լցվել այդ օրը:

Նա ամենից շատ սիրում է պատմել, թե ինչպես են հայ տատիկներն ու պապիկները խնամում թոռնիկներին, երբ ծնողները գնում են աշխատանքի: Նաև հաճախ դժվարանում է առանձնացնել իր ամենասիրելի հայկական ուտելիքը և բոլորին հորդորում է այցելել Հայաստան: Երբեմն դասերից հետո միասին թերթում ենք նրա ֆեյսբուքյան ընկերների ցանկը, փնտրում հայերի ու երկար զրուցում նրանց մասին: Միսս Ստատսմենը սիրում է պատմել իր հայ ընկերների մասին, թեպետ երբեմն դժվարանում է արտասանել Իշխանուհու կամ էլ Ոսկեհատի անունը: Արդարության համար նշեմ, որ այս վեց ամիսների ընթացքում նա միակն է, ով ճիշտ է արտասանում անունս. դեռ մի բան էլ՝ իսկական հայի նման:

Ինձ հանդիպելու հաջորդ օրը նա ոգևորությամբ պատմում էր, որ խոսել է իր մայրիկի հետ, ով Գլենդելում ուսուցիչ է, ու պատմել է իմ մասին: Մենք որոշեցինք երբեմն խոսել նրա մայրիկի հետ տեսազանգով, որպեսզի տեսնեմ նրա հայ աշակերտներին: Միսս Ստատսմենի դասերին ես ինձ տանն եմ զգում: Իզուր չէ, որ նա իմ ամենասիրելի ուսուցիչն է այստեղ:

Իմ անսովոր անունը

Ամերիկայի պատմության դասաժամ, երբեմնի Անուշ, ում այժմ դիմում են ամեն կերպ՝ բացի Անուշից, ու անհամար հարցեր...

-Հե՜յ, Անուկ, Ռումինիայում կովեր կա՞ն,- հարցրեց դասընկերներիցս մեկը:

-Անուշ, Արմենիա, այո՛, կան,- արդեն հազարերորդ անգամ ուղղելով, սեփական նեյրոններիս մահը տեսնելով, բայց խոհեմաբար ժպտալով պատասխանեցի ես:

Երկու րոպե լռություն...

-Աշուն, իսկ խոտ ունե՞ք,- լսվեց դասարանի մյուս ծայրից:

Թեպետ ես կուզեի գարուն լինել կամ գոնե ամառ, բայց ինչ արած, համակերպվել է պետք:

-Դե հա, ունենք: Ինչ-որ բան պիտի լինի՞, որ այդ խեղճ կովերն ուտեն,- փորձեցի սրամտել ես:

-Ա՜շ, Աշո՛տ, իսկ խնձոր ունե՞ք:

Այս սա արդեն չեղավ... Անկեղծ ասած, դժվար է զսպել ծիծաղդ, երբ քեզ դիմում են եղբորդ անունով: Իրականում, այն մարդիկ, ովքեր ինձ ճանաչում են ու կարդում հոդվածս, գիտեն, որ բնույթով համբերատար չեմ, սակայն ուզում եմ շնորհավորել նրանց. համբերատար դառնալը, երևի, իմ փոխանակման տարվա ամենամեծ ձեռքբերումն է:

-Ը՜մ, ունենք, կախարդական համ ունի,- պատասխանեցի ես ու մտքումս ավելացրի,- բայց ի տարբերություն այստեղի խնձորների՝ Մոխրոտի քեռակին կախարդուհին թղթից չի պատրաստել, այլ արևից:

Երանի հիմա այդ խնձորներից մեկը այստեղ լիներ՝ կանա՜չ, խրխրթա՜ն... Երանի հիմա ուտեի ու այնպե՜ս խրթխրթացնեի, որ մամաս կողքի սենյակից ամեն անգամվա նման բղավեր, որ դուռը ծածկեմ, կամ էլ անձայն ուտեմ, կամ էլ ուրիշ սենյակում ուտեմ: Ու ես շարունակեի այդպես ուտել, որովհետև խնձորն այդպես են ուտում:

Հետաքրքիր է, եթե մի փոքր կարոտելու տրամադրություն ունես, ինչքա՜ն կարոտելու բաներ կարող ես գտնել: Նույնիսկ ամենափոքր ու աննշան բաները կարող են բացել մտքերիդ կծիկը, թափանցել հոգուդ մեջ ու քեզ հիշեցնել, տխրեցնել

ու... Առաջին արցունքդ արդեն պատրաստ է ցած սահել:

Մետրո, տաք շոկոլադ...

Փակիր աչքերդ ու մտովի վերադարձիր այնտեղ, որտեղ ամենից շատ կուզեիր կրկին լինել... Դե՛, օրինակ այն այգին, որտեղ սիրում ես նստել ամռանը ու սուզվել ժամանակի մեջ, չնկատել շուրջդ ոչինչ, մոռանալ խնդիրներդ, խմել հյութդ և ուտել սիրելի բուլկիդ: Կամ էլ այն պոնչիկանոցը, որտեղ մի անգամ պատահաբար թափել ես ձեռքիդ կականոն, հետո արագ անձեռոցիկները լցրել վրան, որ ոչ ոք չնկատի, թե ինչ անփույթ ես: Այն փողոցը, որ քեզ տանում է տուն՝ գարնանը լի կանաչով ու թռչունների ծլվլոցով, ամռանը՝ երեխաների բղավոցներով ու աղմուկով, աշնանը՝ ջրափոսերով, իսկ ձմռանը՝ ցեխով, մինչև ծնկներդ կեղտոտված հագուստով՝ ողողված քո անուշադրության մասին ընկերներիդ բողոքներով ու հորդորներով: Մեր մոլորակը լի է նման վայրերով. վայրեր, որոնք կարող են փողոցն անցնող կնոջ համար ոչինչ չնշանակել, իսկ մեզ համար լինել ամենախաղաղ ու տաքուկ անկյունն աշխարհում:
Ահա այդպիսի մի վայր է ինձ համար Մետրոն, որը ես գտա այստեղ ժամանելուս առաջին օրվանից: Բայց այս Մետրոն նման չէ աշխարհի մյուս մետրոներին. այն տաքուկ է, հարմարավետ, չափից շատ համեղ ու մտերմիկ: Մետրոն սուրճի խանութ է, որտեղ չի կարելի գնալ առանց գրքի: Մի վայր, որտեղ կարող ես գնալ, երբ տխուր ես, երբ ուզում ես հանգստանալ ու կտրվել առօրյա հոգսերից, որովհետև մարդիկ այնտեղ ջերմ են, բարի, տաք շոկոլադն այնտեղ ազդում է ավելի արագ, քան հանգստացնող հաբերը, իսկ այ, բանանով ու ընկույզով թխվածքի մասին ավելի լավ է լռել... Երեկ, նման շաբաթվա մյուս օրերին, ես վերցրի գրքերս ու քայլեցի դեպի Մետրո: Այս անգամ որոշել էի փորձել հաղարջով կեքս, բայց, ինչպես հետո պարզվեց, բանկային քարտս դեմ էր դրան: Երբ քարտս պարզեցի վճարելու, համակարգը մերժեց այն: Ես շփոթված ներողություն խնդրեցի, որին ի պատասխան վաճառողն ինքը սիրալիր ներողություն խնդրեց՝ ցավելով, որ քարտիս հետ ինչ-որ բան այն չէ: Ես քայլեցի դեպի սրճարանի իմ սիրելի անկյունը: Հենց նույն պահին ինձ մոտեցավ վաճառողը՝ ձեռքին հաղարջով կեքս: Նա պնդեց, որ այն պարզապես նվեր է՝ այս արևոտ օրվա առթիվ: Ուրիշ ի՞նչ անել, եթե ոչ ժպտալ, վայելել կեքսդ ու հուսալ, որ Հայաստանում էլ մի օր բոլոր սրճարանները ու դրանց վաճառողները կնմանվեն Մետրոյին: Ինձ թվում է, երբ վերադառնամ Հայաստան, ամենաշատը հենց այս վայրն եմ կարոտելու:

Անուշ Մարգարյան

Հետհաշվարկ

- Տղա ջա՛ն, իջացրու՛...
Հենց այս նոտայի տակ էլ մուտք ես գործում աշխարհում միակ վայրը, ուր քեզ գրկաբաց սպասում են: Մի՛շտ: Մուննաթ արտահայտող դիմային երանգով, բայց սպասում են: Ծնվածդ օրվանից հաստատածդ ստորագրելու ես գնում: Ու դու ուրախ ես:
Էս չասվող տխրություն շնչող վայրում ուրախ են... բոլորը:
- Ստրու՛կ: Էս դո՞ւ էլ ես ստեղ: Հըն, մտե՞լ ես: Ի՞նչ ասին:
-Ասին՝ առանց քո թանկ և երկայրության, իրանք իրավունք չունեն ինձ ասեն, թա՛նկս:
Էստեղ մեծ մասամբ թքած ունեն քեզ վրա:
- Հա, բայց ցավում ա:
- Ամեն ինչ մաքուր ա, անցի՛: Հաջո՛րդը...
- Տղա ջան, ես հոգեբան եմ, ոչ թե գինեկոլոգ: Մաքուր ա, անցի՛:
Մի խումբ «մասնագետների» համար դու երկու տարի օգտագործելիության ժամկետով երաշխիք ես, չբավարարված տասներկու տարեկան աղջկա համար՝ սոցցանցերում սեփական IQ-ից ցածր որակի շարադրություններ գրելու մուսա, մորդ համար՝ չխոսելու թեմա, հորդ համար՝ հպարտություն, ընկերուհուդ համար՝ անորոշ պարտավորություն ու մի շարք այլ ածականների խումբ, որ քեզ միայն կողքից կնկարագրեն: Իսկ դու էդպես էլ չկողմնորոշվեցիր՝ գնում ես կորցնե՞ս, թե՞ գտնես:
-Ազիզ ջան, ի-ջաց-րու, վա՛յ...
Կապույտ գուլպաներով, մոխրագույն, հնամաշ տաբատով ու հաստ վերարկուով հոգեբանը (ի դեպ, դու ոտքից գլուխ մերկ կանգնած կլինես նրա դիմաց ու քեզ թշվառ կզգաս) կնայի թղթապանակիդ, հերթական հարցերը կտա այն մասին, թե որտե՞ղ ես սովորում, վճարովի՞, թե՞ անվճար համակարգում, արդյոք գիտե՞ս, թե տարվա տասնմեկերորդ ամիսը որն է, դու էլ մտքում կիրճվես, որ հենց էդ ամսին ես ծնվել, որովհետև «էքա մեծ էշ ես», բայց դեռ մատներիդ վրա ես հաշվում ամիսները (ի վերջո, ի՞նչ պարտադիր է): Մինչև պատասխանելը նորից կհամոզվես, որ քեզ վրա իրոք թքած ունեն, բայց և այնպես, կնկատես էլ, որ պարոն հոգեբանի սրածայր բեղերի դեղնությունը պաշտոնի ու աչքերի խաղաղության (կամ արհամարհանքի) հետ շատ համահունչ է, ու նորից կիրճվես, որ գոնե մի լուսավոր կետ տեսար էս մութ լաբիրինթոսում: Կհասցնես մի երկու անգամ էլ ներվայնանալ, որ մի քանի հակաիիգիենիկ մորքուրներ ստիպեցին այս կամ այն դիրքն ընդունել ու առանց ստուգելու հաստատել՝ պիտանի է:
Ընկերներդ կգան խամրած աչքերով ու կհպարտանան սեփական սխրանքներով, ազատորեն կհայհոյեն բախտը կամ հրամանատարին, խորհուրդներ կտան ճիշտ խոսելու, ճիշտ քայլելու, ճիշտ շնչելու ու էդ աշխարհի սահմաններում ճիշտ դրսևորվելու մասին, կամ էլ կպատմեն, թե ինչպես հոսպիտալ տեղափոխելու ժամփին ընկերը թպրտոցով հոգին ազատեց, ու դու գլուխդ կօրորես:
- Ապե, էդ տղուն պետք ա: Կգնաս, կգաս, նոր կջոկես, հլը տաք ես: Քո արև, ես էլ չի դեմից տենց մտածում, նորմալ ա:
Նախորդող երկու ամիսներին դասընթացներ կանցնես փորձառուներից՝ «Աֆիցեռի քրֆածը լուրջ ընդունելն ու դրա հետևանքները» թեմայով, կսովորես արտահայտելի բառերի ճշգրիտ ընտրությունն ու «ուվալնենի» և «օտպուսկ» բառերի տարբերությունը:
Կփորձես ուղեցույց դարձնել ուրիշի կաշին չհագնելու անվստահ ցանկությունդ, որովհետև մի սիրուն օր, Էսկոբարի կծու շոկոլադով կոլումբիական սուրճ ըմպելիս, երբ դու պահը վայելելու էքստազի տակ էիր, դիմացիդ կանաչին հենված սարդն ուր որ է շուռ կգար դրսի քամուց, երբ տիեզերքի անվերջի հետ քեզ համեմատելի կզգաս, երբ դրսի արևը ներսիդ հետ շփվելուց կայծեր կառաջացնի, ու դու աննկատ կցնցվես, ինչ-որ Կատարելություն հայացքը վրադ կմեխի.
-Հենց զգաս, որ փոխում են, էս խիստ հայացքս հիշի... Թե չէ՝ կսպանեմ:
Դու էլ գլխով վեր ու վար կանես ու կրծքերիդ միջնափոսին խաչ կանես, որ չմոռանաս:
Զասածներդ էլ կկախես օդից, որ կարծահասակների բոյը չհասնի ու կժպտաս, որ դիմանաս:
Չեմ խոստանում: Կհիշեմ:
31, 30, 29 ...

Դավիթ Գորգոյան

695

Պատուհանից էն կողմ կիրակի էր, մեր առօրյայի պես հասարակ առավոտ՝ մեկ քամի, մեկ ձյուն, մեկ էլ էքստազի հասցնող արև: Էսօր առանձնակի բախտավոր ենք լսել հրամանատարի քֆրտոցը՝ բացառապես տաք եղանակը ներծծելով:
Քամին անցնում էր միջովս, շոյում ոսկորներս, հետո թույլ տալիս արևին լիզել երեսս նույն եռանդով, ինչով շարաhրապարակի կիսականգնած շներն էին դրանից ոգևորված սիրով զբաղվում: Բավականին տարօրինակ տեսարան օր ու գիշեր նույն սեռի հետ օրն անցկացնողի համար: Էստեղ գրքերից Կոելիո են շրջանառում՝ կենդանական կարիքները թեկուզ տեսականորեն բավարարելու համար ու անունը դնում «պարապ չենք մնում»:
Շատերի կույս միտքը առաջին անգամ է պայքարում նման մարտահրավերի դեմ ու չդիմանալով՝ վերադառնում նույն բողոքներին:
-Ընգեր, առանց հեռախոս էլ չի լինում, չեմ ձգում: Ես էլ ասի՝ գամ ստեղ, մի քիչ ցրվեմ: Յորս արև, գիտե՞ս ինչեր էի անում քաղաքացիական կյանքում. մաշնեն կար, ժամանակը՝ լիքը, ընգերներս իմ պես ազատ, էսէմէսներին էլ չէի հասցնում պատասխանել, էլ ընգերուհի ի՞նչ եմ անում: Թե չէ՝ էս ի՞նչ ա: Շարքով ենք գնում զուգարան, արա:
Բացում եմ գիրքը: Յենց առաջին էջի վրա, կպչուն թղթիկի վրա նշաններ կան՝ էջերի համարներ են: Ուրախացա, որ գիրքը ճաշակով կարդացողի ձեռքն է ընկել:
Բացում եմ նշված էջերը ու բնավ չեմ զարմանում. առանձնացված էջերը զուտ բաց տեսարաններ են նկարագրում:
Օդը սառն էր ու հաճելի, բայց միանշանակ վատ էր ազդում նախորդ շաբաթվա եղանակը սրտին մոտ ընդունողների համար: Աչքերդ փակում ես ու երազում՝ ոտքերդ ձեր բակի սեղանին դրած, ականջիդ՝ Andrea Boceli լսելով ու խնձորը կծելուց հյութալի մասը ողջ հոգով ստամոքսը քաշելու մասին, թույլ տալիս ծառագայթներին այդպես էլ հատված չդառնալով անցնել միջովդ, հալվել, թուլանալ...
Էսպես կարելի է խեղդվելու չափ խտանալ ու չհասկանալ, որ օրդ շարահրապարակի վրա ես անցկացրել: Յարկավոր է մի խռպոտ հազ, քիթը վեր քաշելով շարքով տարածվող աղմուկ, ու անկախ քեզնից, օրվա երկրորդ «վեր կացն ես» հայհոյում: Բայց և հասցնում եմ նկատել մոտիկ հորիզոնից կախ ընկած սարի վրա, չնայած խորթ թեքությանը, տները մարտկոցիցս հավասար են շարված: Անգամ վառարանների ծուխն է համաչափ թեքվում:
Շուրջս խաղաղություն է շնչում, ներսս՝ թմրածություն:
Կիրակին ներս էր լցվել պատուհանների ճեղքերից:
Շաբաթվա ծանրությունը տղերքը (իբր, ուրիշ էլ ովքե՞ր), շաշկու, գրքի, գրչային խաղերի, ժամերով դիմացի միագույն պատերին նայելով են դատարկում: Մեկը ոտքերի արանքում համազգեստի ավելորդություններն է զգուշությամբ վերացնում, մյուսը՝ թռցրած հեռախոսն է ձեռքերում պտտում, մեկ ուրիշը անհանգիստ թպրտում է. քունը տանում է, քնել չի կարելի: Ինչ-որ ֆիլմ են ցույց տալիս խոհարարի մասին: Ըհըն, համբույրի տեսարան... Ընդհանուր թմրություն օդ բարձրացավ: Գոնե բիբերս լայնանար, կամ ասենք, հիշողության վրայից փառը ճաքեր տար, ու սիրտս անհանգիստ թպրտար: Լավ է գոնե ֆուտբոլ նայելիս էնտուզիազմը չենք կորցրել: Լավ է, չենք մեռել:
-Ա՛պ, արևը դուրս էկավ, չհելնե՞նք դուրս:
-Դուրսն ի՞նչ ես անում, ֆոտոսինթե՞զ:
Խոսում են ամեն ինչի մասին. աղջիկներ, մեքենաներ, նկատառումներ ընդհանուր ծառայության մասին: Խոսում են խորը փիլիսոփայական երանգով, խորաթափանց հայացքով, մտքում մանր-մանր ծամծմելով, զգել-բռնելով, վերամտածելով, պատրաստ լինելով պատասխան տալ «բարև»-ը «ե», «վ»-ով արտասանելու համար: Ձգ՛ույշ, խորը չշնչես օդը, կթունավորվես: Կարճ ասած, մենք ստեղծարարներ ենք: «Ես»-ը պահակակետից դուրս ենք թողել, թաղել թփերի արանքում, նոր միայն ներս մտել՝ նորը ստեղծելու: Թե կարաս՝ հետդ ներս մտցրու ու դարակիդ չերևացող արանքում պինդ պահիր: «Ոսկե արծիվ» չեն տա, բայց հերոսի կոչումով դուրս կգաս: Դրա համար ենք ազատ ժամերին շախմատով զբաղվում:
Զգտում ենք կատարյալ հավասարության, միօրինակության. շարքով ուտելու, շարքով ծխելու, շարքով նաև թքելու: Անգամ ծառերն են շարքով ցցված, ճյուղերի այն երկարությամբ, որ համեմատական է մազերիս երկարությանը: Ահագին անսովոր երևույթ՝ պատուհանագոգին նստած, ոտքերը ծուռումուռ շպրտած, օրը System of a down-ի երգերի տակ անցկացնողի համար: «Զինվորական կարգապահություն» պիտակի տակ լարովի խաղալիք են շինում: Չես մեղադրի, պիտի ապրե՛ս, որ կոյլ չգնաս:
- Տղե՛րք,- ականջիս տակ պայթեց մեկի բամբ ձայնը,- կարո՞ղ ա մեկը դարակիս չարազը վերցրել ա:
-Լավ էլի, այ ախպեր: Մեր մեռած վիճակն ու քո Նոր տարվա չարազը:
Դրսում դեռ կիրակի է: Ոչ մի բանից հոգնած շները հենվել են գնդապետի մեքենայի անիվներին, կուրծքը բացել արևի առաջ, որը դանդաղ տեմպերով սկսել է հալեցնել ծխարանի տանիքից հավետ կախ ընկած սառցակտորները:
- Տղե՛ք, հասկացե՛ք, որ էս զենքը վերցնելուց դուք արդեն մարդասպան եք: Պիտի պատրաստ լինեք սպանելու ու չվախենաք դրանից: Կամ ընկերոջդ կսպանես, կամ հակառակորդին: Դրան էլ պատրաստ եղեք: Յրացանի էս անտեր փողի միջից էլ խաղալիք շարիկներ դուրս չեն գալիս: Մի ձեռքում զենքն են բռնում, մյուսում՝ ուրիշի կյանքը:
Գիշերը լավ չեմ քնել: Անջատված նստած եմ լսարանում:
Կիրակին ավարտվեց: Արթնացա հրամանատարի «ձեռքերիս մեջ մահացավ»-ի վրա:

Դավիթ Գորգոյան

Միասնականները մոտենում են

Միասնական քննություններն են մոտենում, իրենց հետ բերելով հիասթափությունների մի մեծ ու անբաժանելի շղթա: Վախ: Վախ՝ չարդարացնելու բոլորի սպասելիքները, և այդ վախը ինձ ու կարծում եմ բոլորին խանգարում է կենտրոնանալ ամենակարևոր խնդրի վրա: Այդ վախը ինձ ստիպում է դառնալ ռոբոտ, պատրաստվել քննություններին և ոչ թե ստանալ գիտելիք, դառնալ մեքենա, որն ուղղակի կկրկնի իրեն տրված նյութերի իննսունինը տոկոս անիմաստ հատվածը: Այն հատվածը, որը ես քննասենյակից դուրս գալուց անմիջապես հետո մոռանալու եմ (եթե իհարկե, արդեն չեմ մոռացել): Ես (և բոլորս այս շրջանում) պայքարում եմ, այո՛, պայքարում եմ սովորել տասներկու տարվա նյութը մեկ տարում, և ինձանից պահանջում են անել անհնարինը՝ ասելով, որ մենք «կենսագրություն ենք կերտում»: Կենսագրությո՞ւն. կենսագրություն՝ իսկայական հիասթափությունների, սթրեսների հաշվին: Իհարկե, այս շրջանում բոլորն են պայքարում ինչ-որ բանի համար, բայց շատերի պայքարն ինձ համար պարզապես ինքնահաստատման ձև է, ցույց տալ որևէ մեկին կամ մի քանիսին, որ գիտեն ավելին, քան դիմացինը: Պայքարում են նույնիսկ ուսուցիչներս, որն ինձ համար պայքար չէ: Նրանք ինձ ու իրենց բոլոր դիմորդներին տեսնում են պոտենցիալ 20-ներ ու դրա հետ մեկտեղ մտածում ոչ թե մեր (իմ), այլ այն մասին, որ իրենց աշակերտը ստանա բարձր միավոր («Դե, մեր անունն է, վերջիվերջո, երեխեք ջան»): Պարզ է, հիասթափություն եղել է նաև իրենցից (մասամբ), բայց ամենամեծ ձեռքբերումներից էր Իմ Ավոյանը, որն ինձ բացի անգիրներ տալուց սովորեցրեց այն ամենը, ինչ պետք է ՄԱՐԴ լինելու համար:

Կստեմ, եթե ասեմ, որ չեմ տխրի բարձր միավոր չստանալուց, բայց բոլորս կստանանք այնքան, որքան սովորել և աշխատել ենք: Էնպես որ, աշխատենք մեզ համար, մեր հանգստության ու մեր խղճի առաջ հանգիստ լինելու համար, որ խաղաղ մտնենք քննասենյակ:

Իսկ վերջում մի քանի խորհուրդ, որոնք ձեզ հետ կիսում եմ սեփական փորձիցս: Առաջինը. պահեք ձեր

կողքին էն մարդկանց, ովքեր հավատում են ձեզ, որովհետև ես, զգալով այդ հավատը, անում եմ այնպիսի բաներ, որոնց մասին չէի էլ պատկերացնի, որ կարող եմ: Հաշվի չառնեք երբեք, թե ինչ կասեն ու կմտածեն ուրիշները, որովհետև իրենք չեն անցկացրել էն անքուն գիշերները, իրենք չեն անցել էն լարվածության միջով, ինչ դուք: Չթողնեք նույնիսկ ձեր ծնողներին, որ իրենց չիրականացած երազանքները տեսնելով ձեր մեջ, ձեզ դարձնեն իրենց կամակատարը: Արեք այն, ինչ ցանկանում եք, նույնիսկ եթե դա կլինի բուխում չսովորելը. կոտրեք կարծրատիպերը, ցույց տվեք, որ նախասիրություններն ու երազանքներն ավելի բարձր են, քան անվանի համալսարաններում սովորելը:

Հ. Գ. Մնացած զգացողություններով կկիսվեմ, երբ ավարտվի ինձ այսքան հիասթափություն ու սթրես պատճառող, բայց միաժամանակ հաճելի ու բացահայտումներով լի շրջանը:

Էսթեր Ասատրյան

Ես արդեն զինվոր եմ

Հունվարի 30, հինգշաբթի, կեսգիշերից 3.5 ժամ անց: Նստած եմ լսարանում՝ գրիչը ձեռքիս, մտքերս եմ շարադրում (այո՛, այս անգամ ոչ թե հեռախոս կամ նոթբուք, այլ՝ թուղթ ու գրիչ)...
-15 օր առաջ...
...Փակվեցին ավտոբուսի դռները: Ակվարիումի տեսք ունեցող ավտոբուսը 4 կողմից շրջապատել էին էմոցիաներով լեցուն հարյուրավոր մարդիկ: Մեկն ուրախ էր, մյուսը՝ տխուր, մեկն արտասվում էր, մյուսը՝ ծիծաղում, մեկը բացված շամպայնից թրջված ձեռքն էր մաքրում, մյուսը՝ արցունքները. մի խոսքով՝ էմոցիաների տարափ էր:
Վերջապես շարժվեց ավտոբուսը, մարդիկ մնացին ետևում: Հասանք: Անծանոթ-ծանոթ մարդիկ, անծանոթ միջավայր: Բուժզննում անցնելուց հետո սկսվեց մեր կյանքի րոպեներն անիմաստ սպանելու առաջին օրը: Այդ օրը ոչ մի էական բան չկատարվեց, բացի նրանից, որ մոտ մեկ ժամվա ընթացքում բոլորս դարձանք միանման (հագուստներով) ու սկսեցինք փնտրել մեկս մյուսին:
Արդեն հաջորդ օրը, երբ բոլորիս ճակատագիրը պարզ դարձավ, տեսանք մեր հարազատներին, բաժանվեցինք նրանցից և նրանցից էլ, որոնց հետ մեկ օրվա ընթացքում հասցրել էինք մտերմանալ. ամեն մեկս գնաց իր ճակատագրով որոշված տեղը, հա, մոռացա ասել, խոսքը բանակի մասին է: Արդեն 15 օր է, ինչ հայկական բանակի Ռազմիկ եմ (կամ ռազմիկ, տարբերությունը էական չէ):
15 օրը շատ քիչ է դատողություններ անելու, հասկանալու ու ըմբռնելու համար էն ամեն ինչը, որը կատարվել ու կատարվում է քեզ հետ: Բայց, իհարկե, կան բաներ, որ արդեն իսկ հասկացել եմ բանակում:
Ամենաառաջին բանը, որ պատկերացրի ու հասկացա, դա «մեկ մարդու պես» արտահայտությունն է: Պարզ արտահայտություն, որի լիարժեք իմաստը կհասկանաս միայն բանակում: Երկրորդ ու ամենակարևոր բանը, որը հասկացել եմ, դա ազատության արժեքի գնահատումն է: Բանակում դու գրեթե 99%-ով անազատ ես:
Ամեն օրը մի բան է սովորեցնում, ավելի ճիշտ՝ հասկացնում, տեղիք տալիս գնահատելու էն արժեքները, էն ազատություններն ու հնարավորությունները, որոնք ունեցել ու ունենալու ես...
Կյանքի բերած փոփոխությունները, որոնք իրենց հետ բերում են դժվարություններ, սահմանափակումներ ու արգելքներ, միշտ էլ առաջին հայացքից տհաճ ու անհաղթահարելի են լինում, ինչպես ծառ տնկել, խնամել, ջրել և աճեցնելն է դժվար: Բայց տանջանքով աճեցրած ծառի պտուղները այնքանով են համեղ, ինչքան որ կյանքի բերած դժվար փոփոխությունների արդյունքներն են կարևոր ու կենսական կյանքի հետագա տարիների համար:
Մի քիչ երկար ստացվեց, ու չգիտեմ՝ հետաքրքրեց, թե ոչ, բայց սա դեռ ամենը չէ: Դեռ սպասեք հաջորդ նյութերիս, որտեղ կփորձեմ պատմել ավելի հետաքրքիր բաներ ու կկիսվեմ էն ամենով, ինչը հասկացրել է ինձ բանակը: Լավ, ես արդեն գնամ, կանգնեմ պահարանի կողքին, օրապահներով տեղերը փոխելու ժամանակն է:

Հ.Գ. Չգիտեմ՝ ոնց ու ով է ուղարկելու նյութս, բայց եթե կարդում եք, ուրեմն մի հնար գտել եմ:

Ռազմիկ Գասպարյան

Մոտիվացված լինելու չորս պայման

Մոտիվացված լինելու առաջին պայմաններից մեկը անառողջ մարդկային հարաբերություններից ազատվելն է: Եթե դու արդեն եկել ես էն գիտակցման, որ քո կյանքում ունես էնպիսի մարդ, ումից կախված է քո տրամադրությունը ու քո հետագա անելիքները, պետք է ուղղակի դադարես շփվել էդ մարդու հետ: Չի կարող քո օրվա արդյունավետությունը կախված լինել ինչ-որ մարդուց, քանի որ առողջ մարդկային հարաբերություններում մարդիկ իրար մոտիվացնում են ավելի լավը դառնալու: Որովհետև էդպես դու սպանում ես քո անհատականությունը, թույլ ես տալիս, որ ձախ ուսիդ կանգնած փոքրիկ հրեշտակը նենգաբար խմի լավ էմոցիաներդ՝ խեղդվելով հենց քո պատրաստած անհամ ապուրի մեջ: Պետք է գալ մի գիտակցման, որ շատ նորմալ է, որ ընկեր ես կորցնում, ու դա ամենևին էլ մեծ ողբերգություն չէ, այլ նորմալ չէ, երբ դու ունես «հիվանդ» հարաբերություններ, որոնք խանգարում են քեզ լինել «դու», լինել ավելի լավը ու ավելի մոտիվացված:

1. Կայացնել հստակ որոշում ու հետևել այդ որոշմանը: Նորմալ չէ, երբ շփվում ես մեկի հետ, ով քո մեջ «մեխում» է կոմպլեքսներ ու սպանում քո «դու»-ն լինելու ունակությունը: Եթե մտածում ես, որ ուժեղ չես, ուրեմն հավատա, որ ուժեղ ես: Եթե վերլուծել ես ու եկել ես եզրահանգման, ուրեմն նաև պատրաստ ես կուլ տալ հետևանքները:
2. Մի թշնամացիր: Եթե դու որոշել ես չշարունակել հարաբերությունդ, դա դեռ չի նշանակում, որ տվյալ մարդը վատն է: Չկան լավ ու բարի մարդիկ, կան լավ ու վատ հատկանիշներ: Թշնամանալով, դու միայն չարանում ես ինքդ քո հանդեպ, քո ձեռքով կարճացնում ես կյանքիդ տևողությունը ու լցվում ես հոգնեցնող նեգատիվով, որը քեզ խանգարելու է առաջ նայել: Ազատվիր բացասական մթնոլորտից, որովհետև եթե չազատվես՝ նոր կինո է սկսում՝ անառողջ հարաբերություն ինքդ քեզ հետ: Բա քեզ պե՞տք ա:
3. Սիրիր: Սիրիր քեզ, ինչպես որ կաս: Տգեղ քի՞թ ունես: Շատ լավ: Ամեն օր նայիր հայելու մեջ ու արա աշխարհի ամենասիրուն հաճոյախոսությունները քթիդ: Հենց դու ունես էդ քիթը, իսկ դա արդեն ինչ-որ առավելություն ունի: Սիրիր քիթդ: Սիրիր մարդասպանին, որ էլ մարդ չսպանի: Սիրիր բոլորին ու սիրելով բալանսավորիր միջիդ դրականն ու բացասականը:
4. Մի կորցրու իրականությունը ու քիչ երազիր հավերժական բաների մասին: Նորմալ են բոլոր տեսակի կորուստները, նորմալ չի քո անորոշ վերաբերմունքը դրանց հանդեպ: Ուղղակի առավոտյան աչքերդ բացելուց հիշիր, որ դու ունես ինքդ քեզ, իսկ դա արդեն լրիվ բավարար է մոտիվացված լինելու համար: Դու ունես ՔԵԶ՝ այն մարդուն, ումից կախված է քո տրամադրությունը:

Վալենտինա Չիլինգարյան

Ինչպես ստանալ վարորդական իրավունք

Եթե քո հայրը, քավորը կամ քավորի քավորը ցանկություն չունի քեզ նվիրելու վարորդական իրավունք, ուրեմն դու պարտավոր ես պատրաստվել վարորդական իրավունք ստանալու քննություններին` հանգիստ խղճով երթևեկելու համար:
Ինչի՞ց սկսել:
Վարորդական իրավունք ստանալու համար, դու պետք է հանձնես տեսական թեստ և գործնական քննություն: Բայց քննությանը պատրաստվելու համար առաջին քայլը տեսական թեստերն ամենևին անգիր անելը չէ: Սկզբից մտնում ենք գուգլ, գրում ենք bmw sport cars և ամենայն ուշադրությամբ սկսում ենք զննել յուրաքանչյուր հրաշքին այն պատկերացմամբ, որ վարորդական իրավունք ստանալուց այդ հրաշքներից մեկը կարող ես օրինականորեն «չլել»: Եթե ունես ավելի մեծ մոտիվացիայի կարիք, ընտրում ես այդ հրաշքներից մեկի նկարը, ներբեռնում հեռախոսիդ մեջ և դնում հեռախոսիդ էկրանի գլխավոր նկար: Հենց այդպես ամեն րոպե այդ լուսանկարը կարող է մոտիվացնել քեզ և հիշեցնել, որ հեչ էլ ծանծրալի չէ 63 թեստը անգիր անելը:
Բայց արժի՞ թեստերն անգիր անել: Իրականում, չարժի, որովհետև կլինեն տարօրինակ հասկացությունների անուններ, որոնց իմաստներին չտիրապետելը հետագայում կհանգեցնի գործնական քննությունը տապալելուն: Նման իրավիճակից խուսափելու համար պետք է թեստերից առաջ նայել վարորդական վիդեոդասեր, որոնք հայերեն լեզվով հասանելի են մի քանի կայքերում:
Ինչքա՞ն ժամանակ կպահանջվի վիդեոդասերը սերտելու և հարցաշարը սովորելու համար:
Եթե էն իմ ասած լուսանկարը հեռախոսիդ էկրանին է, հավատա, 2-3 օրը քեզ լրիվ բավական է վիդեոդասերը սերտելու համար:
Իսկ վիդեոդասերը սերտելուց հետո, հարցաշարն անգիր անելու կարիք չկա, որովհետև տրամաբանությամբ և ունեցած գիտելիքով կարող ես արագ անցնել բոլոր հարցերի վրայով:
Ինչո՞ւ չդիմել հայրիկի, ընկերոջ կամ եղբոր օգնությանը գործնական պարապմունքների համար:
Առաջին. գործնական պարապմունքների ժամանակ անխուսափելի են բախումներն ու հասարակ սխալները, և նրանց գոռոցները միայն կարող են դեմոտիվացնել քեզ, մանավանդ, երբ դու շատ փխրուն արարած ես:
Հետո էլ, թող շատ սեքսիստական չհնչի, բայց շատ տղամարդիկ իրոք կանոնավոր վարել չգիտեն:
Ու հա, մեքենան տեղից պոկելը դեռ կանոններով վարել չի նշանակում:
Այդ պատճառով, նեգատիվ մոմենտները գեղեցիկ շրջանցելու համար, կարող ես գտնել մի մասնագետի, ամեն դասի համար վճարել նրան 5000 դրամ և 12-13 դաս օրինականորեն ուտել նրա նյարդերը:
Ո՞րն է միակ բանը, որ կարելի է անել տեսական քննության նախորդ օրը:
Պետք է պայմանավորվել վարսահարդարի ու կոսմետոլոգի հետ, քանի որ դու տեսական քննությունից առաջ նկարվելու ես, և վարորդական իրավունքի տգեղ լուսանկար ունենալը խստորեն արգելված է: Միայն թույլատրվում է ունենալ գեղեցիկ լուսանկար, որ հետո ոստիկանին ցույց տալուց չամաչես անձնագրի լուսանկարի պատմության նման:
Ինչո՞ւ կոնյակ ու շոկոլադ չտանել գործնական քննության ժամանակ:
Որովհետև դու արդեն տեսական քննության համար վճարել ես 3000 դրամ, գործնական քննության համար պետք է վճարես 13 400 դրամ, իսկ ամենավերջում, երբ բարեհաջող անցնես այս երկու փուլերը, պետք է 12 000 դրամ պետական վճարում անես: Ու էսքան գումարից հետո, ինչո՞ւ կոնյակ ու շոկոլադ տանել, այ քեզ բան:
Ի՞նչ անել վարորդական իրավունք ստանալուց հետո:
Իհարկե, հպարտ հայացքով գնալ հայրիկի մոտ, պահանջել սիրած մեքենան և անել առաջին մանևրը, յուհու՜... Իսկ եթե լուրջ, միշտ նպատակային օգտագործել մեքենան, վարել ըստ կանոնների և երբեք արագ չքշել, որովհետև բալը թանկացել է, «աղջիկ-պարոն»:

Վալենտինա Չիլինգարյան

Աստված ու Թուփաքը

- Տեսնես Աստված հիմա ի՞նչ ա անում:
- Դավ, էլի մենակ-մենակ ծխե՞լ ես: Ի՞նչ եկել ես՝ անկապ խոսում ես:
- Չէ, բայց լուրջ, օրինակ՝ ի՞նչ կա երկնքում զբաղվելու: Հաստատ Ֆրեդի Մերկուրիին ու Թուփաքին կանչել, համերգ ա լսում:
- Բայց կարող ա իրանք դրախտում չեն:
- Իրա ձեռքը չի՞: Լյուցիֆերին կասի՝ մի քանի օրով կուղարկեն:
- Գիտես, չէ՞, որ Ֆրեդին գեյ ա եղել: Դրա համար, երևի, դժոխքում ա:
- Չէ հա, Տիկ, ինձ թվում ա ինքը Բոհեմիան Ռապսոդիայի նման մի հատ երգ ստեղծելու համար ա դժոխքում:
- Չես լրջանում էլի:
- Հա, չեմ լրջանում, բայց էս կյանքի համար էդ էլ ա շատ: Զարմանում եմ էն մարդկանց վրա, որ էս կյանքը լուրջ են ընդունում: Ամեն ինչ ծանր են տանում: Ես ամեն օր գնում եմ գործի, բայց անգամ էդ գործն ինձ համար լուրջ չի, որ ես ամեն օր եմ անում:
- Քանի՞ տարի ա՝ իրար ճանաչում ենք. հի՞նգ, վե՞ց: Հենց էդ ժամանակվանից՝ բանակից, ցնդածի տպավորություն էիր թողել ու ամեն անգամ համոզվում եմ, որ ճիշտ էի մտածում:
- Կարո, իսկ ի՞նչ ես մտածում՝ ինձ դրա՞խտ կվերցնեն, թե՞ դժոխք:
- Քո արածների համար քեզ կարող ա նորից հետ ուղարկեն Հայաստան, ախպերս:
- Ի՞նչ եմ արել: Բանակում մարդ եմ ծեծել մի անգամ ու հեչ էլ հպարտ չեմ դրանով, նախկին ընկերուհուս եմ շատ նեղացրել, որովհետև անընդհատ ասում էր՝ արի ստեղ նկարվենք, ընդեղ նկարվենք: Մեկ էլ մեր հարևան Աշոտի կնիկը մի անգամ աղ ա եկել ուզել, շաքար եմ տվել: Դժվար սենց բաների համար Լյուցին առանձին պատժարան զբաղեցնի:
- Հլը հետ արի դրախտից, էն Անահի՞տն ա գալիս:
- Հա, ինքն ա: Դեմքին նայի հլը, հեսա գոռալով գալու ա...
- Երեխե՛ք, բարի օր:
- Անահիտ, կլինի՞ դու մի օր գաս ու նորմալ բարևես, նենց ես գոռում, ոնց որ կամանդիրս լինես:
- Տիկո, դու էլ ոնց որ բիձա լինես, մի հատ շնորհավորի, հա՞, քննությունս գերազանց եմ ստացել:
- Ինչ հեշտ ա քեզ երջանկացնելը: Գնամ դասախոսներիդ հետ խոսեմ՝ թող քեզ միշտ գերազանց նշանակեն:
- Ինձ էդ թվանշանը պետք չի, հասկանու՞մ ես, այլ էն, որ իմ տանջանքը գնահատվում ա, արդյունք ա տալիս: ...Մեզ 3 բաժակ գարեջուր բերեք:
- Ան, դո՞ւ էլ ես մտածել, որ ինձ հետ մի բան էն չի, երբ առաջին անգամ տեսել ես ինձ:
- Հա, Դավ, մտածում էի, թե ո՞վ ա դասական համերգի սպարտիվկայով գալիս: Դրա համար էլ մտերմացա քեզ հետ:
- Բա ի՞մ:
- Քեզ հետ էլ, դե, որովհետև Դավոյի նման աննորմալի ընկերն էիր: Հաստատ քո մեջ էլ մի բան կլիներ:
- Ճիշտ ա, Ան, մի քիչ ցնդած մարդկանց հետ էս կյանքն ավելի հեշտ ա: Երանի ես էլ Դավոյի նման կարողանայի մտածել: Մերոնք փոքրուց թողնեին, որ ես ընտրեի՝ ի՞նչ եմ ուզում լսեմ, կարդամ, նայեմ, սովորեմ, ի՞նչ մասնագետ եմ ուզում դառնալ: Մինչև հասկացա, արդեն ուշ էր, դրա համար հիմա չսիրած գործով զբաղվելը սպանում ա ինձ:
- Տիկո, գնա ու սովորի էն, ինչ սիրում ես: Էլի բարդացնում ես ամեն ինչ: Կարելի ա ընդամենը նորից սկսել՝ առանց վախենալու:
- Իմ տարիքում էլ ի՞նչ: ...Մեզ էլի գարեջուր:
- Եկեք գործի չգնանք էսօր:
- Բա ի՞նչ անենք, Դավ:
- Գնանք Թուփաքի մասին կինոն նայենք, տեսնենք՝ ինքը ինչի՞ պետք ա դժոխքում լինի: Ի՞նչ կասես, Տիկ:
- Ինձ թվում ա՝ ժամանակից շուտ մեռնելու համար:

- Անահիտ, խի՞ դու ինձ չես սիրահարվում, քանի ապրում ենք:
- Էդ կանաչ սպարտիվկեդ դուրս չի գալիս, Դավո:
- Իսկ եթե էլ չհագնե՞մ:
- Դրանից էությունդ չի փոխվում: Համ էլ՝ սիրահարվելը հո որոշելո՞վ չի:
- Ան, եթե Դավոյին չսիրահարվես, դժոխք ես գնալու դրա համար:
- Գոնե Թուփաքին կտեսնեմ: Դավոյից մի օգուտ կա էլի:
- Հիվանդանոցից են գրել: Կանչ ա շտապ: Գնամ, երևի էդ մարդը Թուփաքին չի սիրում, փրկեմ շուտ մեռնելուց ու իրա մոտ գնալուց: Կխոսենք, Դավ:

Անի Հարությունյան

Կյանքը սուրճի բաժակում

- Տո, ա՛յ Անուշ, էս ո՞ւր ես: Աչքներս ջուր կտրեց: Երկու բաժակ կոֆե խմեցինք, մինչև եկար, – ասում է Գայանը բաժակ նայող հարևանուհուն: – Դե գնա՛, գնա՛, Լիլի՛թ ջան, մեզ էլի կոֆե դիր, հազիվ Անուշն եկել ա:
Բաժակ նայելը հին արհեստ է, Անուշին էլ որ հարցնես՝ արվեստ է: Բայց ինքը չգիտի՝ որտեղի՞ց են արմատները, ո՞վ է հորինել: Ըստ վարկածներից մեկի՝ ալարկոտ հարսները մի ժամանակ ջան չեն արել բաժակները լվանալ, ցանկացել են սուրճի սեղանի մոտ երկար նստել ու զրուցել, բաժակ նայելը սարքել են մահանա, փորձել են պատկերներ գտնել: Սկզբում զուտ զվարճության համար, հետո կամաց-կամաց որոշել են իմաստավորել ու հարևանների մոտ գլուխ գովել, թե բա՝ բնատուր շնորհք է, Աստծուց է ուղարկված: Ու էդպես՝ տարիների մեջ տեղափոխվելով, վարկածը կրճատվել, փոփոխվել, հասել է մեր օրեր ու մարդկանց գիտակցության մեջ մտել է որպես, իրոք, Աստծու կողմից տրված շնորհ: Կանայք էլ են սկսել հավատալ իրենց գերբնական ուժերին ու փողոցում կամ երբեմն ամբողջ գյուղում դարձել են հեղինակություն:
- Լիլի՛թ, էդ խաշն ի՞նչ եղավ: Երեք բաժակ կոֆեն քանի՞ ժամ ես եփում:
- Չերիք ա խոսես էդ երեխու վրա, Գայա՛ն: Գործիդ անունն ի՞նչ ա. սպասի էլի:

Գայանը ոչ սուրճին էր սպասում, ոչ էլ Անուշի՝ բաժակ նայելուն: Գայանը ամուսնուն էր սպասում Ռուսաստանից, որ ամեն ամիս վերադառնալը հետաձգում էր: Ամեն անգամ, երբ խոստացած հերթական օրն էր անցնում, ու ամուսինը չէր հայտնվում, Գայանը կանչում էր Անուշին ու անհամբերու-թյամբ սպասում, որ Անուշն ասի՝ բաժակիդ մեջ ճանապարհ կա, վերջում՝ տղամարդ է կանգնած: Էսպես Գայանն իր նվիրական ցանկություններն ու նպատակները վստահում է սուրճի մրուրին ու Անուշի երևակայությանը: Անճար մարդու սովորական միամտությամբ մոռանում է, որ Անուշն իր մասին ամեն ինչ գիտի, իր ընտանիքի կյանքին ու սպասումին տեղյակ է, որ Անուշի գուշակությանը հավատալը, թե՝ ամուսինը շուտով վերադառնալու է, շարքային ինքնախաբեություն ու միջին վիճակագրական ժամանակավոր սրտհովանք է: Բայց անճար մարդիկ հիմնականում հանձնվում ու իրենց ցանկությունները սուրճի բաժակներին ու երազահաններին են վստահում: Ասում են նաև, որ երբ շրջում ես բաժակը ափսեի մեջ լցրած մրուրի վրա, սպասում, որ չորանա ու այբուբենի ամեն տառն ասելու հետ խփում բաժակին, որ տառի վրա պոկվեց բաժակն ափսեից, ուրեմն այդ տառով սկսվող անունն ունեցող մարդը կարոտում է քեզ:
Գայանի ամուսնու անունը Լևոն է: Գայանը սուրճը դառն է խմում: Դառը մրուրին հատկապես բաժակը երբեք այնքան ուժեղ չի ամրանում, որ 12 հարվածին դիմանա, ու Գայանը գոնե հուսա, որ ամուսինն իրեն կարոտում է: Ասում են, որ բաժակում հայտնված ձին մուրազ է, սլացող ձին՝ լավ լուր սիրելիից, իսկ ձիու գլուխը՝ հանդիպում սիրելիի հետ: Գայանը ճանապարհից բացի նաև ձիուն էր սպասում իր բաժակում: Անուշն ամեն անգամ ձի ու ճանապարհ էր տեսնում, Գայանն էլ, մյուս կանանց նման, չէր համոզում, որ Անուշը ցույց տա ձին, բացատրի, թե ինչպես տեսավ: Խաբված լինելն ընդունում էր խոնարհաբար, երջանկանում ու ասում էր՝ Աստված ձայնդ լսի, Անուշ ջան: Անուշը, առաքելությունը կատարածի դեմքով, մի քանի բան էլ ասում էր Լիլիթի համար, որ արդեն ամուսնանալու ժամանակն էր, մի քիչ փողից, մի քիչ հաջողությունից, ու այդ շաբաթվա հույսի չափաբաժինը Գայանի համար պատրաստ էր:
Պատահում էր նաև, որ սուրճի ժամանակը համընկնում էր Գայանի սկեսրայրի՝ դաշտից վերադառնալուն: Մտնում էր խոհանոց Գևորգը, բայց Անուշն ուշադրություն չէր դարձնում Գայանի նշաններին, թե՝ սուս արա, ու շարունակում էր աչքերը կկոցած նայել ու ճանապարհը նշմարել: Գևորգը երբեք չէր հավատում բաժակի պատկերներին: Ամեն անգամ թարս նայելով իր ջուրն էր վերցնում, բայց չէր շտապում դուրս գնալ: Ինքն էլ արդեն հոգու խորքում ձիու հայտնվելուն էր սպասում: Ինքն էլ ակամա ուրախանում էր, չհավատացողի համառությանը անճարի անկարողությունը մի պահ հաղթում էր: Ու ձին ու ճանապարհը կամ ձին ճանապարհին իր համար էլ հույս էին դառնում:
- Դե բեր, բեր, Լիլի՛թ ջան, արագ նայեմ ու գնամ, գործերս մնացին, – ասաց Անուշն ու տաք սուրճը՝ լեզուն այրելով, մի կերպ խմեց: Ինքն իր բաժակը երբեք չէր նայում, ինքն իրեն դժվարանում էր խաբել: Շտապելով վերցրեց Գայանի բաժակն ու գազի վրա թողած ճաշի մտքերով մոռացավ ասել, որ ձի ու ճանապարհ կան բաժակում: Շտապելուց չնկատեց էլ Գայանի շփոթված հայացքը՝ սովորության խախտման անակնկալից:
- Դե, գնացի, ժողովուրդ ջան, վաղը կհավաքվենք, – վեր կենալով ասաց ու շտապելուց պատահաբար գցեց գետնին ու կոտրեց Գայանի օժիտի սուրճի բաժակը: Ներողությունների մեջ լսեց Գայանի հեծկլտոցը:
- Դե լավ, մամ, բաժակ էր, էլի, նորը կառնենք, – հանգստացնում էր Լիլիթը: Իսկ Գայանը չէր հասկանում՝ բաժակի՞ համար էր լաց լինում, թե՞ Անուշի շտապելու, ձին ու ճանապարհը մոռանալու: Չգիտեր՝ ամուսնուն իրո՞ք այդքան սպասում էր, թե՞ գյուղի ձանձրալի օրերում սպասումն արդեն ինչ-որ հետաքրքրություն էր դարձել:

Անի Չարությունյան

Էլ առաջվանը չենք

Հիմա կասեք՝ կորել եմ, ճիշտն էլ դուք կանեք: Բայց հիմա դրա մասին չէ, որ ուզում եմ խոսենք: Ավելի լուրջ հարցեր կան քննարկելու: Դրանցից մեկը, օրինակ, ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխությունների մասին է: Գիտեմ՝ լայն թեմա է: Բայց հիմա կպարզաբանեմ:
Տարիներ առաջ, միջին դպրոցում, ամեն նոր ուսումնական տարվա սկզբին հաճախ լսում էի նույն արտահայտությունը ուսուցիչներիցս.
- Շատ ես փոխվել, էլ առաջվանը չես:
Ու այս արտահայտությունը գրեթե բոլորին էր ուղղվում: Ոչ ոք զերծ չէր մնում այս «մեղադրանքից»:
Այն ժամանակ, լսելով այդ արտահայտությունը՝ մի տեսակ ինձ վատ էի զգում: Ինչո՞ւ էին ակնհայտ ափսոսանքով ասում, որ էլ առաջվանը չեմ:
Հետո երկար չհանդիպած բարեկամներիս կամ ծանոթներիս հանդիպելուց մոտավորապես նույն բովանդակությունը պարունակող կարծիքներ էի լսում: Իրենք, այդ հարցով չսահմանափակվելով, առաջ էին անցնում ու ձեռքի հետ նաև նկարագրում, թե ինչպիսին էի առաջ կամ ավելի ճիշտ՝ ինչպիսին չեմ հիմա: Ու ես էլի տխրում էի մտածելով ինչ-որ բան այն չէ հետս, գուցե ինչ-որ բան է պատահել հանկարծ, որ ինձանից վերցրել ու տարել է այն լավ հատկանիշները, որի մասին խոսում էին բարեկամներս, ուսուցիչներս, ծանոթներս...
Հիմա արդեն, երբ ավելի հեռվից եմ նայում այդ փոփոխություններին, հասկանում եմ, թե իրականում ինչ էր կատարվում: Ամեն ինչ շատ պարզ է, ես իրոք փոխվում էի: Ուղղակի հիմա արդեն տարբերությունն այն է, որ այդ փոփոխությունը ոչ թե ինչ-որ բացասական երևույթ է թվում, այլ դրական: Ավելին ասեմ՝ այն անհրաժեշտություն է, որ պետք է տեղի ունենա և շարունակի տեղի ունենալ, քանի ապրում ենք: Ահա թե ինչպես ենք հասկանում, որ կանք, գոյություն ունենք:
Առհասարակ, մենք բոլորս ակնկալում ենք դիմացինից նույնը մնալ, միշտ լինել այնպիսին, ինչպիսին իրեն ճանաչել ենք, առանց հասկանալու, որ անհնարինն ենք պահանջում: Կան մարդիկ, որոնց հետ մի ժամանակ շատ մտերիմ ենք եղել, իսկ հետո, երկար բաժանումից հետո նորից հանդիպել ենք՝ նախապես ակնկալելով շարունակել խոսակցությունը այն նույն տեղից, որտեղից թողել էինք անցյալ անգամ: Բայց հանկարծ հանդիպելուց հասկանում ենք, որ չգիտենք նույնիսկ, թե ուրիշ էլ ինչից խոսենք, բացի հիշողություններից: Եվ հենց այստեղ հասկանում ենք, որ էլ իրար չենք ճանաչում: Մեզ կապող միակ բանը հիմա անցյալի հիշողությունն է:
Կարծում եմ այս երևույթը տխուր է: Միշտ փորձել եմ հասկանալ, թե մարդիկ, որ մի ժամանակ այդքան մտերիմ էին, հիմա ինչպես են անծանոթներ դարձել: Բայց գիտեք, ընդունելը, որ էլ իրար չեք ճանաչում, դեռ չի նշանակում, որ այն մտերմությունը, որ մի ժամանակ մեզ դարձնում էր ընկերներ ու հարազատներ, իրական չէր: Չէ, իհարկե, իրական էր, բայց այ՛ն պահին, այ՛ն ժամանակ:
Մենք ամեն մեկս մեր ճանապարհով ենք գնում ու փոխվում կախված միջավայրից, հանգամանքներից: Մենք նոր մարդիկ ենք դառնում: Եվ այդ նոր մարդը, որ մի ժամանակ ընկերդ էր, դադարում է քոնը լինելուց: Դուք էլ մեկդ մյուսի կյանքի անբաժան մասը չեք, այլ միայն հիշողություն...

Աննա Անդրեասյան

Թո՛ղ լինի

Երբ Ադամն ու Եվան դրախտ կոչված տարածքում էին, չկային պատերազմներ մարդու և մարդու միջև, կար միայն Աստծո և չարի պայքար՝ երկիրը տիրելու համար, երբ դրախտավայրը երկրի վրա էր:
Առաջին եղբայրասպանությունը Աբելի մահով սկսվեց: Աստծո սահմանմամբ եղբայր դեռ չէր նշանակում արյունակից, եղբայր՝ այսինքն սերը առ մարդը:
Այն ատեն սերը պատճառից դարձավ հետևանք, ծնվեց մեկը՝ սերը Աստծուց խլած ու Աստծուն տվող Արմենը:
Ճիշտն ասած, Արմենին ճանաչում էի միջնորդավորված՝ ինչ պատմել էին, ընկերս չէր, ոչ էլ եղբայրս էր, բայց Արմենը Արմենն էր, երբ հանուն հայրենիքի իր անձեռնմխելի կյանքի մասին չմտածելու միտք էր հղանում:
Հունվար ամսյան 19-րդ օրը՝ ճիշտ այն օրը, երբ կանխամտածված սպանվեց Հրանտ Դինքը, որովհետև հայ լինելը մարդ լինելուց տարբերվում է պատասխանատվության համեմատաբար բարձր աստիճանով, այսինքն՝ հայ լինելը վիճակ է՝ լինել թե՞ չլինել խնդիր-հարցադրումով:
Բայց ամեն դեպքում... «Մահը եղավ ոտքի վրա՝ կանգնած, ոչ թե պառկած՝ անկողնու մեջ»:
-Ես ասում էի՝ «Ո՞ւր ենք գնում, ընկերնե՛ր», իսկ նրանք՝ «Վերև, Ջոնի»:
Դա այն օրն էր, երբ Բիթլզը՝ սերը և ազատությունը, առաջին անգամ ելույթ ունեցավ բեմում:
Իմ ճանաչած Արմենը բիթլոմանէր, բայց չէր սիրում մազերի «էքզի» ոճը, ասում էր՝ տղայական չի: Բիթլզ էր լսում ու մատները սահեցնելով իր կերտած քանդակներով, քթի տակ երգում էր «Let it be»-ն.
«Եվ երբ ամպամած է գիշերվա երկինքը,
Միշտ մնում է մի շող, որ լուսավորում է իմ հոգին:
Շողա մինչև վաղը,
Թո՛ղ լինի»:
Սովորաբար քանդակը սկզբում կերտվում է կավից, պլաստիլինից կամ մոմից, ապա ձուլվում գիպսից:
Գիպսե ձուլածոները կա՛մ ինքնուրույն գոյության իրավունք են ստանում, կա՛մ ծառայում են որպես մոդել՝ քանդակը ավելի մնայուն նյութերով մարմնավորելու համար:
Արմենը՝ կերտված մարդ ձուլվածքից, համաչափ աչք-ունքով, աջ հոնքի վերևում էլ մի նշան, իսկ խառնվածքով հանգիստ էր, կոկիկ, աշխատանքն ու կրթությունը համատեղող: Սովորում էր Մշակույթի պետական քոլեջի վերջին կուրսում, որպես օպերատոր, զուգահեռաբար էլ աշխատում էր կահույքի արտադրամասում: Գիշերը, երբ հարձակվել են դիվերսանտները, Արմենը նկատել է, զգուշացրել զինակիցներին և սկսել գոյամարտը՝ մեկը երեք տասնյակի դեմ:
Ծառայակիցների խոսքով՝ կես ժամ միայնակ դիմադրել է ու տասը հոգու կյանք փրկել: Եվ դա հայկական ուժերին հնարավորություն է տվել կազմակերպվել և ելման կետերը վերադարձնել թշնամուն:
Մահը մորը ճանաչել տվեց որդուն: Կարոտ բառը Աճառյանի արմատական բացատրությամբ՝ կար+մոտ, այսինքն՝ ժամանակին եղել էր մոտ, մյուս դեպքում՝ անհրաժեշտություն:
Կա՞ մի երգ մոր մասին, որ սրտաշարժ չէ, կասեմ՝ ոչ, չկա.
«Երբ ես ինձ հանձնում եմ տրտմությանը,
Մայր Մարիան ինձ մոտ է գալիս
Եվ իմաստուն խոսքեր է ասում.
«Թո՛ղ լինի»:
Չղացման և ճակատամարտի միջև եղած մտորումները՝ անձրևոտ մի օր ինչ-որ մեկին վերարկու տալու, ավելի մոտ կանգնելու, և հենց երազանքը՝ աստղերը հաշվելու մասին, մի՞թե կարող էին չլինել: Կամ կարո՞ղ էր գիտակցել ակնթարթի անխուսափելի վախճանը... Մեկին մոտ չլինելը, քույրերի կողքին չկանգնելը, այլ մնայուն նյութից հեն ու հենք լինել, որպես արիության մոդել:
Երբ ճակատամարտ է, իսկ մարտը անխուսափելի է, մղումը ճակատամարտ ենթագիտակցության ազդակներով է կառավարվում, և պահի խիզախությունը հատուկներին է տրված:
Չղացումը, որ 2014 թվականին արցախա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարևելյան դիրքը պաշտպանելիս կյանք արժեցավ, որովհետև «կարոտ» բառի «կար» արմատից ժամանակի հետ «կարևոր»-ն է առաջացել, հետո փակվել է «կարևեր» բառի վերքը:
«Նրանք կարող են բաժանվել,
Բայց նորից հանդիպելը միշտ հնարավոր է,
Պատասխանը մեկն է՝ «թո՛ղ լինի»:
Տասնյակ փամփուշտ զարկվեց երկրի սրտին. հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքում իր առջև դրված խնդիրը արիաբար կատարելու ժամանակ զոհվել է կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը:
Սակայն Ավան 14-րդ փողոց, 8-րդ տան տարածությունում՝ Արմենի թանգարանում, Արմենը կա, որովհետև «բոլոր դիրքապահները թագավոր տղերք են»:
«Արթնացա երգի հնչյուններից,
Ինձ մոտ է եկել Մայր Մարիան,
Ասելով ինձ խոսքեր իմաստուն՝
«Թո՛ղ լինի»...

Քրիստինե Աչոյան

Իմ «Տարվա մարդը». քույրս

«...Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց»:
Պարույր Սևակ

- Ընտանիքիս երկրորդ երեխան եմ: Ասում են՝ միջնեկները ձախորդ են լինում, որովհետև ի սկզբանե ծնվել են «երկու քարի արանքում»՝ ո՛չ մեծն են, ո՛չ փոքրը, ո՛չ մեծի արտոնություններն ունեն, ո՛չ փոքրի միշտ ներվող կամակորությունները: Բայց ես ծնվեցի, որ փոխեմ ընդունված կանոնները ու ևս մեկ անգամ ապացուցեմ, որ ոսկե միջինն ամենաhաստատունն է բոլոր եղածների մեջ...
Հավանաբար, այսպիսի առաջաբան կունենար քրոջս մասին պատմությունը, եթե ես վեպ գրելիս լինեի, բայց առայժմ ստիպված եմ տողերի քանակը սահմանափակել: Օրեր առաջ քույրս դպրոցից անտրամադիր տուն վերադարձավ, մի պահ հեռուստացույցի ալիքները հետուառաջ անելուց հետո փաթաթվեց իր տաք ծածկոցի մեջ ու քնեց մինչ երեկո: Երբ արթնացավ, արդեն գիտեինք՝ ինչ է պատահել: Ինքն էլ իսկույն կռահեց, որ ամեն ինչից տեղյակ ենք ու վրդովված սկսեց.
- Ինձ չեն հավատում: Դա ամենացավալին է...
- Արտագրել ես, ասա՝ արտագրել եմ,- ասաց մայրս,- Ինքնուրո՞ւյն ես 8 ստացել:
- Ասել եմ, որ մատյանում դնեն այն, ինչի արժանի եմ: Ինձ երբեք գնահատականը չի հետաքրքրել, բայց... Ինձ չեն հավատում:
Դանդաղ քայլերով խոհանոց գնաց՝ ջուր խմելու, ու երբ հետ վերադարձավ, կանգնեց կողքիս ու շշուկով ասաց.
- Չգիտեմ՝ ինչպես եմ ճիշտ պատասխանները նշել: Դու դրան ինտուիցիա կանվանես, իսկ ես՝... Աստված: Կկարծեն խելագար եմ, չէ՞, եթե ասեմ, որ Աստծուց հուշումներ եմ ստանում:
Փոքր ինչ զարմացած նայեցի նրան ու արագ պատասխանից խուսափելով՝ խոստացա, որ գիշերը առանձին կզրուցենք: Կարծում էի՝ մինչև գիշերվա վրա հասնելը, պատահածը անցած-գնացած կհամարի, բայց հենց առանձնացանք սենյակում, խոսեց.
- Գիտեմ, որ դու հավատում ես ինձ: Ուրեմն խնդրում եմ, լսիր մինչև վերջ, դու կարող ես: Տես այս տոնածառը՝ լուսավոր, զարդարուն. միանգամից տրամադրություն է բարձրացնում: Ի՞նչ կլինի, եթե ամեն օր մի նոր նախշ ավելացնելու փոխարեն վերցնենք մեկ այս լուսավորումը, մեկ այն խաղալիքը: Հա, այն կդառնա հասարակ եղևնի՝ մնացած փշատերև ծառերից ոչնչով չտարբերվող: Գիտե՞ս, երևի դպրոցում ուզում են, որ ես էլ մյուսների նման դառնամ: Ես լուսավոր երեխա էի, երբ դեռ նոր էի դպրոց գնացել, բայց հիմա սովորական երեխա եմ՝ «վատ սովորող» պիտակով: Լույսերն իմ հույսերն էին՝ իմ, ապագայիս հետ կապված հույսերը,- մի պահ դադար տվեց: Ձայրույթը կուտակվել էր ներսում, աչքերը կարմրել էին, բայց ճիգեր էր գործադրում, որ իմ ներկայությամբ լաց չլինի: Ավելի մոտ նստեցի նրան, ու նա շարունակեց,- Առաջին դասարանում վախենում էի ծանապարհի գնալ առանց իմ խաչի, որը միշտ մոտս էի պահում: Հիշո՞ւմ ես, այդ ժամանակ դպրոցում էի մնացել մինչև հետևից եկաք՝ ինձ տանելու: Ուսուցչուհիս ինձ նախատելով՝ վերցրել էր խաչը

ձեռքիցս: Նույն ուսուցչուհին իմ ձեռքով հավաքած նորածիլ մանուշակները հրաժարվեց ընդունել, որովհետև կարծում էր, որ ավելին է արժանի...
Ամեն անգամ ես կորցնում էի հույսի մի նշույլ, երբ դասընկերներս բնազդաբար առանձնանում էին դասի հետ կապված հարցեր քննարկելու համար, երբ ուսուցիչներս զարմանում էին, որ մենք՝ լինելով հարազատ քույրեր, այդքան տարբեր հետաքրքրություններ ունենք կրթության հանդեպ (կարելի էր, չէ՞, ինձ առանձին անհատականություն ընդունել) կամ երբ նույնիսկ լավ պատասխանելուս դեպքում ստանում էի նախկինում ստացած գնահատականներիս համարժեք գնահատական: Ամեն անգամ «չես կարող», «էդ հալով ո՞նց ես հոգեբան դառնալու» արտահայտություններից հետո ոչ միայն մոտիվացիաս էի կորցնում, այլև անտարբեր էի դառնում ամեն ինչի հանդեպ: Իսկ երբ դասընկերներիցս բնութագրեր խնդրեցի ու գրվածքների մեջ մի քանի անգամ երևացին «չնայած վատ է սովորում...» արտահայտությունը, պատկերացնո՞ւմ ես, թե ինչ կատարվեց ինձ հետ: Ես այդքան էլ կասկածամիտ չեմ մնացածի նման: Ես հավատացի նրանց ու ինքս ինձ սովորելուն անպիտան համարեցի:
Քույրս հուսահատված էր: Խորհուրդներն ու խրատներն այլևս ապարդյուն էին: Նրա բնավորության մեջ օրեցօր ավելի էր ընդգծվում անտարբերությունը և շատախոսությունը դասերի ժամանակ, որոնց համար միշտ պատասխան ուներ.
- Ուսուցիչը տարբեր մեթոդներ կարող է կիրառել, եթե իրոք ցանկանում է դասը հետաքրքիր դարձնել: Պետք է ուղղակի նվիրվել աշխատանքին ու աշակերտներին, այլ ոչ թե աշխատանքային 45 րոպեին: Ուսուցիչը պետք է ոչ միայն տա, այլ նաև վերցնի: Կրթությունը համագործակցություն է:
Այս փոքրիկ փիլիսոփայի կյանքում շուտով լուրջ փոփոխություններ սկսվեցին ուսուցիչներից մեկի առանձին զրույցի և սոցիալական կենտրոնի հոգեբանի՝ աշխատանքը լքելուց առաջ նրան թողած երկտողից հետո, որտեղ ասվում էր. «Կյանքը մեզ տալիս է ուժեղանալու և մեր սխալները ուղղելու հնարավորություն, քանի որ մենք ենք մեր ճանապարհի առաջնորդը: Եվ ԴՈՒ բացառություն չես»:
Պայքարը և ձգտումը վերածնվեցին նրա ներսում: Այս տարի նա մասնակցեց մի շարք ինտելեկտուալ խաղերի, մրցույթների ու դասընթացների: Վերանայեց իր նպատակներն ու հստակեցրեց իր հետագա քայլերը: Նրա ընթերցած գրքերի շարքում ավելացան «Մտածել ինչպես Շերլոկը», «Ինքնատիրապետման արվեստը», «Ինչպես ձեռք բերել ընկերներ և ազդել մարդկանց վրա», «Ինչպես հաղթահարել անհանգստությունը և ապրել երջանիկ» և այլ հոգեբանական գրքեր: Վերջերս սկսել է ուսումնասիրել նաև ժեստերի լեզուն ու կարողանում է հստակորեն նկարագրել մարդու հոգեվիճակը տվյալ պահին՝ հիմնվելով ժեստերի վրա: Քույրս ուժեղ մարդու լավագույն օրինակներից է ինձ համար: Նրա հետ ամենօրյա շփումն ինձ համար ավելին արժե, քան Նոբելյան մրցանակի արժանացած որևէ խորիմաստ գիրք ընթերցելը: Նա իր տարբերվող, ըմբոստ, բայց միշտ պայքարող տեսակով ապացուցեց, որ նպատակին հասնելու համար երբեք էլ ուշ չէ կրթություն ստանալը, չէ՞ որ Էյնշտեյնն էլ դպրոցում վատ առաջադիմություն ուներ: Նա ոգեշնչեց ինձ, խրախուսեց, որպեսզի ինքնակրթությամբ լրացնեմ մաթեմատիկայի իմ բացթողումները ու չվախենամ հետաքրքրվել ֆիզիկայով:

Յ.Գ. Երբ նրան ասացի, որ գրառում եմ իր պատմությունը, նա ևս մեկ անգամ ինձ զարմացրեց.
- Դու հիմա գրում ես սա: Գուցե հաղթես, գուցե պարտվես, - ասաց նա,- ես մտածում եմ, որ պետք չէր անկեղծության համար հաղթողներ որոշել, որովհետև անկեղծությունն անչափելի է 1-9 բալանոց սանդղակով: Այն գին ու գնահատական չունի:

Մարիամ Տոնոյան

բանաստեղծություն

Ինչպես է ծնվում իմ

Երբ գիշեր է՝ ինքդ քեզ հաշվետու լինելու ամենահարմար պահը օրվա մեջ, երբ մտքերդ մասնակցում են քո ու քո, քո ու աշխարհի, քո ու մարդկանց, մարդկանց ու աշխարհի անվերջանալի թվացող շղթայական ռեակցիային: Երբ գիշերվա ժամը 4-ը արդեն սարսափելի չի թվում, ակամա դառնում ես փոքր ինչ ավելի խելացի: Երբեմն մանրուքներին կարող ես գլոբալ նշանակություն տալ, երբեմն ահռելի երևույթներին նայել որպես չնչին իրադարձությունների: Իրար հաջորդող տարատեսակ մտքերը, որոնց եթե ազատություն տաս, ամենատարբեր ժանրերի ծավալուն ստեղծագործություններ կարող են դառնալ, սկսում են ինչ-որ խորհրդավորության պատճառով քեզ դուր գալ: Ու եթե դու համարձակություն ես ունենում այն ինչ-որ տեղ գրի առնել (պետք է միշտ բարձի տակ թուղթ ու մատիտ ունենալ), ապա այն կարող է ինչ-որ բան իրենից ներկայացնել, որը կհետաքրքրի նաև մյուսներին: Շուրջդ, մտքումդ կատարվող ամեն բան կարող են ազդել մտքերիդ դասավորման վրա. մեկի դեմքին սազող պեպեններին նայելով կարող ես մտորել, թե ինչու են այդ փոքրիկ ցաներին հաճախ արևահամբույրներ ասում, մեկի ադամախնձորի վերուվայրումները կարող են քեզ ստիպել մտածել՝ թե այդ դեղձի կուտ հիշեցնող մարմնի մասն ինչու է հենց այդպես կոչվում կամ միթե այն ներսում ինչ-որ բան չի խագում խոսելիս: Ինչ-որ տարօրինակ թվացող բառ, չգիտես որտեղից հիշողությանդ մեջ մնացած խոսք, գրքի բովանդակություն, ամեն բան կարող է փոխանցվել գրչիդ՝ քո զգացողությունների, երևակայության ու ստեղծագործ մտքի ուղեկցությամբ:
Չափածո ստեղծագործության իմ մուսաներից մեկը Հերման Հեսսեն է՝ իր կյանքով, իր թողած ժառանգությամբ, իր գրական հերոսներով ու գերմանական փիլիսոփայությամբ:
Երբ օրվա ընթացքում կարդում եմ Հեսսեի գրքերը, որոնց գլխավոր բովանդակային նյութը աշխարհի հետ հարաբերության մեջ մտած Մարդն է՝ իր անձնական տառապանքով ու դեպի իրեն ու իր ներսը տանող բազմաթիվ ուղիներով, գիշերային մտորումներս նվիրում եմ Մարդուն՝ արարչագործության պսակին, որ և ընդհանուր է՝ որպես մարդկություն, և անջատ՝ որպես առանձին մարդ-անհատականություն: Թղթի վրա գրում եմ խոհերիս առաջին, ոչ ամբողջական լուծումը՝
Դու իմ սիրելի պատահականությունն ես,
Որ եկար՝ պարզապես լինելու համար:
Յուրաքանչյուր մարդու հետ նոր ծանոթություն պատահականություն է՝ երջանիկ, կամ ոչ այնքան, երբեմն՝ ենթագիտակցորեն վաղուց պլանավորված: Յուրաքանչյուր մարդ-պատահականություն քո կյանքում արդեն իսկ հանելուկ ու առեղծված է պարզապես իր գոյությամբ: Իսկ թե ինչքանով կբացահայտես նրան՝ միայն քեզնից է կախված: Մարդն այնքա՜ն կատարյալ է որպես Աստծո կերտվածք, բայցև այնքա՜ն անկատար երբեմն:
Մտքերիս զարգացումը կանգ է առնում կիսաստված մարդու հավատալիքների մոտ: Հեսսեն երբեմն ստիպում է խճճվել միստիկայի, ամենատարբեր հավատալիքների ու սիմվոլների մեջ: Բայց որքան ավելի շատ են հոգեհարազատ դառնում տարատեսակ հավատալիքներն իրենց խորհրդավորությամբ, ես ավելի ու ավելի եմ կապվում Աստվածաշնչին, որ թույլ է տալիս հույսով լցվել ամենաանհավանական թվացող երևույթների հանդեպ: Գիտությամբ ու փաստերով ուսումնասիրություններ կատարող Մարդն, այնուամենայնիվ, չի դադարում հավատալ, որ Երկրային կյանքն ընդամենը մի փոքրիկ ժամանակահատված է հավերժության մեջ, բայցև հավերժության էությունը բացատրել չի կարողանում:
Մարդը, Սերը, Հույսը, Հավերժությունը և Ժամանակը, Իմաստության Զվարթությունը կամ Արթնացումը, որ տարբեր հավատալիքների մեջ մաքրամաքուր, մեղքերից ազատված մարդկային դրությունն է, Սպասումը և Հոգին՝ որպես մարմնի կենարար հեղուկ և ինքնին Կյանք, կարևորագույն նշանակություն ունեցող կետերն են և Աստվածաշնչում, և Հեսսեի վեպերի բովանդակության մեջ: Այս մտքերի հորձանուտի մեջ ես թղթի վրա զատում եմ իմ զգացմունքները և ընկալումները՝ հավատարիմ մնալով և Հեսսեին, և Աստվածաշնչին, և Մարդուն:
Երբ մատիտս վայր եմ դնում, սկսում եմ մտքումս կարդալ.

Դու իմ սիրելի պատահականությունն ես,
Որ եկար պարզապես լինելու համար:
Թեև անմտադիր, բայց զգուշորեն՝
Եղար, որ մի դաս ինձ ուսուցանես:

Եղար, որ հիշեմ,
Որ պետք է սիրեմ իմ մերձավորին՝
Իմ իսկ անձի պես:
Բայց հեռավո՜րս,
Օրենքն անտեսած՝ սիրեցի և քեզ:

Եղար, որ ցավամ, եղար, որ ցավեմ,
Որ երջանկանամ անգամ վշտի մեջ
Ու որ երբեմն գլուխս կորցրած՝
Մի հիվանդությամբ ինձ ապաքինեմ:

Մտքերս հասցնելով մի այլ եզերքի՝
Եղար պարզապես, որ ես ի վերջո
Ժամանակին սահմանում տամ մի՝
Որն հավերժ նույնն է, բայց միշտ՝
նորովի:

Եղար, որ օգնես անգիտակցաբար,
Արթնացում կոչես զվարթությունս
խոր,
Թույլ չտաս երբեք իզուր ափսոսել
Սպասման վրա վատնած ոչ մի օր:

Եղար... որ կյանքում ես ցանող լինեմ,
Ով բերքհավաքի սպասում ունի ո՛չ
երկրի վրա,
Ում դիափոշին մի օր այլևս
Քամու ձեռքն ընկած, անարժեք
դարձած՝
անտեր կմնա:

Իսկ քննադատությունները թողնում եմ ձեզ: Դուք էլ մտորեք Մարդու մասին, նրա տեղի ու դերի, նրա սկզբի ու հետագա ճանապարհի մասին, համաձայնեք, կամ վիճեք ինձ հետ՝ ձեր իսկ բանաստեղծությամբ: Ես կսպասեմ:

Մարիամ Տոնոյան

Ինչ եմ սովորում ԵԹԿՊԻ-ում

Ես հաշվել եմ իմ ամենօրյա ճանապարհը: Այն կազմում է մոտ 130 կմ, կամ գուցե չափազանցնում եմ, բայց ամեն դեպքում Սևանից Երևան և հակառակ ուղղությամբ, ես ամեն օր գնում-գալիս եմ: Երևանում է գտնվում իմ ինստիտուտը, որն իր բնույթով եզակի է, իր ոճով և չափազանց ակտիվությամբ թատերական ինստիտուտը միշտ տարբերվել է: ԵԹԿՊԻ-ն մշակութային բույն է, և այստեղ սովորողները մշտապես ծանրաբեռնված են դասերով, փորձերով ու քննություններով: Թատերական ինստիտուտը տան պես է. այստեղ է անցնում իմ օրվա մեծ մասը: 9:30-ից մինչև ժամը 7-ը մնալ ինստիտուտում, իսկ երեկոյան գնալ որևիցե ներկայացում կամ ֆիլմ դիտելու: Բայց բացարձակապես չեմ հոգնում, քանի որ ինձ դուր է գալիս: Ես մասնագիտությամբ սցենարիստ դրամատուրգ եմ, խորանալով այս մասնագիտության մեջ, սովորեցի ամենակարևոր բաները, որոնք վստահ եմ, գրողներին միանշանակ պետք կգան:
Եթե ցանկանում ես գրել պատմվածք, սցենար կամ որևիցե այլ նյութ, ապա այն պետք է ունենա իր մեկնարկը, կուլմինացիան (գագաթնակետ) և հանգուցալուծումը, ցանկացած նյութ պետք է ունենա ինչ որ մի խնդիր: Ինչպես իմ կուրսղեկն է ասում. «Գրականությունը սկսվում է այնտեղ, որտեղ խախտվում է ներդաշնակությունը», և օրինակ էր բերում Հովհաննես Թումանյանի «Գիքորը» պատմվածքի մեկնարկը. «Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել»: Ի՞նչ էր պատահել՝ կռիվ էր ընկել, ահա սա է խնդիրը և սրա վրա է հյուսվում ամբողջ ստեղծագործության և ֆիլմի սցենարը: Սցենարը առհասարակ պետք է ունենա, այսպես ասած, սյուժետային մի (բարակ) թել, որը պետք է հյուսվելով, ամբողջ ֆիլմը հասցնի իր տրամաբանական ավարտին:
Ֆիլմում և գրականության մեջ շատ կարևոր է նաև կերպարների միջև կոնֆլիկտը, որը պետք է հասունանա ամբողջ ֆիլմի ընթացքում և իր վերջնական լուծումը ունենա՝ հերոսները հասնեն կամ երջանկության, կամ ինքնասպանության, ինչը հաճախ հանդիպում է Ա. Չեխովի պիեսներում: Մեր խնդիրն այն չէ, որ միանգամից հաշտեցնենք ու ելք գտնենք հերոսների համար, այլ այն, որ կոնֆլիկտը աղետի, կատաստրոֆայի հասցնենք և նոր լուծում գտնենք: Ֆիլմում ցանկացած փիլիսոփայական գաղափար պետք է արտահայտվի ոչ թե խոսքով, այլ կոնֆլիկտի գործողություններով: Ֆիլմում շատ կարևոր է դրամատիկական իրավիճակը, որից կերպարը պետք է դուրս գա, կարևոր է նաև մոտիվացիան, որը պիտի ազդի գիտակցական, ենթագիտակցական, բնազդային մակարդակի վրա:
Ցանկացած հոդված գրելիս պետք է ուշադրություն դարձնենք, թե ինչ ենք գրում և թե ինչպես պետք է գրենք: Եթե օրինակ, նյութը պետք է ծառայի հանրությանը, պետք է գրված լինի հանրամատչելի լեզվով, իսկ եթե գիտական նեղ մասնագետների շրջանակի համար է, ապա պետք է գրվի տերմինաբանությամբ, որը հասկանալի է միայն տվյալ բնագավառի մասնագետներին:

Գրական նյութ գրելիս կարելի է օգտագործել պատկերավոր գեղարվեստական բոլոր միջոցները, ինչը նյութին գեղեցիկ երանգներ կտա: Եթե նյութը պետք է ծառայի ֆիլմին կամ թատրոնին, ապա մեծամասամբ պետք է լինի գործողություններից բաղկացած, բայց կարևոր է նայել, որ հեղինակը ուղղորդումներ տա և մանրամասն բացատրի տվյալ իրավիճակը և վայրը, իսկ խաղը պետք է թողնել արտիստի երևակայությանը և ունակություններին:
Թատրոնին կամ ֆիլմին ծառայելու համար նախ պարտադիր է իմանալ դրանց ակունքները, պատմությունը, զարգացման ընթացքն ու ժանրերը, պետք է կարողանալ աշխատել այդ բնագավառում ծառայող յուրաքանչյուր անդամի հետ, սկսած հավաքարարներից վերջացրած ռեժիսորները: Պետք է կարողանալ բոլորին հավասար վերաբերմունք ցուցաբերել, քանի որ եթե մի դերասանի հետ շատ աշխատես, մյուսի հետ ո՛չ, ապա համոզված եղիր, որ ֆիլմդ կամ ներկայացումդ դատապարտված է տապալման: Պետք է բոլորը իմանան, թե ինչ արդյունքի կարող են հասնել աշխատասիրությամբ, վարպետությամբ ու ճշտապահությամբ: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կլինի, եթե դերասանը որոշի ուշանալ ներկայացումից կամ նկարահանումից...
Ուրեմն, ամեն ինչում պետք է լինել լավ վարպետ և ճշտապահ, պետք է իմանալ, որ լավ ռեժիսոր լինելու համար պետք է լինել լավ դերասան: Լավ դերասան լինելու համար պետք է իմանալ էթիկայի բոլոր կանոնները ու լինել ճշտապահ: Լավ սցենարիստը պետք է լինի դերասան ու ռեժիսոր, որպեսզի այնպես գրի, որ իր գրածը կարողանա մեկնաբանել ռեժիսորը և կարողանա խաղալ դերասանը:
Տեսնո՞ւմ եք, ամեն ինչ սերտ փոխկապակցված են, մեկի միջակությունը խանգարում է մյուսներին և ամբողջ այն նախագծին, որով զբաղվում են:
Ահա այսպես ամեն օր երևի 130 կմ անցնելով, ես սովորում եմ այն, ինչ կարևոր է ինձ համար, և այն, ինչ ես շատ եմ սիրում: Գուցե մի օր ես կդառնամ սցենարիստ կամ թատերագետ, բայց ինչպես Կ. Ստանիսլավսկին է ասում. «Արվեստով պետք է զբաղվել անշահախնդիր»:

Մերի Ավետիսյան

Ճոխ ֆասադների ու մաքուր կոշիկների հետևում

Թե համալսարանական չորս տարիներիս մեջ մի դրական բան կար, նկարիչ Սրապիոն Դանիելյանի արվեստանոցում մի քանի ամիս նկարելն էր: Ասում էր. «Երկրորդ հարկի պատուհանից ամեն օր տեսնում եմ, թե ոնց են տասը օր նասկիները չփոխած տղաները, գրպանից հանում թաշկինակը ու կոշիկների փոշին մաքրում: Էս մեր հասարակությունն ա…»: Ասում ու լռում էր, ավելին նկատի ունենալով: Մեկը մտածում էր, ո՞նց կարելի ա տասը օր նույն նասկին հագնել, մեկը թե՝ թաշկինակով ո՞նց կարելի ա կոշիկ մաքրել:

Կներեք, բայց մեր հասարակությունն էդ տասը օր չփոխած նասկիներն ա, մեզնից արդեն հոտ ա գալիս:

Կարանք փտենք, բայց մենք կոշիկներն ենք մաքրում, որ բոլորը տեսնեն, որ փայլում ա, մեզ հուզում ա ամեն ինչի երևացող կողմը, մնացածը կարելի ա ծածկել:

Նկատե՞լ եք, մեր քաղաքի շենքերն ու տները, էդ մեր արժեհամակարգի արտացոլումն ա: Քայլում ես կողքով՝ թանկ քարերով, ճարտարապե-տությամբ, մաքուր, կարևորը՝ ճոխ ֆասադ: Անցնելիս տպավորում ա: Բայց էս քաղաքին Մոնումենտից նայե՞լ եք: Ախր, էդ ֆասադի հետևի քանդված բակերը, չմշակված պատերը երևում ա: Ո՞ւմ ենք խաբում, ո՞ւմ ենք ցույց տալիս, որ ամեն ինչ լավ ա, ու խնդիրներ չունենք:

ՀՀ-ում սպանությունների 17%-ը ընտանեկան բռնության դեպքեր են, (ամեն 10-ից համարյա երկուսը մահացել են ամուսնու, զուգընկերոջ, եղբոր, որդու կողմից):

Կանանց 40%-ը ֆիզիկական կամ սեռական բռնության զոհ ա դարձել, էլ չխոսենք տնտեսական բռնության մասին, որն ուղղակի էնքան սովորական ու ուղեկցող երևույթ ա մեր հասարակությունում, որ մոռանում ենք, որ էդ էլ ա բռնություն:

Է հա, բոլոր հասարակություններում էլ բռնություն կա, բայց երևի բոլորում չի, որ հասարակության ձայնը բարձրացնող պատգամավորը դեռ կնոջ շալվար հագնել-չհագնելն ա քննարկում: Բոլորում չի, որ հասարակությունը տառապում ա խմբակային ինքնախաբեությամբ, թե բա՝ մեր ընտանեկան արժեքները (սելեկտիվ աբորտներով աշխարհում առաջատար պետություն)… Ազգովի կոմպլեքս ունենք բարձրաձայնելու, որ մեր հասարակությունում էլ խնդիր կա: Վայ, չէ, հարևանը, մեծ մասշտաբների դեպքում «թուրքը կտենա՝ կուրախանա», կարևորը՝ հարևանների «ավանդական լավ ընտանիք ա» հեղինակավոր պիտակին արժանացել ենք:

Էս մեր ապրելակերպի, մտածելակերպի, ճարտարապետության մեջ ա, մեր սարքած ու մեզ լիովին բնութագրող Երևանի ամեն շենքի ու տան մեջ ա, էն մենակ ճոխ սարքած ֆասադների մեջ ա:

Իսկ մարդիկ իրենց խնդիրներով շարունակում են ապրել ֆասադների հետևում, ոչ թե վրա, կոշիկների մեջ, ոչ թե վրա, բռնության մեջ, ոչ թե «ավանդական» ընտանիքներում:

Եկեք խնդիրները տենց սիրուն չփաթեթավորենք ուրիշների համար, մենք էդ ամեն ինչի ներսում ենք ապրում:

Զարինե Կիրակոսյան

Ձոն տաքսիստին

Չէ, բայց դուք պատկերացնո՞ւմ եք՝ 120 կմ ճանապարհ մեն-մենակ միջին վիճակագրական հայ տաքսիստի հետ: Օրվա էներգիադ սպառած ուզում ես մի կերպ տուն հասնել, միակ շփումը պատկերացնում ես ականջակալներիդ երգերի հետ, բայց մեր էս հորեղբայրը որոշել է, որ ես լուսանկարիչ եմ, ու ուզում է պատմել արվեստի հետ իր ունեցած բոլոր կապերից, Րաֆֆու «Սամվելի» նկարագրությունների մանրամասնությամբ բացատրում է, թե իրենց տան դաշնամուրը որ պատի տակ էր դրած, լույսն էլ ինչ աստիճանի անկյան տակ էր ընկնում, թե ինչպես ինքը էդպես էլ չսովորեց ակորդեոն նվագել ու մի օր իրենց բարեկամի տան ոչխարի արձանիկը դրեց մեկին մեկ նկարեց:
Դե իհարկե, 120կմ-ում այսքանով չես սահմանափակվի: Մենք ծանոթացանք Սամվել պապիի ամբողջ գերդաստանին, բոլոր նախորդ մեքենաներին իրենց տեխնիկական խնդիրներով, հիացանք Սևանի հայելու վրա ընկած լուսնի լույսով, բայց որ ամենակարևորն էր՝ ի տարբերություն միջին վիճակագրական հայ տաքսիստի, էս մարդը Ռուսաստանում բիզնես չուներ: Սամվել պապիին բոլոր մնացած տաքսիստներից առանձնացնում էր այն, որ ինքը, ինձ թվում է, վերջին 30 տարին չի ապրել այս աշխարհի վրա: Եվ ահա ամեն ինչ սկսվեց այսպես.



Էպիզոդ 1
- Սպասեք՝ տամ վարորդին, բացատրեք ձեր տեղը, լա՜վ, - հայկական մոննաթով արտասանեց հեռախոսավարը:
- Լավ:
- Բարև Ձեզ, կարո՞ղ եք մոտենալ Պարույր Սևակ-Ուլնեցի խաչմերուկ, «Պեպսիի» գործարանի մոտ:
- Բայց «Պեպսիի» գործարանը շամպայնի գործարանի մոտ ա:
-Ըը, չէ, սրտաբանական հիվանդանոցի մոտ ա:
-Լավ, բալես, դե ես 20 րոպեից կգամ, բայց հեռախոս չունեմ: Էս դիսպետչերի համարն ա, ըտեղից չշարժվես, որ գամ՝ կարենամ գտնել:
-Ը, լավ, էդ դեպքում ես մեծ ուսապարկով եմ, երևի կնկատեք:

Էպիզոդ 2.
25 րոպե հետո.
-Ո՞ւր ենք գնում:
-Ճամբարակ, Շորժայի կողմերը:
-Հա, բալես, ես Սևանի էդ կողմը չեմ քշել ընդհանրապես, ճանապարհներին ուշադիր կլինես, չքնես՝ սխալ չքշեմ:
-Լավ (պլաններս խախտեց):

Էպիզոդ 3.
Մեկ րոպե անց.
Պ. Սևակ - Ազատության պողոտա:
-Բալե՞ս:
-Լսում եմ:
-Կարո՞ղ ա իմանաս՝ էս խաչմերուկում թողո՞ւմ ա աջ անել (լուրջ էր հարցնում):

Էպիզոդ 4.
- Բալես, հեռախոս ունեիր, չէ՞:
- Հա, իհարկե:
- Դե լավ ա: Ես ճիշտն ասած, իմ ավտոն էսօր խփել եմ, ուրիշի մեքենան եմ վերցրել, հեռախոսս էլ փչացել ա, ճանապարհի վրա ենք, մարդ ես, էլի:

Էպիզոդ 5.
- Բայց էդ Ճամբարակը ընդհանրապես չեմ լսել:
- Սովետական շրջանում տարածաշրջանը Կրասնոսելսկ ա կոչվել:
- Հա, Կռասնին ա՜, մի հատ էլ գյուղ ունի՝ Արծվաշենը: Բարեկամ ունենք էնտեղ, փոքր ժամանակ գնացել եմ:
- Հա, բայց երևի էլ չունեք, Արծվաշենը հիմա անկլավային տարածք ա, Ադրբեջանի սահմանում:
- Ո՞նց, Արծվաշենը վերցրե՞լ են, էդ ե՞րբ, Ապրիլյանի՞ն:
- Չէ, 27 տարի առաջ, օգոստոսին:
Իհարկե Սամվել պապին շատ տխրեց, երբ իմացավ իրենց հեռու բարեկամը էլ 27 տարի է՝ էդ գյուղում չի ապրում, ինչին հաջորդեց.
- Բալես, կարա՞մ ծխեմ:
Ես խորը շունչ քաշեցի, ուժ հավաքեցի, որ ասեմ՝ չէ, հետո հիշեցի, որ Սամվել պապին հենց նոր կորցրեց իր հեռու Արծվաշենի բարեկամներին, հեռախոսը չի աշխատում, մեքենան խփել ա, էս մարդը հենց նոր ա իմացել, որ «Պեպսին» էլ շամպայնի գործարանի մոտ չի, ու չի եղել, Ճամբարակը նույն Կրասնին ա, Պարույր Սևակից էլ կարելի ա աջով մտնել Թբիլիսյան: Մի խոսքով, հարգեցի էս մարդու վիշտն ու ասացի.
- Եթե ուզում եք՝ կանգնեք, դուրս եկեք, ծխեք:

Զարինե Կիրակոսյան

Մեկ-մեկ երբեմն ու հաճախը տեղերով փոխած

Մենք հաճախ բարի ենք, մեկ-մեկ՝ նախանձ, իսկ երբեմն՝ հաճախն ու մեկ-մեկը՝ տեղերը փոխած:
Օրեր են լինում՝ մենք տրանսպորտում տեղ ենք զիջում, բայց երբեմն էլ ուղղակի աչքերս փակում ենք, որ նույնիսկ չտեսնենք տարիքով մեծերին:
Մեկ-մեկ դասն ուշադիր լսում ենք ու մտքում ջղայնանում խանգարողների վրա, երկու-երկու էլ մենք հենց այդ խանգարողներն ենք:
Ժամանակ առ ժամանակ հավես է տնային գործերով զբաղվելը, բայց երբեմն էլ քեզ ոչինչ չի կարող կտրել բազմոցից ու հեռուստացույցից:
Հաճախ համեղ ենք պատրաստում, երբեմն՝ անհամ, մեկ-մեկ ինքնավստահ ենք, երբեմն՝ կոմպլեքսավորված, հաճախ գեղեցիկ ենք մեզ զգում, երբեմն՝ ոչ այնքան:
Հաճախ այնքան լավ ենք աշխատում, որ մենք մեզ օրվա լավագույն աշխատող կոչում կտայինք, իսկ երբեմն էլ մենք մեզ գործից հաստատ կազատեինք: Մեկ-մեկ՝ երբեմնը ու հաճախը տեղերը փոխած:
Մենք երբեք միշտ չենք ու ընդհանրապես, միշտը հեչ լավ բառ չէ, որովհետև մեր արարքներն ու բնավորությունը երբեմն փոխվում է, մեկ-մեկ էլ՝ հաճախ: Մենք բոլորս հաճախ (երբեմն էլ մեկ-մեկ) իրար նման ենք, բայց սովորաբար անձնական վերաբերմունքից կամ մեզ արդարացնելու համար, վատ կամ լավ, «միշտ» ենք կցում իրար:
Փոփոխվելը միշտ պատճառ ունի:
Մեկ-մեկ քեզ զննիր, որ «չմշտացնես» ուրիշներին: Միշտը իրոք հաճախ լավ բառ չէ, իսկ միգուցե երբեմն էլ մեկ-մեկ:

Նելլի Խաչատրյան

Հո՞րի, լաո...

Մեկը մյուսի ետևից ճամփա ընկան ու գնացին՝ մանկության ընկերը, քույրն ու հազար տարվա հարևանը:
- Ձեր մեծերից մենակ դո՞ւ մնացիր,- միամիտ հարցրի ես:
- Ե՞ս լը էրթամ,- ծիծաղեց նա,- ըսի՝ չտարան: «Էրթցվոր ենք»՝ ըսին ու գածին: Ըսի՝ զիս էլ տարեք, հընգերսի՝ ծիծղաց, քուրսի՝ լաց էղավ, հարևանս էլ, թե՝ պետքդի իսկի էլ չունիմ: Չըլը էդրան իշե: Դե գնա, տեսնամ՝ մգա հոն վի՞ր հեդնի բդի հարևանուտյուն էնիս, կռվիս ու բարիշիս: Ըդմալ, լա՜ո, մըգա իմ քուր, ախպրներ, լավ ու վադ օրերու հընգերներ, սաղ գածին, մածի մինաց ես... Ես էլ թե հո՞րի մածի, չըմ գինա:
- Իմա՞լ թե՝ հորի,- իր բարբառով սկսեցի ես,- որ ձեր մասին պատմես, ես էլ գրի առնեմ:
-Հա՜, հա, լաո, գրե, իմ պադմուգներ սաղ գրե: Քու թայ էի, որ զիս, զիմ պաբ ու հրոխպեր կըսեին՝ գրե՛ մըր պադմուտյուններ, լաո, հեդո չմոռնաս ու կորին էրթան: Ափսո՜ս, լաո, ծուռ իյ, զիմ ծռուծյուն էրի ու չգրի, ու մըգա տարիկն ուրիննի կըսե: Մոռծեր իմ, լա՜ո, մոռծեր իմ ըն լավ-լավ պադմուտյուններ, ըն խորոդ ու անուշ երկեր... ժամանաց կանծնի, լաո, մարտիկ կաբրին ու կանցնին, իրանցմե յեդո պադմուտյուններ գթողնան, ու թե հիշիր՝ էրնա՜գ քեզի... Ես չլսի, լաո, չգրի, մոռծա, ափսո՜ս, հազա՜ր ափսոս...
Էս ամեն էրտծվոր էլ մե պադմուտյուն չէր՝ հազար ու մեգ էր, դե մըգա հաշվե, թե քանի պադմուտյուն կորավ հաշխրկի երեսեն, լաո, գածին, ու կորավ...
Լուսուն-մըգլօր ես լը կերտամ, գրե, թող իմ պադմուտյուններեն մեգ էրգուսը մնան գոնե, էգողներ տեսնան...
Է՛, գածիք, էլի, տո՛ ծռե՛ր, զիս մենագ թողիք ու գածիք...
Գըլսի՞ս, լաո, էն իմ ծուռ հընգեր, հոկի տալու վախտնի՝ գծիծղար, ծիծղաց-ծիծղաց ու լած էղավ... Գիլար, լա՜ո, էմա՜ն գիլար... Տեսնաս՝ հո՞րի, լաո, հո՞րի գիլար...

Մարատ Սիրունյան

Մեզ համար ապրած կյանք

Իմ պապը ծնվել է գրեթե անցած դարասկզբին՝ 1928 թվականին:
13 տարեկան է եղել, երբ հայրն ու մեծ եղբայրը պատերազմ են գնացել, ու նա ընդամենը 13 տարեկանում դարձել է ընտանիքի «մեծը»՝ հոգալով մոր ու երեք եղբայրների բոլոր հոգսերը: Շատ մեծ պարտականություն է ունեցել իր ուսերին դրված և շատ մեծ պատվով է դուրս եկել այդ ամենի միջից:
Ավարտել է չորսամյա մի գյուղական դպրոց, կյանքի մի զգալի հատված սարերում ու ձորերում է անցկացրել, բայց պապիս նման իմաստուն ու խելացի մարդ, դժվար թե հեշտ գտնվի: ԽՍՀՄ-ի տարիներին գյուղի տնտեսական կյանքում՝ մեկը մյուսի հետևից կարևոր պաշտոններ է զբաղեցրել՝ իր արդարամտության ու ազնվության շնորհիվ:
Հայրս ուշ տարիքում է ամուսնացել, ու մինչ ես ու եղբայրս հասանք գիտակցական մակարդակի՝ պապս էլ առաջվանը չէր. պապս չէր հիշում, որ գյուղի ամենագեղեցիկ տունը՝ մեր տունը, ինքն է կառուցել սեփական ձեռքերով՝ հեղելով արյունն ու քրտինքը:
Թող հիմա կոնֆետների անձրև տեղա գլխիս, ամենահամեղ կոնֆետը պապիս կոստյումի գրպանից հանածներն էին՝ «ծծովի», ամեն տեսակ ըմպելիքներից ես սիրում էի նրա բերած լիմոնադը, ամենահամեղ ուտեստը, որ երբևէ կերել եմ՝ պապիս սարքածն էր՝ տարբեր մրգերով ու բանջարեղեններով՝ իր սև թավայի մեջ:
Ինքն էլ ասում էր, որ իր համար ամենակարևորը՝ իմ ու եղբորս ձեռքով մաքրած ու իրեն տված մանդարինն է:
Պապիս մի բուռ ժպիտն ու օվկիանոս աչքերը վերացնում էին չարն այս աշխարհից:
Չնայած իր դժվար ու բարդ կյանքին՝ նա ապրեց 91 տարի: Մեզ համար ապրեց, որ մեր կողքին լինի, որ սովորենք իրենից, որ ավելի լավը դառնանք: 91 տարեկանում նա սիրում էր կյանքը, ինչպես մարդիկ՝ 21-ում:
Պապիս չլինելով այնքան շատ բան պակասեց աշխարհից. անսահման բարություն, հանդուրժողականություն, արդարություն ու ազնվություն:
Պապիս չլինելով՝ մեր միջից մի շատ կարևոր բան պակասեց, մենք աղքատացանք առանց նրա:
Ընդամենը մի քանի ամիս է, որ նա չկա, բայց զուտ ֆիզիկապես, իր արած գործով, անունով ու մեր մեջ նա միշտ ապրելու է:

Մարգարիտա Ոսկանյան

«Ամուր հավատք, հզոր բանակ, պաշտպանված հայրենիք». Գոռ Խուդինյան

Հայ ազգը առաջին հերթին կանգուն է իր քաջ, անպարտ ու անմահ նվիրյալներով: Նրանք այն մարդիկ են, ովքեր համազգայինը բարձր են դասում անձնականից: Այդպիսի մի հերոս է նաև Գոռ Խուդինյանը, որի մասին անկարելի է խոսել անցյալ ժամանակով:
Պատիվ ունեմ այսօր գրել այն մարդու մասին, որի անունն է կրում իմ հարազատ կրթօջախը՝ Ձորկանի Գոռ Խուդինյանի անվան միջնակարգ դպրոցը:
Գոռ Խուդինյանը ծնվել է 1991 թվականի ապրիլի 7-ին, ՀՀ Լոռու մարզի Ձորկան գյուղում: 1997 թվականին ընդունվել է Ձորկանի միջնակարգ դպրոց և այնտեղ սովորել մինչև 2002 թվականը: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել է Վանաձոր և տեղի Վ. Տերյանի անվան դպրոցում շարունակել է ուսումը: 2007 թվականին ավարտել է դպրոցը և ընդունվել Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, որն ավարտել է գերազանցության դիպլոմով, ինչի շնորհիվ 2011 թվականին իր ընտրությամբ անցել է ծառայության «Եղնիկներ» զորամասում որպես հետախուզական դասակի հրամանատար՝ լեյտենանտի կոչումով: Երկու տարի անց ստացել է ավագ լեյտենանտի կոչում: 2015 թվականին նշանակվել է հետախուզական վաշտի հրամանատար, ստացել է կապիտանի կոչում: Այնուհետև նույն թվականին տեղափոխվել է Ստեփանակերտ (ՑՕՐ կոչվող զորամաս)՝ որպես հետախուզական վաշտի հրամանատար: 2016 թվականին նորից տեղափոխվել է «Եղնիկներ» որպես գումարտակի շտաբի պետ, հրամանատարի տեղակալ: 2015 թվականին ամուսնացել է և ունի մեկ դուստր՝ Անահիտը, ով կրում է հերոս հայրիկի հերոս մոր անունը:
Գոռը միշտ աչքի է ընկել իր հայրենասեր, բարի, անվախ և ազնիվ, անսահման նվիրված, հոգատար բնավորությամբ, ինչի շնորհիվ էլ միշտ վայելել է շրջապատի մեծ սերն ու հարգանքը: Գոռը միշտ ասել է, որ իր զինվորը պետք է լինի զգոն և հպարտ: Եվ այսօր ոչ միայն իր զինվորները, այլ բոլոր այն մարդիկ, ովքեր լսում են իր մասին, զգում են անսահման հպարտություն: Հենց այդ հպարտությունն է այժմ խոսում իմ փոխարեն...
Կապիտան Գոռ Խուդինյանը իր արիության ու հայրենասիրության համար պարգևատրվել է մի շարք շքանշաններով:
2017 թվականի փետրվարի 23-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, N զորամասի պահպանության շրջանի մարտական դիրքում, հակառակորդի կրակը ճնշելու ժամանակ մահացու վիրավորում է ստացել և անմահացել...
Ամփոփված է հայրենի գյուղում՝ Ձորկանում:
Հերոսն ասել էր. «Ուս-ուսի պետք է պահենք էս պոստերը, որ հակառակորդը չկարողանա իր նպատակին հասնել: Եթե էս պոստերն անառիկ պահենք, իմացեք՝ մեր տունն էլ է անառիկ մնալու...»:
Հերոսի մասին կարելի է խոսել անդադար, քանի որ վերը նշված տեղեկությունները նրա հերոսական կյանքի միայն հակիրճ պատմությունն է:
Անսահման հպարտությամբ և երախտագիտությամբ խոնարհվում ենք Ձեր առջև, Հերո՛ս Գոռ, Հերոս ծնած և դաստիարակած ծնողներ, Հերոսի գործը շարունակող հա՛յ քաջեր:

Մարգարիտա Ղազարյան

Իսկ գիտե՞ք՝ ով է ամենաանկարևորը

Ուսանողն ուսումնական ողջ համակարգում ամենաանկարևորն է: Այս համակարգի ամենավերին օղակից մինչև ամենաստորին օղակն ընկած AB տեղամասում մենք ուղղակի բացակայում ենք: Այստեղ ուսանողն ավելի շատ փորձարարական առնետի մակարդակում է գտնվում: Բարձր օղակներին կարելի է մեր վրա փորձարկել նոր թերի կրթական համակարգ, կարելի է անվերջ կերակրել հին համակարգով, մինչև մեր ուղեղները փտեն: Ավելի ցածր օղակներն իրենց գիտելիքի պակասն են փորձարկում, բացառությամբ այն եզակիների, ովքեր փորձում են արդեն ամբողջովին բթացած ուղեղումդ մի բան սերմանել, բայց մի քանի հոգու ջանքերն անասելի քիչ են այս հսկայական, դեպի դեբիլացում տանող կառույցում: Չէ՛, հավատացեք, բացարձակապես նորմալ չէ, երբ գնահատականդ բողոքարկելը բուհում խնդիր է դառնում: Ամեն ինչ սկսում է նրանից, որ քեզ համոզում են, որ եթե բողոքարկես, հնարավոր է գնահատականդ իջնի: Դե, որովհետև իրենք շատ մեծահոգի են ու միշտ մի քիչ բարձր են նշանակում: Ծանոթ եք, չէ՞, այդ մեծահոգի սիստեմին՝ 9,6-ը կլորացնում են 10, բայց մեր քիչ գիտելիքներն էլ հերիք են իմանալու համար, որ ըստ մաթեմատիկայի օրենքների, 9,6-ը չէիք էլ կարող դեպի 9-ը կլորացնել: Բա՛, այդքան էլ հիմար չենք, բայց ա՜յ, մեր պնդաճակա-տությունը երբեք լավ բանի չի բերում: Հաստատ սա էլ գիտեք, երբ նախորդ միջանկյալ քննությանը պնդաճակատու-թյանդ շնորհիվ կարողանում ես ապացուցել, որ 15-ի փոխարեն պետք է քեզ 20 գնահատեին, բայց այդ արդար և բարեխիղճ մարդիկ քեզ խոստանում են, որ հինգ միավոր պարտքը հաջորդ քննություններին կավելացնեն (գերազանց ստանալուդ հավանականությունը ընդունվում է 0): Ու գիտե՞ք, հետո ինչ է անում. հաջորդ քննությանը միտումնավոր ուղիղ 5 միավոր ցածր է նշանակում, որ պարտքի տակ չմնա:

Դու էլ խառնվեցիր իրա՞ր, չհասկացար ի՞նչ կատարվեց: Գիտե՛մ, ես էլ գրում եմ ու զարմանում, գրում եմ ու չեմ հասկանում՝ ինչպես են մարդիկ տարիներ շարունակ աշխատում, ու ոչ մի ուսանող չի կարողանում դրա դեմ մինչև վերջ պայքարել: Որովհետև մեկը չէ, ոչ էլ երկուսը, շատ են ու սփռված են ամբողջ համակարգում: Համակարգ, որտեղ դու ոչինչ ես, որն աշխատում է քո դեմ, ոչ թե քեզ համար: Որտեղից դու դուրս ես գալիս դատարկ, իսկ եթե դատարկ չես, ուրեմն իմացիր՝ դա անձնապես քո ձեռքբերումն է, ու այն մի քանի հոգու, որ իրենց տրված 90 րոպեում դատարկ գլուխդ հասցրեցին լցնել:

Իսկ գիտե՞ք այս և նման արատավոր դեպքերը երբ ավելի քիչ կլինեին՝ երբ տեխնոլոգիական դարաշրջանում մեր բուհերը ունենային թվայնացված համակարգ: Որ ուսանողի հանձնած ցանկացած նյութ հասանելի լիներ ոչ միայն դասախոսին այլ նաև՝ տվյալ առարկայի ամբիոնին, դեկանատին, ռեկտորատին, և վերջապես, հենց ուսանողին: Երբ գնահատականդ բողոքարկելու կամ համալսարանից որևէ փաստաթուղթ ունենալու համար, այստեղ - այնտեղ վազվզելու փոխարեն մկնիկով մի շարժումը բավական կլիներ: Պետք է վերջապես հասկանա՜նք, որ կարևոր հայտարարությունների տեղը բուհի պատերի վրա չէ, որ գրադարանում եղած գրքերը բոլորիս չեն հերիքում, և դրանք պետք է PDF տարբերակով էլ լինեին, ու լիքը նման բաներ:

Հավատացե՛ք, եթե խանգարելու փոխարեն համակարգը մի քիչ մեր օգտին էլ աշխատեր, այս ամենը ուսանողներն իրենց ձեռքերով վաղուց իրականություն կդարձնեին:

Ասում են՝ իրական պատմությունները ամենահուզիչն են: Դե սա էլ ձեզ իրական, դառը, հուզիչ պատմություն, որի սցենարը մի օր վստահ եմ ինքներս էլ կփոխենք...

Մարիամ Բարսեղյան

Խաղաղ առավոտների պատրանքը

Լույսն անշտապ բացվում էր այնպիսի խաղաղությամբ, ասես աշխարհում ամեն բան իր տեղում էր, կարծես բոլոր շունչ ունեցողներն ու դրանից զրկվածները այդ առավոտ արթնանալու էին երջանիկ թեթևությամբ:
Այնքան համոզիչ էր պատկերը, որ ես կատարյալ մոռացության էի տվել այն փաստը, որ այսպիսի մի վարակիչ խաղաղությամբ էր րոպե առ րոպե բացվել նաև, օրինակ, 1889թ.-ի ապրիլի 20-ը, երբ Վերին Ավստրիայի մի անիծյալ անկյունում՝ աշխարհում հարյուր հազարավոր ուրիշ մանուկների պես իր աչքերը բացեց Ադոլֆ անունով ու չարագուշակ ազգանունով այդ ժամանակ դեռ իր կարծատև անմեղությունը ապրող մեկը:
Երևի այդ առավոտ ինձ նման մի երազող խաղաղության մասին նույն հեքիաթն էր ներշնչել իրեն՝ գաղափար իսկ չունենալով, որ հենց այդ պահին բացված զույգ անմեղ աչքերը անթարթ հածույքով դիտելու էին հեղինակային մի կոտորած:
Հետո շղթայակապ օրենքով նման խաղաղություններ էլի շատ կրկնվեցին, ասենք՝ 1914թ. հուլիսի 28-ին: Այդ առավոտ ոչ մի մարգարե չէր կռահում, որ ամառային գեղեցիկ օրը հետո, պատմության մեջ մտնելով, սերունդների մոտ սարսուռ է առաջացնելու՝ իբրև առաջին «համամարդկային խաղի» սկիզբ: Հետո գարնանային նոր կյանք ազդարարող հանգստությամբ բացվելու էր 1915թ. ապրիլի վերջին տասնօրյակի չորրորդ օրը՝ նորից ոչ ոք չէր կարող երևակայել անգամ, որ այդ հանդարտ առավոտվա երկինքը ժամեր անց ականջ է դնելու հազարների ճիչերին: 1937թ., 1939թ., 1945թ... Շարքը շարունակելը ցավալիորեն երկար կտևի: Մոլորակի պատմության բոլոր արյունոտ ամսաթվերին նախորդել են խաղաղ ու գեղեցիկ առավոտները: Այդ օրը, այդ պահին, սակայն, ես այսքանի մասին չէի մտածել ու ոչ մի առավոտ էլ չեմ մտածել, հակառակ դեպքում վեր կենալու ու օրը ապրելու ցանկությունը իսկույն կմեռներ: Արդեն կատարյալ լուսացել էր: Խաղաղության մասին մտքերով քայլերս ուղղեցի դեպի դուռը: Այն բացելու ու խաղաղությունը ներս խոթելու մի անդիմադրելի ձգտում ունեի: Դեռ չգիտեի, որ գալու է մի ժամանակ, երբ ամեն եկող օրվա հետ ես ցանկանալու եմ ավելացնել դռների քանակը՝ դրանք երբեք չբացելու երազանքով: Դա այն ժամանակ էր լինելու, երբ ես լիարժեք ճանաչելու էի աշխարհը ու նրա կեղտից պատսպարվելու հուսահատ փորձեր էի մտածելու:
Դուռը բացելուց հետո, անմիջապես, ուշադրությունս գրավեց անսովոր մի ձայն: Կանգնած իմ պատրանքների խաղաղության մեջ՝ հայացքով սկսեցի փնտրել դրա հեղինակին, ու կարճատև որոնումներս հայացքս ուղղեցին դեպի բակի խորքը, որտեղ անհիշելի ժամանակներից բանտված մի բարեկամ ունեինք՝ սպիտակ ու մեծ շունը:
Երկաթե շղթան կոկորդին ամրացված՝ նա աղերսագին իր զույգ աչքերով ուտում էր խիղճս: Երկար ժամանակ բթացած իմ պատասխան հայացքն էլ կանգ էր առել նրա վրա: Հետո միայն հասկացա, որ հայացքի ու անսովոր իր լացի հետևում ազատության հույսն էր պահել:
Ո՞վ գիտե, երևի ամեն առավոտ ինձ ու բոլորիս նույն այս անօգնական կերպարանքով էր դիմավորել, բայց մենք, խաղաղ աշխարհի պատրանքով տարված, նրա առաջ խղճուկ 2 կտոր հաց էինք դրել՝ ազատության ճիչը խլացնելու անմիտ ցանկությամբ:
Կույր է մարդը իր զույգ գունավոր

աչքերով: Այնքան կույր, որ վայրկյաններ առաջ կարծել էր, թե աշխարհին իր երջանկության րոպեներն է վայելում: Բայց ինչպե՞ս է նման բան հնարավոր, երբ նրա բնակիչներից թեկուզ մեկին երկաթե շղթան արգելում է շնչել:
Նայում էի պատկերին ու չէի կարողանում ներել ինձ ու բոլորին, ովքեր ազատ ապրել էին մեկի քթի տակ, ով զրկված էր դրանից:
Հիմա, երբ խեղճ այդ էակը գրավել էր ուշադրությունս, պարզորոշ նկատում էի, թե որքան էր մեծանում աչքերի թախիծը, երբ տեսադաշտում հայտնվում էր ուրիշ մի շուն՝ առանց կոկորդ ցավեցնող շղթայի:
Նայում էի աչքերին ու դրանցում տեսնում աշխարհի բոլոր բանտվածների խտացված վիշտը:
- Պապ, ինչի՞ բաց չենք թողնում էս խեղճին,- հայացքով շանը ցույց տալով սկսում եմ,- թող մի քիչ էլ ազատ ֆռֆռա:
- Իրա համար կապված ա, էլի,- անթաքույց անտարբերությամբ պատասխանում է հայրս, որին պատկանում էին շան պաշտպանի, դատավորի ու դատախազի միաժամանակյա դերերը: Բոլոր անհրաժեշտ ընթացակարգերով նա էր վճռել, որ խեղճն իրավունք չունի ազատ ապրելու:
- Բայց ընդհանրապես տրամաբանական չի, չէ՞, պա՛պ, բոլոր հարևանների շները ազատ են, ինչի՞ ա հենց մեր Դանին բացառություն (շանը Դանիել անունն էինք տվել, չնայած՝ հետո շոկային բացահայտում եղավ ու պարզվեց Դանիի՝ իգական սեռին պատկանելը, բայց շնորհիվ Մաշտոցի՝ այդ հարցը լուծվեց նրա անվանը վերջից ընդամենը ա տառն ավելացնելով... և վերջ, Դանիելյան կնքված էր):
- Ինչի՞ ես խորացել, հենց Դանին ա բացառություն, որովհետև հենց ինքն էր մի քանի ամիս առաջ հարևանի էրեխու վրա հարձակվել: Վտանգավոր ա:
Դանին չարություն էր արել ու մարդկային օրենքներով պատժվելով՝ զրկվել ազատությունից: Բայց կա՞ արդյոք գոնե մեկ երաշխիք, որ մյուս ազատ շները ինչ-որ մի օր չեն անի չարություն, կամ արդեն չեն արել, կամ հենց այս պահին չեն անում: Այդ դեպքում թող բոլորն իրենց շների վզին նման մի ծանրաքաշ շղթա փաթաթեն ու ինձ ազատեն հոգի հանող այդ անհավասար տեսարանից, Դանիին ազատեն իր ու իր նմանի ծայրահեղ տարբեր կենսաձևերից:
- Պա՛պ, արի ազատենք, հա՞, Դանիին: Հաստատ էլ վատ բաներ չի անի:
- Ի՞նքն ա ասել, որ չի անի,- լուրջ դեմքով հարցնում ա պապան էնպիսի տոնով, ասես րոպե առաջ իր համար իմաստ չստացած էդ խոսակցությունից ազատվել է ուզում:
- Խոսք ա տվել, Դանին էլ իրա խոսքի տեր տղա ա,- հակաहարված եմ տալիս ես՝ Դանիի աղջիկ լինելու հետ էդպես էլ չհամակերպված տոնով:
- Լավ,- իր բնավորության համաձայն չի կարողանում ինձ մերժել հայրս ու հետո ավելացնում ժպտալով, - բայց եթե քեզ հոշոտի՝ էլ չեմ խառնվելու, որովհետև Դանին իրա խոսքի տեր տղա ա:
Շուտով սկսվեց Դանիի արդարացման ու ազատման գործողությունը: Ինձ թվում էր, որ մոլորակն իր ծնունդից մինչև այդ պահը երբեք նման գեղեցիկ տեսարանի ականատես չէր եղել: Շղթաներից ազատվելուն պես անբնական մի ցատկով դուրս պրծավ իրեն տհաճ պահեր պատճառած օթևանից: Հետո էլ երբեք չտեսա նրան այդ կողմերում: Անձրև, ձյուն, անտանելի շոգ... Կարևոր չէր, բնության ոչ մի ճնշում նրան չտարավ իր նախկին տունը: Գերադասում էր թրջված ու արևահարված իր ազատությունը:
Մի օր էլ այն պահին դուրս եկա տնից, երբ Դանին բակի անկյունում իր սպիտակ թաթերով հողն էր փորում: Երկար հետևեցի տեսնելու համար, թե ինչ կա մտքին... և ինչ՝ փորած հողի կողմն էր քարշ տալիս շղթաները, որով կապված էր եղել երկար ժամանակ: Հետո տեղավորեց դրանք հողի տակ ու արագ-արագ ծածկեց հողը:
Դանին թաղեց անազատության իր կապանքները, որ էլ ոչ ոք չկարողանա բանտել իրեն:
Հիմա նա ազատ է ու թեև ամեն օր իր բարձր թռիչքով օդից պոկում է մորս փռած լվացքն ու աստվածային անեծքների է արժանանում, բայց մենք բոլորս ուրախ ենք, որ Դանին էլ ազատ է մեզ պես, որ մենք չենք ամաչում նրա մոտ մեր ազատության համար: Չարություններ անելիս էլ անգամ մեզնից ոչ ոքի մտքով չի անցնում, որ կարելի է նրան նորից զրկել ազատությունից:
Մի միտք խելագար պտույտով տակնուվրա է անում գլուխս: Մտածում եմ՝ որքան հրաշալի կլիներ ամեն բան, եթե մոլորակի վրա գտնվող բոլոր բանտված էակները վերստին գտնեին իրենց ազատությունը նույնքան հեշտությամբ, որքան Դանին: Պաշտպանները համոզեին դատավորին, որ մեղադրյալն էլ երբեք չարություն չի անի (ինչպես ես էի համոզում), դատավորը հավատար դրան ու մեղադրյալի ձեռքերը ազատեր երկաթե շղթաներից (հորս նման), իսկ մեղադրյալն էլ՝ պահելով խոստումը, իսկապես էլ երբեք չարություն չաներ (ինչպես Դանին): Անգամ լվացք չպոկեր:
Այդ ժամանակ միգուցե առավոտները բացվեին ոչ թվացյալ երջանկությամբ:

Մելինե Հայրապետյան

ԹԵՅԻ ՍԵՂԱՆ

Ես քեզ թեյի մեկ սեղան եմ պարտք, զրույցի թեման դու ինքդ կորոշես:

Հենց որոշես, կհանդիպենք քաղաքի սրճարաններից մեկում, որ թեյ խմենք: Մատուցողն այդ օրն արդեն որերորդ անգամ իրենից գոհ դեմքով մեզ՝ իր համար հերթական թեյ խմող մարդկանց կմոտեցնի թեյերի տեսականին, իսկ մենք կտարբերվենք հերթական թեյ խմողներից, մենք պարզապես տաք թեյ կպատվիրենք, եղածներից ամենատաքը, որի գոլորշին կխառնվի իմ ժպիտին:

Շաքարավազի կարիք չի լինելու:

Ես հագնելու եմ թափանցիկ բլուզ, դու՝ վանդակավոր վերնաշապիկ. այդպես դու իդեալական ես: Մազերս հավաքելու եմ ամենաանփույթ տարբերակով, դու կլինես բոլորից կոկիկ (ինչպես միշտ): Շրթներկ չեմ քսելու, ժպտալու եմ, դու լինելու ես լուրջ, մի քիչ գործնական (ինչպես միշտ):

Խոսակցության թեմաները, ինչպես որոշել էի, դու ես առաջարկելու, ես ձևացնելու եմ, թե հետաքրքիր են: Դու խոսելու ես, իսկ ես ձևացնելու եմ, թե հասկանում եմ: Մի քանի հերթապահ հարց կտամ, դու կպատասխանես լուրջ, մանրամասնորեն (ինչպես միշտ):

Իսկ ես լսելու եմ, լսելու եմ ձայնդ, երբեք չփոխվող ձայնդ...

Դու շարունակելու ես խոսել, ես՝ ձևացնել:

Բաժակներում եղած թեյը, ձանձրանալով ձևականություններից, աստիճանաբար սկսելու է սառչել, ու դու թեյնիկում մնացած տաք թեյով տաքացնելու ես առաջինն՝ իմ, հետո քո բաժակի թեյը՝ երկարացնելով մեր հանդիպումը: Ես շարունակելու եմ ժպտալ...

Հետո զգալու եմ հանդիպման վերահաս ավարտը ու երկու ափով գրկելու եմ բաժակս, որ թեյը չսառչի:

Դու շարունակելու ես խոսել, ես՝ զգալ ավարտը, դու՝ խոսել, ես՝ զգալ...

Սրճարանից դուրս գալու առաջարկը քոնն է լինելու (ինչպես միշտ), ես երբեք նման առաջարկ չէի անի:

Ես չեմ մերժելու: Իմ պատվիրած տաք թեյի համար դու ես վճարելու (դու երբեք թույլ չես տալիս, որ քո փոխարեն ուրիշները վճարեն): Ու ես նորից քեզ մեկ թեյի սեղան եմ պարտք մնալու:

Մենք քայլելու ենք դեպի դուռը (միակ բանը, որ այդ օրը երկուսս միաժամանակ ենք անելու): Դու բացելու ես դուռը, առաջինը ես եմ դուրս գալու՝ թիկունքիս զգալով ներկայությունդ:

Սրճարանից դուրս ենք գալու միասին՝ սեղանին թողնելով երկու կիսատ թեյի բաժակ, որոնցից մեկի թեյն ամբողջովին սառած է լինելու, մյուսը վերջին ճիգերով պայքարելու է չսառչելու համար՝ կարծելով՝ դեռ կերկարացնի հանդիպումը: Այս վերջին բաժակի թեյը ամբողջովին կսառչի միայն այն ժամանակ, երբ զգա, որ հանդիպումն ավարտվել է, ու իր սառչել-չսառչելը ոչինչ չի փոխելու, որ չսառչելու պայքարն անիմաստ է:

Երբ մատուցողը մոտենա մեր սեղանին, գտնելու է երկու արդեն ամբողջովին սառած թեյի բաժակ:

Շուշան Ներսիսյան

Գյուղում ուրիշ է

Գյուղում ուրիշ է, գյուղի կյանքն ուրիշ է: Գյուղում օրակարգ կա, ոչ մի տեղ չգրված, բայց մարդկանց ուղեղում դաջված օրակարգ կա:
Գյուղում օրը շատ շուտ է սկսվում, առանց մեր խելացի գաջեթների, առանց զարթուցիչների, բայց միշտ նույն ժամին, ու ամենակարևորը ճիշտ ժամին:
Գյուղում չես կարող ուշանալ ու երկար քնել, որովհետև կաթի ավտոն (տներից կաթ հավաքող), լավագույն դեպքում հաջորդ անգամ իրիկունն է գալու, իսկ մինչև էդ կաթը կթթվի:
Գյուղում չես կարող ալարել ու վեր չկենալ անկողնուց, որովհետև հորթին պետք է կերակրել, չկերակրեցիր՝ կնեղանա, չի աճի, իսկ դու պիտի վաճառես նրան, որ քաղաքում սովորող երեխուդ վարձը վճարես:
Գյուղում չես կարող հինգ րոպե ավել քնել, որովհետև կատուն կօգտվի առիթից ու հավի ձվերն իրանով կանի. բա շաքարն ինչո՞վ ես առնելու: Ու էդպես ամեն ինչն իր ժամն ունի. խմոր հունցելը, հարևանի հետ կոֆե խմելը, հավերին «զբոսանքի ուղարկելն» ու անգամ հարևանի կատվին նախատելը:
Ամեն ինչ իր ժամն ունի, ու դա գիտեն բոլորը, բայց ոչ մեկը չգիտի, թե ով է սահմանել կամ ինչպես են սահմանվել այդ ժամերը: Եթե հարցնես, թե ինչու հենց այդ ժամին, կարող ես անհարմար դրության մեջ դնել հարցվողին:
Գյուղում աշխատանքն էլ ուրիշ է. առանց գրաֆիկի, երբեք չվերջացող: Գյուղում չես կարող չաշխատել, պարապ մնացիր՝ սոված կմնաս, վաղվան էլ չես կարող թողնել այսօրվա գործը, որովհետև ամեն օրն իր գործն ունի, ու բացի այդ, գյուղում դու ինքնագլուխ չես, դու հարմարվում ես, հարմարվում ես բնությանը, նրա կանոններին, հետևում նրա ազդակներին:
Գյուղում մարդը դեռ չի հասցրել շատ հեռանալ բնությունից, նրանց ներդաշնակությունը դեռ այնքան էլ չի լղոզվել: Գյուղի ամենաճշգրիտ օդերևութաբանական տվյալները տատիկ-պապիկներն են տալիս՝ կարդալով բնության ձեռագիրը:
Այնտեղ, լեռան ստորոտին, ծառերի ստվերում, ուր ասֆալտի բույրը մի քանի տասնամյակը մեկ են զգում, էստեղի նման բողոքում են առատ արևից, նոր ընդունված օրենքներից, առաջվա համը չունեցող սուրճից, խանութներում թանկացումից:
Այնտեղ էլ, խոնավ օդի մեջ, տերյանական սեր են խոստովանում, խոստումներ տալիս, այնտեղ էլ են դավաճանում. դիմացինին ու իրենք իրենց:
Բայց...
Գյուղում ուրիշ է, գյուղի կյանքն ուրիշ է, ուրիշ համ ու հոտ ունի: Էստեղի ասֆալտի բույրը թույլ չի տալիս զգալ գյուղինը, էստեղի բիստրոների արագ համը թույլ չի տալիս զգալ գյուղինը:
Գյուղում ուրիշ է:

Վահան Չոբանյան

Ծանոթացեք. Յուրի Սաքունց

Հայ ազգը դեռ անհիշելի ժամանակներից միշտ փայլել է գերմարդկային ֆիզիկական ուժով: «Սասնա ծռեր» Էպոսում բոլոր հերոսներն առանձնանում էին իրենց ֆիզիկական հազվագյուտ կարողություններով: Նույնիսկ Հին Հռոմում մեր թագավորներն օլիմպիական չեմպիոններ էին, վառ օրինակը՝ Տրդատ 3-ը: Հայ մարզիկները դեռ նույն ուժով իմ մորեղբոր ավագ որդին է և մեր ազգի պարծանքը:

- Ո՞ր տարիքում ձեր մեջ զգացիք այդ դյուցազնական ուժը:
- Առաջին ռեկորդներիս սահմանման ժամանակ, 16-17 տարեկանում, երբ 3 ֆուտբոլային գնդակների վրա րոպեում կատարեցի հենում-ծալում վարժությունը 57 անգամ: Դրանից հետո 40կգ քաշով ծանրաքարերը կրծքավանդակիս կատարեցի որովայնի մկանների վաժությունը 130 անգամ:
- Իսկ ինչպե՞ս սկսեցիք այդ ունակությունները զարգացնել:
- Քանի որ ատամներով և մազերով սահմանված ռեկորդները աշխարհում շատ են, ես որոշեցի ընտրել այնպիսի մի միջոց ծանրություններ քաշելու, որը կլինի ունիկալ և ընտրեցի դրա համար ճկույթ մատս, որպեսզ այն առանց խոչընդոտի գրանցվի Գինեսի ռեկորդների գրքում:
- Իսկ ինչպե՞ս սկսեցիք մարզել ձեր ճկույթը:
- Սկսեցի թեթև՝ 1 տոննա քաշ ունեցող մեքենաներից, որոնք սկզբում 10սմ անգամ չէի կարողանում առաջ քաշել, սակայն այնուհետև հաղթահարելով այդ քաշը, կամաց-կամաց սկսեցի այն ծանրացնել:
- Ինչպե՞ս է տեղի ունենում

զարմացնում են աշխարհին: Անգամ առանց մտածելու յուրաքանչյուրս կարող ենք նշել Յուրի Վարդանյանին, Արթուր Ալեքսանյանին և շատ այլոց: Այսօր իմ զրուցակիցը կարող է համարձակ կանգնել նրանց կողքին, քանի որ բավականին երիտասարդ տարիքում կարողացել է սահմանել Գինեսի մի քանի ռեկորդ, դառնալ եռամարտի աշխարհի և Եվրոպայի չեմպիոն: Նրա անունն է Յուրի Սաքունց, ով նաև

- Առաջին անգամ տեսնելով գերմանացի մարզիկի սահմանած ռեկորդը, հասկացա, որ կարող եմ շրջանցել նրան և սկսեցի քրտնաջան աշխատել, որպեսզի սահմանեմ Գինեսի նոր ռեկորդ:
- Դուք սահմանել եք ռեկորդներ ականջներով, ատամներով, սակայն առանձնահատուկ հիշարժան են ձեր ճկույթով սահմանած ռեկորդները: Մի փոքր պատմեք, թե ինչո՞ւ հենց ճկույթը:

հոգեբանական պատրաստությունը, երբ դու կանգնում ես դեմ առ դեմ իսկայական մեքենային, կամ գնացքին և պետք է տեղաշարժես այն:
- Նախ և առաջ մարզիկը պետք է միշտ վստահ լինի իր ուժերի վրա, կարողանա կենտրոնանալ կոնկրետ նպատակի շուրջ, լարի իր ողջ մկանային համակարգը, որպեսզի հաղթահարի արգելքը: Լինի հավաքված իր մտքերով, և այդ ժամանակ նրան

ոչինչ այլևս չի կանգնեցնի:
- Եկեք անցնենք ձեր ռեկորդներով: Ո՞րն է եղել ձեր վերջին ռեկորդը:
- Նախավերջին ռեկորդս եղել է ճկույթ մատով քաշած 44 տոննա քաշ ունեցող գնացքը, իսկ վերջինը՝ ատամներով քաշել եմ 25 տոննա քաշով հրշեջ մեքենան:
- Պատմեք ձեր վերջին մրցումների մասին:
- Վերջինը մասնակցել եմ Մասռեսլինգի Եվրոպայի առաջնությունը, որտեղ մեր հավաքականը 29 երկրների մեջ թիմային հաշվարկով գրավեց 5-րդ տեղը: Մեր ինը մարզիկները կարողացան իրենց հետ բերել 1 ոսկե և 2 բրոնզե մեդալներ: Առաջնությունը բավականին պատշաճ էր կազմակերպված, մարզիկները ապահովված էին բոլոր պայմաններով:
- Ներկայացրեք մեր ընթերցողին, թե ի՞նչ է իրենից ներկայացնում մասռեսլինգը:
- Մասռեսլինգը առավել հայտնի է որպես ուժային ըմբշամարտ: Համարվում է յակուտների ազգային սպորտաձևը: Գոտեմարտի ընթացքում աշխատում է սպորտսեմի ամբողջ մկանային համակարգը, սակայն հաղթելու համար միայն ամուր մկանները բավական չեն, պետք է նաև տիրապետել համապատասխան հնարքների և ունենալ լավ տեխնիկա, որպեսզի կարողանաս տապալել հակառակորդին: Նշեմ, որ այս սպորտաձևը գնալով դառնում է ավելի մասսայական, կայանում են Աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, իսկ ԱՄՆ-ում ամեն տարի տեղի է ունենում Առնոլդ Շվարցենեգերին նվիրված «Առնոլդ Կլասսիկ» մրցաշարը, որին ներկա է լինում անձամբ Շվարցենեգերը:
- Ինչո՞ւ ընտրեցիք հենց այս սպորտաձևը:
- Մասռեսլինգով սկսել եմ զբաղվել դեռ բանակում, երբ ընկերոջս առաջարկով մասնակցեցի մասռեսլինգի Հայաստանի առաջնությանը, որում ճիշտ է, պարտվեցի, սակայն ձեռք բերեցի շատ ընկերներ՝ ի դեմս ֆեդերացիայի նախագահ Արտավազդ Նալբանդյանի, որին համարում եմ իր գործի բացառիկ նվիրյալ, լավ անձնավորություն, ում ջանքերի շնորհիվ մեր հավաքականը միջազգային արենայում կարողանում է միշտ լավ հանդես գալ և առաջատար դիրքեր գրավել: Բանակից հետո պահելով մեր կապը, անընդհատ մասնակցում եմ մասռեսլինգի մրցաշարերին, որոնցից խոշորագույնը եղավ այս տարվա աշխարհի առաջնությունը Լեհաստանում, որտեղ չնայած մենք չեմպիոն չդարձանք, սակայն կարողացանք լավ հանդես գալ և ձեռք բերեցինք իսկայական փորձ, քանի որ առաջնության ընթացքում օրական ունենում էինք 7-10 գոտեմարտ: Սակայն մենք ավելի քրտնաջան ենք աշխատում, որովհետև յուրաքանչյուր խոշոր նվաճումը մեծ աշխատանքի և կամային բարձր որակների ցուցաբերման արդյունք է:
- Իսկ ո՞րն է ձեր առաջին նվաճումը:
- Առաջին նվաճումը ունեցել եմ դեռ 6 տարեկան հասակում: Աբովյան քաղաքում կայացող ըմբշամարտի մարզային առաջնությանը գրավել եմ 2-րդ հորիզոնականը, նշեմ որ 10 տարի զբաղվել եմ ըմբշամարտով, իսկ երկրորդ մեդալս ստացել եմ 3-րդ հորիզոնականը զբաղեցնելու համար: Այնուհետև արդեն կամաց-կամաց սկսել եմ լավացնել արդյունքներս: Ըմբշամարտից հետո սկսեցի զբաղվել մասռեսլինգով և ուժային եռամարտով, որով զբաղվում եմ մինչ այսօր, հուլիս ամսին մասնակցել եմ Եվրոպայի առաջնությանը, դարձել եմ չեմպիոն, այնուհետև Ուկրաինայում անցկացվող աշխարհի առաջնության ընթացքում վաստակել եմ 2 ոսկե և 1 արծաթե մեդալ, որից հետո մասնակցելով Վրաստանում կայացած Եվրասիայի առաջնությանը, կրկին վաստակել եմ 2 ոսկե և 1 արծաթե մեդալ: Ցավոք սրտի, ֆեդերացիան հիմա ֆինանսական շատ սուղ միջոցներ ունի, այդ պատճառով ես չկարողացա մեկնել և մասնակցել Լեհաստանում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:
- Ի՞նչ պլաններ ունեք հետագայի համար:
- Դեկտեմբերի 15-ին տեղի կունենա ուժային եռամարտի Հայաստանի առաջնությունը, որի ընթացքում ես կփորձեմ կրկին պատվով հանդես գալ և պահել տիտղոսս, այնուհետև 2020 թվականին պլանավորում եմ նոր ռեկորդ, որով նորից ցույց կտամ աշխարհին հայի բազկի ուժը:
- Ի՞նչ կամային և ուժային որակներ են անհրաժեշտ, որպեսզի սկսնակ մարզիկը առաջխաղացում ցուցաբերի ձեր սպորտաձևում:
- Մասռեսլինգը բավականին հեշտ յուրացվող սպորտ է, այդ պատճառով սկսնակ մարզիկներից ընդամենը պահանջվում է սեր և նվիրում այս սպորտաձևին:
- Իսկ այս տարիների ընթացքում եղե՞լ է մի պահ, երբ հիասթափվել, կամ հուսահատվել եք սպորտից, եթե այո, ինչպե՞ս եք դա հաղթահարել:
- Այո, հիմնականում եղել են այն պատճառով, որ ֆինանսական խնդիրները խանգարել են մասնակցել առաջնություններին, սակայն սպորտային դաստիարակության մեջ միշտ կարևոր է եղել չհանձնվելու և առաջ գնալու գաղափարախոսությունը, այդ պատճառով ես փորձում եմ դասեր քաղել իմ անհաջողություններից և միշտ գնալ դեպի առաջ, դեպի նորանոր բարձունքներ:

Արտյոմ Սաֆարյան

Ոչ ոքից չե՞նք գերադասում

«Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում, մենք մեզ ոչ ոքից չենք գերադասում»...
Ունենալով հազարամյակների պատմություն՝ տարբեր ժամանակներում եղել ենք որևէ կայսրության, պետության կազմում, սակայն այսօր մենք՝ հայերս, կազմում ենք ՀՀ բնակչության 98 տոկոսից ավելին:
Գրելուս պատճառը դարձան «Լուրերի»-ի տեսանյութը և «Россия 88» ֆիլմը: Տեսանյութը Մանասի մասին է (ազգությամբ հնդիկ, ծանոթ եմ «Startup Boost Weekend»-ից), թե ինչպես է «UWC Dilijan»-ում հայերեն սովորել: Մանրամասները կարող եք ինքներդ նայել: Սակայն խնդիրը վիրավորական մեկնաբանություններն էին (հիմա էլ չկան, ֆիլտրված են): Իսկ երեկ որոշեցի նայել ֆիլմը, այն Ռուսաստանում 2000-ականներին գործող նեոնացիստական խմբի մասին է: Խմբի անդամներն իրենց համարում էին հայրենասերներ և նպատակը՝ երկիրը իմիգրանտներից «մաքրելն էր»: Հա, մեծ տարբերություն կա, բայց երևույթը՝ գերադասելը, վիրավորելը, նույնն են: Չեմ ուզում դրամատիկ մտքեր արտահայտել, ուղղակի կփորձեմ լինել պրակտիկ: Իրականում ամբողջ աշխարհում այս խնդիրը մի քանի տասնամյակ կա, ուղղակի մենք այս խնդրին բախվեցինք վերջերս, երբ հիմնականում հնդիկների ու պարսիկների համեմատաբար մեծ հոսք ունեցանք:
Աշխարհում իմիգրանտների հետ կապված թոփ պոպուլիստական խնդիրներն են՝ աշխատատեղերի ու աշխատավարձի կրճատումը, տվյալ երկրի հարկատուների հաշվին ապրելը, հանցագործությունները: Մնացածին կարող եք ծանոթանալ հոդվածում:
Ու էլի մենք բացառություն ենք. մեզ նշվածները չեն հետաքրքրում, մեզ համար կարևորը միատարր ազգ լինելն է: Հա, ու լինելով 10 միլիոն (դե ասում են)՝ 7 միլիոնը բնակվում է Հայաստանից դուրս, այսինքն՝ իմիգրանտ:
Թեման կարելի է անընդհատ քննարկել, բայց էստեղ կթողնեմ հոդվածներ իմ ամենասիրելի հրատարակությունից՝ «The Economist», որ իրոք մտածելու առիթ կտան.
«Որպեսզի աշխարհն ավելի հարստանա՝ թողեք մարդկանց ազատ շարժվեն (To make the world richer, let people move)», «Ինչպե՞ս է միգրացիան աշխարհը դարձնում ավելի խելացի (How migration makes the world brainier)», դե ու բնականաբար հակառակ պնդումը՝ «Ամենահաջողակ երկրները ամենամիատարրերն են (The most successful countries are the most homogenous)»:
Ի՞նչ կարծիքի եք...

Սուրեն Կարապետյան

Հավաքելու ժամանակը

Փետրվար էր, հայրս կրկին ասաց.
- Դե, պայուսակս բերեք, արդեն հավաքելու ժամանակն է:
Նրա ձայնի ելևէջները մերթ տխուր էին, մերթ՝ հիասթափված:
Նրանք գնում են, թողնում են իրենց հարազատ տանիքը, իրենց տաք անկողինն ու գնում, գնում ինչ է կատարվում, կամ ինչ է զգում մարդը: Ես մեղադրում էի հորս, բայց միևնույն ժամանակ հասկանում, որ նա ամեն ինչ մեզ համար է անում, իսկ ո՞ւմ է հաճելի օտարության մեջ գտնվելը, մենք էստեղ ենք, հարազատներով շրջապատված, իսկ նրանք միայնակ են, միայնակ՝ բառի ամենալայն իմաստով, էստեղ մեկիս մատը փուշ է մտնում՝ բոլորն անհանգստանում են, իսկ ի՞նչ գիտենք՝ քանի անգամ են հիվանդացել ու քանի անքուն գիշեր անցկացրել՝ ոչ մեկիս չասելով...
չէ, թե չէ ինքը՝ հայրս վաղուց այրած կլիներ: Խնդիրը մեկն է, ես ուզում եմ ոչ թե հորս հետ զրուցեմ, խորհրդակցեմ տարվա մեջ ընդամենը 4 ամիս, այլ միշտ, ամեն պահի, քանի որ կան բաներ, որ մինչև աչքերին չնայես, ոչինչ չես զգա: Ես գիտեմ, որ շատ երեխաներ են իրենց ծնողի կարոտից տանջվում, ու հոգու խորքում կրկնում՝ չէ՞ որ մեզ համար է անում, այո, մեզ համար: Դրա համար պետք է հիշենք ու չմոռանանք՝ ծնողն աշխարհում ամենաթանկն է, ով անքուն գիշերներ

են «խոպան»: Ամեն անգամ, երբ հայրս գնում է, ես գրկում եմ նրան ու արցունքոտված աչքերով կրկնում. «Սա վերջինն է, չէ՞»: Հայրս ինձ ամուր գրկում է ու հավաստիացնում, որ այո՛, սա վերջինն է, հետո ամբողջ տարվա մեջ 7-8 ամիս սպասում ես նրա վերադարձին, օրերն ես հաշվում: Ախր դժվար է խոսել ու զրուցել հեռախոսով, չէ՞ որ կարոտդ էդ տեսազանգը չի բուժում, մենք տեսնում ենք դեմքը, բայց չենք զգում, է, էկրանից այն կողմ

Գալիս է աշունը, ես չեմ կարող բացատրել այն հուզմունքը, որ զգում եմ նրա վերադարձի օրը, ժամերն ու վայրկյաններն եմ հաշվում, թե երբ պիտի հորս գրկեմ, ես գրկում եմ ու էլի հուզված մեղմ շշնջում եմ.
- Էլ չես գնալու, չէ՞:
- Չէ,- պատասխանում է հայրս:
Հուսով եմ՝ այս անգամվա չէ-ն իրոք վերջինն է:
Մի օր էդ պայուսակը այրելու եմ, չնայած՝ չէ, խնդիրը պայուսակի մեջ անցկացնելով՝ մեր խաղաղ քունն է երազում:
Ձմեռ է, «պայուսակս բերեք»:

Ելենա Հովհաննիսյան

Գյումրի. հիշողության մեխեր

Գյումրու երիտասարդների նոր նախաձեռնությունը

- Ինչպե՞ս առաջացավ Գյումրու տնակների մեխերից արվեստի գործեր ստեղծելու գաղափարը:
Արսեն Վարդանյան.
– Շատ գյումրեցիների պես ես էլ դոմիկի՝ տնակի բնակիչ եմ եղել: Երկար ընդմիջումից հետո, երբ գնացի մեր տնակի տարածք, նկատեցի, որ այնտեղ տնակից մնացել են միայն մեխերը: Էդ մեխերը որոշեցի հավաքել ու ստեղծագործությունների շարք ստանալ: Ու քանի որ շատ ու շատ արտահայտություններ, ասույթներ հենց այդ ժամանակներում են ծնվել, էս պահին խորթ ու անծանոթ են դարձել, տնակների հետ վերանում են: Որպեսզի մարդիկ զգան, թե ինչի մասին է խոսքը, մենք որոշեցինք շարք ստեղծել, որտեղ հիմնականում ոչ միայն կենցաղային բնույթի պատկերներ կստանանք, այլ նաև հայկական ասացվածքների մեծ մասն ենք փորձել վերականգնել:
Մեխը հիշողություն է, լավ և վատ բան է տեսել: Որոշեցինք անպայման հենց մեր տնակի շարքով սկսել հիշողության շարքը:
Ի սկզբանե այն հուշերի արթնացում է, որովհետև շատ ու շատ երիտասարդներ, պատանիներ, ովքեր տնակային թաղամասում են ապրել կամ մեծացել, այստեղ են ապրում կամ արտերկրում, մանկությունից հիշում են իրենց տնակներում ապրած պահերից, կենցաղից: Որոշեցինք ամեն տնակ ունենա իր հիշողության շարքը: Ու շատ լավ արձագանքներ ունենք: Շատ գյումրեցիներ, որոնք արտերկրում են ապրում հիմա, ֆեյսբուքով գրում են, իրենց տնակի տեղն են բացատրում, ուզում են տեսնել՝ ինչ է մնացել այդ հատվածից: Ուսումնասիրելով հասկացանք, որ արժե ոչ միայն մեխեր օգտագործել, այլ էդ տարածքներից քարեր, վառարանի խողովակներ, այլ դետալներ: Օրինակ, այս ժամացույցը պատրաստելուց վառարանի խողովակներից սլաքները պատրաստեցինք: Այսինքն, դետալային իրեր ենք վերցնում այդ տարածքից, որոնք մարդիկ տեսնելով, կարող են դրանց միջոցով հիշողություններ արթնացնել իրենց մեջ: Որպես ֆիքսելու հարթակ օգտագործում ենք ծառի փայտը, քանի որ 90-ականներին ծառ կտրելը բավական ակտուալ էր, ու կազմում էր «դոմիկային» կյանքի անբաժանելի մասը:
-Որտեղի՞ց են ծնվում նման մտահղացումներ ու գաղափարներ:
Գագիկ Մխիթարյան.
– Ուղղակի առօրյա շփումներից: Երբ շփվում ենք ինչ որ բանի հետ ու խնդիր ենք տեսնում, առաջանում է ցանկություն դա լուծելու կամ փոխելու, ավելի լավը դարձնելու, և առաջանում են գաղափարներ, փորձում ենք գտնել լուծման տարբերակներ: Մի խոսքով, տեսնում ենք ինչ-որ բաց հարթակ, փորձում ենք այդ բաց հարթակում մեր մասնակցությունն ունենալ:
-Ուրիշ ի՞նչ նախաձեռնություններով եք հանդես գալիս ու ի՞նչ նպատակներ ունեք:
Գագիկ Մխիթարյան.
– Նպատակները երիտասարդներին խրախուսելն է, որպեսզի ակտիվ մասնակցություն ունենան քաղաքի զարգացման, քաղաքի դեմքը ճիշտ ցույց տալու գործում: Մենք ընդամենը օրինակ ենք ծառայում, մատուցում ենք ավելի լավ տարբերակներ, որտեղից մարդիկ կարող են ոգևորվել, շարունակել ու ավելիին ձգտել, պայքարել, հղանալ նոր գաղափարներ ու փոխել իրենց միջավայրը: Շատ մտահղացումներ ունենք, բայց չեմ սիրում խոսել այդ մասին, քանի դեռ չենք իրագործել:
- Ինչպիսի՞ն եք տեսնում արդեն վերածնված Գյումրին:
Արսեն Վարդանյան.
– Ինձ համար Գյումրին կատաստրոֆիկ արագությամբ առաջ է գնացել: Այսինքն, երբ ասում են՝ ի՞նչ վերածնունդ, վերածնունդ դեռ չի եղել, ես այնքան էլ համաձայն չեմ: Մարդը, երբ որոշել է, որ իր ընտանիքի հետ պետք է այստեղ ապրի ու այստեղ է տեսնում իր ապագան, արդեն իսկ լավ է ապրում, դա արդեն ինձ համար շատ մեծ առաջընթաց է: Այսօր ակնառու է, որ մեր երիտասարդները կարող են վաստակել այնքան, որքան նախկինում ոչ ոք ի վիճակի չի եղել վաստակել Գյումրիում: Օրինակ, ՏՏ ոլորտում: Գյումրին էս պայմաններում արդեն մեծ հաջողություններ է գրանցել: Վերջին 2-3 տարիներին Գյումրին զբոսաշրջության քաղաք է դարձել: Այսինքն, ռեալ ու լուրջ քայլեր են ձեռնարկվում ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ: Մեզ համար դա հսկայական առաջընթաց է: Մարդիկ տեսնում են ինչ փոփոխություններ կան, ինչպես են այդ փոփոխությունները զարգանում: Ճանապարհների վերանորոգումը էլի առաջընթաց ու հնարավորություններ է ստեղծում Գյումրու համար:
Մենք տեսել ենք ու տեսնում ենք այս քաղաքի պոտենցիալը, անկախ նրանից, թե էս տարածաշրջանի մարդիկ ինչպես են մտածում:
Մենք մեր քայլերով օրինակ ենք հանդիսանում, որպեսզի, մյուս մարդիկ այս տարածաշրջանի պոտենցիալը բացահայտեն ու կարողանան մի բան ավել ստեղծել այս քաղաքի համար:
Գագիկ Մխիթարյան.
– Գյումրին նոր չէ, որ բդի վերածնվի: Այդ ամեն ինչը 31 տարվա ընթացքում անընդհատ, անգամ փոքր քայլերով, թեկուզ դժվարությամբ, թեկուզ շատ բարդ, վերածնվում է: Անելիքներ դեռ շատ կան, առռելի աշխատանք կա անելու թե քաղաքի շինարարության ու ճարտարապետության հետ կապված, թե աշխատատեղերի, թե մարդկանց մտածելակերպի, որպեսզի Գյումրին կրկին դառնա հզոր, ակտիվ աշխատանքային, արդյունաբերական քաղաք, որի մեջքը երկրաշարժը չկարողացավ կոտրել, քանի որ ուներ «թասիբով» քաղաքացիներ:

Հովհաննես Սարգսյան

Կապանը՝ երիտասարդության մայրաքաղաք

Մենք ճանաչվեցինք 2020-ի երիտասարդական մայրաքաղաք: Մենք՝ Կապանը: Հոդվածների մի շարք ունեմ, որտեղ մեր բարբառից, Կապանի սիրուն տեղերից, առանձնահատկություններից եմ պատմում: Այդ հոդվածներս գրելիս դեռ Կապանում էի ապրում, երևի մոտ երկու տարվա վաղեմություն ունեն: Հիմա՝ Կապանից հեռու ապրելու երկրորդ տարվա թոհուբոհից, ուզում եմ էլի գրել. նույն ձեռագրով, բայց տարբեր զգացողություններով:

Ես միշտ սիրել եմ ծննդավայրս, կապված եմ եղել միշտ, հարազատությունից բացի համ էլ անբացատրելի խաղաղություն ու հանգստություն եմ զգացել միշտ: Այն, որ քաղաքում մեքենաներ են գնում-գալիս, բայց և այնպես խցանումների կիզակետում չենք հայտնվում երբեք, այն, որ խանութ-ռեստորանների առկայությունը «բնության հաշվին» չի, այն, որ մարդիկ տարբեր են, տարբեր են և իրենց հոգսերը, բայց հասնող են ու բարեսիրտ, ու այն, որ իրենց նմանը միայն Շվեյցարիայում ունեցող բարձրահարկ շենքերի կողքին ծվարում են գողտրիկ, ջերմ սեփական տները, ինձ խաղաղության, ջերմության ու մտերմության ուրիշ զգացողություն են միշտ հաղորդել:

Մեր ավտոբուսները 15 րոպեն մեկ չեն գալիս-գնում: Ժամ կա, ժամանակացույց կա: Ու բոլորը գիտեն այդ ժամերը, բոլորը ունեն ավտոբուսի «չվացուցակի սքրինշոտը»՝ իրենց հեռախոսներում: Մի քանիսն էլ ինձ նման մինչև հիմա ապահովության համար զանգում, հարցնում են՝ տատ, 8 համարը 2-ից 20 պակաս էր, չէ՞, բարձրանում: Մենք ավտոբուս նստելիս չենք հարցնում՝ Պոլիտեխնիկ հասնո՞ւմ եք, այլ ասում ենք՝ բարև, Սամվել ձյաձյա: Որովհետև մենք գիտենք բոլոր կանգառները, գիտենք ավտոբուսի ուղղությունները էնքան բնական ու կանոնավոր կերպով, ինչպես որ գիտենք մեր դպրոցի կամ աշխատավայրի հասցեն: Մենք վարորդին երբեք չենք խնդրում կանգառում կանգնել: Վարորդը մեծ հաշվով գիտի՝ որ ուղևորը որ կանգառում է իջնելու:

Մենք կհանդիպենք քաղաքապետարանի այգում, կամ մարզպետարանի դիմաց: Բայց ավելի շատ՝ մարզպետարանի դիմաց, որովհետև ամռանը շատրվաններն են էնտեղ, ձմռանն էլ՝ տոնածառը: Մենք բոլոր հավանական համերգներից առաջ կհավաքվենք Մշակույթի կենտրոնի դիմաց՝ տեսնելու՝ արժե՞ մնալ, թե մի քիչ քայլենք, բարձրանանք տուն: Բայց արժե, հավատացե՛ք, արժե մնալ...

Մենք ախր, քաղաքի ոչ մի հատվածով անտարբեր անցնել չենք կարող: Բոլոր տեղերում ինչ-որ հիշողություն կա, ինչ-որ ծանոթ, ինչ-որ ընկեր-բարեկամ...

Մեր քաղաքը ծաղկեց ու մեծացավ մեզ հետ: Ունիվերմագը դարձավ Կապան Մոլ, Մարզպետարանի դիմացը՝ շատրվանների մոտ, Լամպերի մոտը՝ Եվրոպական քոլեջի մոտ: Վերանորոգվեց հիվանդանոցը, վերանորոգվում է մշակույթի կենտրոնը, սիրուն, շատ սիրուն կամարաձև լույսերով զարդարվեց քաղաքապետարանի այգին, ու վերանորոգվեց նաև իմ «Պերեմենիի մոստը» (էս մեկը չեմ հասցրել տեսնել, ես որ հետ եկա Իտալիա, դեռ աշխատում էին): Ամերիկյան անկյան այցելուների թիվը բազմապատկվեց: Տարիներ առաջ մի երկու-երեք կամավոր հազիվ լինեինք, հիմա արդեն իրար հերթ չտալով երիտասարդները կամավորություն են անում, անգլերեն են սովորեցնում: Կինոթատրոն ունեցանք:

Մի տեսակ էս ամեն ինչը քայլ առ քայլ, կամաց-կամաց անելով՝ մեր քաղաքը հասցրինք էս սիրուն, կարևոր օրվան:

Երիտասարդությունն ապրում է իմ Կապանում: Երեխեքը գնում են երաժշտական դպրոց, պարի, շախմատի, ու էլի շատ ու շատ տարբեր խմբակներ: Ու հա, հնարավոր է պինդ ու ամուր գիտելիք ստեղծել էնտեղ, որտեղ բոլորն իրար ճանաչում են, որտեղ ասում են՝ էսինչի աղջիկն է, էնինչի՝ տղան, ու մարդիկ միանգամից «տեղն են բերում»:

Երևանը փոքր ժամանակ չէի սիրում: Գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ շատ երևանցիներ մինչ օրս էլ մտածում են, որ շրջաններում գտնվող քաղաքները (չգիտես՝ ինչու) բարձրահարկ շենքեր, ժամանցի վայրեր, հավես միջոցառումներ կամ նմանատիպ բաներ չունեն: Հարգելինե՛րս, ժամանակակից տեխնոլոգիաների հզորությունը ջատագովելով՝ google-եք, խնդրում եմ, ու վերջնականապես գիտակցեք, որ տարածքային տարբերությունը ամենևին մտավոր, ստեղծարար ու պոտենցիալ տարբերություն չի ենթադրում: Ու եթե դուք մտերիմ եք ձեր համադպրոցականների կամ բակի ընկերների հետ միայն, ու դրանով մեծ ու լայն եք համարում ձեր շրջապատը, ապա մենք մի ամբողջ քաղաքով ենք մտերիմ, լա՞վ: Էս մի կողմ, Երևանը սիրուն ու սեր քաղաք է, բան չեմ ասում, ուղղակի մեկ-մեկ (երբեմն՝ հաճախ) թյուրըմբռնմանն արձագանքելիս անտարբերություն դրսևորել մի տեսակ չի ստացվում:

Վերադառնալով երիտասարդական մայրաքաղաքիս, ասելու շատ բաներ կան, պատմելու 16 (ու կես) տարվա հուշեր կան, ջերմության, սիրո ու երջանկության մի մե՜ծ, ձեռքերը դողացնելու աստիճան փարթամ ծաղկեփունջ: Բայց մենակ մի բան եմ ուզում ասել: Ես կարոտում եմ: Մեծ ու սիրուն, հին ու անտիկ, պատմական ու գունավոր քաղաքները աչքերս՝ անթարթ ու դեմքս՝ հիացմունքից ապշած են պահելու միշտ, բայց ես մեկ է՝ կարոտելու եմ... Ես կարոտելու եմ էն բնական, համարձակ ու իսկական ժպիտը, որ կրում էր դեմքս քաղաքովս քայլելիս: Բայց ես գիտեմ, որ ո՛չ դեմքս, ո՛չ քայլքս, ո՛չ էլ ժպիտս երբեք չեն մոռացվի: Մենք չափազանց հարազատ ենք՝ իրար մոռանալու համար:

Շուտով արդեն Ամանորյա տեսք կստանա քաղաքս: Իսկ ես միշտ կարոտելու եմ էն բոլոր Ամանորները, որոնք անցել են քաղաքի մեծ տոնածառի հետհաշվարկի հետ: Շնորհավոր, իմ սրտի մշտական, հավերժական ու իսկական մայրաքաղաք Կապան...

Անահիտ Բադալյան

Այն, ինչ մենք սիրում ենք

Մայրամուտները կարող են ջերմությամբ լցնել մեր ամենասառը օրերը, ցողել մեր՝ քնել չհասցնող աչքերը, փայլեցնել դրանք։ Մեր ամենասիրելի ուտելիքը կարող է ուրախացնել մեզ, բարձրացնել մեր տրամադրությունը, իր հոտով արթնացնել մեր՝ ինչ-որ պահի քնով անցած զգայարանները։

Մեր սիրած երգերը կարող են շարժել մեր դեմքի այն մկանները, որոնք պատասխանատու են ժպիտի համար։

Այն դասաժամերը, որոնց սպասում ենք նախորդ օրվանից ու որոնց պատրաստվելիս էներգիա չենք խնայում, կարող են կանոնավորել էն ամենակարևորը, որը մարդը պիտի շարունակաբար փորձի պահպանել. սովորելու ցանկությունն ու հետաքրքրությունը։

Մեր սիրած եղանակը կարող է առիթ դառնալ, որ զգեստապահարանից հանենք վաղուց չհագած սիրուն շրջազգեստը, արդուկենք ու հագնենք։

Երբ գալիս է մեր սիրած ծաղիկների բացվելու ժամանակը, մեր՝ սիրելի ուտելիքից արդեն արթնացած զգայարանները շոյվում են էն անուշ բույրից, որ մանուշակներն են արձակում։

Մեր սիրած ֆիլմերը դիտելիս մենք միշտ ինչ-որ պահի ուզում ենք մտնել էդ ֆիլմի մեջ, կամ գոնե ֆիլմի վերածել մեր իսկ կյանքը։

Մենք միայն մերն ենք համարում մեր սիրած տեղերը։ Ուրիշների ներկայությունը օտար, անցանկալի է դառնում էնտեղ, որտեղ մենք ժպտացել ենք էնքան իսկական, որ թվացել է՝ սիրտը դուրս կգա՝ ժպիտն ապացուցելու, ու ծիծաղել էնքան ուժեղ ու շատ, որ սկսել է ցավել ստամոքսն ու կտրվել շունչը։

Մեր սիրած նկարներում մենք ենք էնպիսին, որպիսին չենք լինի էլ երբեք։ Մի քիչ կարճահասակ, փոքր-մոքր, ու մի քիչ ավելի շատ ժպիտով։

Մեր հին օրագրերը՝ վարդագույն, նախշազարդ, նկարներով ու գույներով լիքը, մեր մանկությունն են, պատանեկությունը, ծերանալիս արդեն կդառնան մեր ջահելությունը։

Մեր գրած բանաստեղծություններն են, հեքիաթները, որոնց վերջում երեք խնձոր է ընկնում, ու հեչ էական չէ, որ ես երբեք առանձնապես խնձոր չեմ սիրել։ Էդ օրագրերում մեր հին հոգսերն են՝ մեր չնչին, փոքրիկ ու հիմա արդեն կարոտով հիշվող հոգսերը։ Իրերի մասին՝ այսքանը։

Մեր սիրելի ու մտերիմ մարդիկ մեր իրերի բովանդակությունն են։ Նրանք են, ում համար երբեք չենք ափսոսա մեր ամենասիրած պիցցայի կեսը զոհաբերել։ Նրանք, որոնցից կամ որոնց հետ լսել ենք մեր ամենասիրած երգերը։ Մեր՝ անընդհատ նորը բացահայտելու մղումը, մեր սովորածը մեզնից սովորելու կամ մեր չիմացածը մեզ սովորեցնելու պատրաստակամությունն ունեցողները։ Այն մարդիկ են, ովքեր մի անգամ ասել են, որ մեր շրջազգեստը մեզ շատ է սազում, ու այդ օրվանից սկսած մեր գնած բոլոր շրջազգեստները նման են այդ մեկին։ Այն մարդիկ են, ովքեր քո ջերմությունն իրենց կյանքի ամառը համարելով դառնում են քո կյանքի ամենաջինջ գարունը։ Ովքեր պատրաստ են գարնանաբար հալեցնել սառույցը, հանդուրժել անձրևներն ու քամին միայն նրա համար, որ դու շողաս անխռով ու անխնա, որ ջերմանաս ու ջերմացնես շուրջդ։ Մեր սիրելի մարդիկ նրանք են, ում պատրաստ ենք դերեր առաջարկել մեր՝ ֆիլմ դարձած կյանքում։ Ովքեր կիմանան իրենց դերերն անգիր, կարիք չեն ունենա փորձելու իրենց հատվածը ու երբեք չեն ուշանա նկարահանումներից։

Մեր սիրելի վայրերն են մեր մտերիմ մարդիկ, որովհետև իրենց ասածով ու պատմածով ժպիտ են նկարել մեր դեմքին ու ծիծաղեցրել մեզ էդ վայրերում։ Տուն են դարձրել էդ վայրերն ու հարազատացրել մեզ։

Ու վերջապես, ի՞նչ էինք գրելու մեր օրագրերում, եթե մեր մտերիմները մեզ ժպտալու, ուրախանալու, մտածելու ու մտածածը թղթին հանձնելու առիթ չտային։ Ո՞նց էինք ինչ-որ գործ ստեղծելու, եթե մեր մտերիմները մեզ ստեղծագործ չդարձնեին իրենց գոյությամբ՝ մեր իսկ կյանքում։

Մեր սիրելի մարդիկ մեր հեքիաթներն են... Նրանք, որոնց ավարտին երկնքից երեք խնձոր է ընկնում... Բայց ես էդպես էլ խնձոր չսիրեցի...

Անահիտ Բադալյան

Երջանիկ հայերեն

Հայերենը սիրուն է այնքան, ինչքան արևը՝ մի շաբաթ տևած տեղատարափ անձրևից հետո: Հարուստ է այնքան, ինչքան խոշոր երկրների տնտեսությունները կարող են լինել: Անսահման է այնքան, ինչքան... Անսահմանությունը չեն համեմատում...
Հայերենի մայրենիությունը ավելի ուժեղ եմ սկսել զգալ այն ժամանակվանից, երբ անգլերենը դարձավ բարևելու ու բարի գիշեր ասելու լեզու, իտալերենը՝ շաբաթը երեք անգամ պարտադիր ուսուցանվող դպրոցական առարկա: Հայերենը մնաց ամենաթանկերին բարևելունն ու ամենաիսկականը արտահայտելունը: Մնաց ամենահոգնած ու անտրամադիր պահերին երգերով բուժելունը, մնաց ամենաուրախ րոպեներին հնդկացի ընկերուհուս հետ շախով-շուխով պարելունը: Հայերենը մնաց ու մնալու է... Մնալու է, որովհետև էն լեզուն է, որի միջոցով պատկերվում է կյանքը՝ իր բոլոր հանելուկներով: Պատկերվում է՝ բառերի, արտահայտությունների ու մտքերի մեջ թաքնվելով:
Հայերենում ասում ենք՝ ամեն ինչ անցավ, ամեն ինչ լավ է: Անցնելը անցյալ ժամանակով դնելիս ժխտում ենք ցավը, հերքում ենք դրա գոյությունը, անՑԱՎ ենք սկսում ապրել: Ամեն ինչ անցնում է, որովհետև մենք հավատում ենք անցավ կյանքին: ՀաՎԱՏ-ի միջոցով համարձակություն ենք դրսևորում՝ երես առ երես բախվելու վատին, չարին, բացասականին, ընդունելու ոչ դրականը, ոչ լավը: Հավատ ենք դրսևորում ամենավատի, ամենաանհույսի հանդեպ անգամ ու ժպտում ենք՝ մեր միջի լույսը պահպանելու համար: Ժպիտի մեջ էլ պետք կա, ԺՊԻՏԸ հարկադրանք է ներառում, ասում է՝ «պիտ ժպտանք»: ԾիծԱՂ-ի մեջ էլ աղ կա, որովհետև անհամ ու անալի է ծաշն առանց աղի: Նույնպես անիսկական է այն ծիծաղը, որը նոր կամ գուցե վաղուց չորացած արցունքների աղը չի կրում իր մեջ:
Մենք հավաՏԱԼով սեր ու ջերմություն ենք տալիս ոչ միայն մեզ, այլ նաև մյուսներին: Իսկ տԱԼԻՔ-ը փոխանցվում է դիմացինին մի անտեսանելի, չերևացող, բայց սիրառատ ալիքի միջոցով. աԼԻՔ, որը լիքն է անկեղծությամբ, հույսով ու հավատով:
Մենք չենք կարող առՈՂՋ լինել առանց ողջամիտ որոշումների, խոհերի ու հայացքների: Տանիք կա նույնիսկ անտուն մնացած, բայց իրարով ապրող ու իրար սիրող ընՏԱՆԻՔների գլխին, իրար մեջ իրար գնահատող ընտանիքների գլխին:
Պարտություն կա ամեն հՊԱՐՏՈՒԹՅԱՆ մեջ էլ: Բայց դա Հոժար պարտություն է, Հ-ով սկսվող պարտություն: Այն պարտությունն է, որը գիտակցված է, որոշված ու ընտրված: Միայն կամքով ուժեղներին բնորոշ պարտությունն է դա. բոլոր պարտություններից ամենագեղեցիկը: Բայց մենք դժվար ենք համակերպվում պարտություններին: Իսկ գիտե՞նք՝ ինչն է դժվարը: Մենք հերքում, ժխտում ենք վար ու ներքև իջնելը, հրաժարվում ենք, դրա համար դԺՎԱՐ է դառնում ամենը, հետո էլ ասում ենք թե՝ դժվարաՑԱՎ: Ցավեցնել է սկսում դժվարությունը, ցավեցնել ենք սկսում ինքներս մեզ՝ վար չընկնելու դժկամությունը պինդ բռնած: Բանն այն է, ախր, որ չգիտենք էլ՝ ինչ է ներքևում, միայն գիտենք՝ ցած է: Բայց մոռանում ենք մեկ-մեկ, որ ամենավեհ գագաթներն անգամ հասնելուց հետո վերջում ասում ենք՝ բարձրաՑԱԾ ենք: Էսպես դժվարություններից վախենալով, հպարտությունն էլ որպես պարտություն ընկալելով՝ մեկ-մեկ տարակուսում ենք իսկական երջանկության մեջ: Բայց գաղտնիքը երջանկության հենց իր մեջ է, ջանասիրություն է պետք՝ երՋԱՆիկ լինելու համար: Պետք է ջանք թափել, հավաՏԱԼ, դԺՎԱՐանալ, ծիծԱՂել ու վերջում գտնել, հասնել երՋԱՆկությանը: Պայքարել է պետք երջանկության հասնելու համար: Իսկ պայՔԱՐելիս պիտի գիտակցել, որ ծանր կարող է լինել պայքարն այնքան, որքան ժայռերից պոկված քարերն են լինում երբեմն: Բայց ուժեղ պիտի մնալ, պինդ ու չհանձնվել երբեք: Հանձնվելիս գիտե՞ք՝ ինչ է լինում: Մենք Համաձայնում ենք մեր անձը տալ. հԱՆՁնվում ենք հոժարակամ կերպով: Էդպես չպիտի լինի. երկու Հ-երից մեկը պիտի ընտրես՝ կամ հՊԱՐՏ ես, կամ հԱՆՁնվող. հպարտները չեն հանձնվում:
Բայց դե գուցե ասես՝ մարդիկ տարբեր են, տարբեր են և կյանքերը: Իսկ ի՞նչ է տարբերը: Կազմությամբ պարզ ածակա՞ն: Չէի ասի: Կասեի՝ բայ է «տարբեր»-ը, ու դեռ ավելին՝ հեչ էլ պարզ չի, կարգին էլ բարդ է: Մենք տանում-բերում ենք մեր բնավորության գծերը, մեր մտքերը, որոշումներն ու ինքներս մեզ այնքան, որ ստեղծում ենք մեզ՝ որպես առանձին ու տարբեր մեկը: Մենք կորցնում ենք մեր նմանությունը աշխարհի հետ: Դառնում ենք մերը, մեր ստեղծածը: Տարբեր ենք մտածում, տարբեր ենք նայում իրավիճակներին, տարբեր ենք ծիծաղում, լսում, արձագանքում, զգում... տարբեր ենք սիրում: Բայց նման ենք դառնում, երբ խոսքը հասնում է մեր հարազատներին: Իսկ ովքե՞ր են հարազատները: Հարազատն էլ, տարբերի պես պարզ բառ է ըստ Աճառյանի: Ինչքա՞ն բարդ է, չէ՞, ամեն պարզություն: ՀԱՐԱԶԱՏԸ այն մեկն է, որ մեր կողքին է, կցված է մեզ՝ հարելով մեզ: Բայց և այնպես, զատ է մեզնից, անջատ է մեզնից ու մեկ-մեկ՝ հեռու: Մի ուրիշն էլ կասի՝ հարազատը մեզնից հարատև զատված է: Հնարավոր է, գուցե: Մենք ամենաշատը կարոտում ենք նրանց, ովքեր հեռու են... Ուրեմն՝ մենք միշտ կարոտում ենք մեր հարազատներին. նրանց, ովքեր մեզնից հավերժ զատված լինելով՝ հարում են մեզ ներսից...
Ու վերջապես, տխուր հնչի գուցե, կամ էլ դաժան մի քիչ, բայց սԻՐտն էլ մի իր է, մեր մյուս իրերի նման հատուկ խնամք պահանջող ու մի քիչ բծախնդիր: Սիրտն էլ պետք է մաքրել, հավաքել, դասավորել կոկիկ ու սիրուն, պետք է գրքեր նվիրել սրտին՝ խոհարարական բաղադրատոմսերի կամ գուցե Վարդգես Պետրոսյանի գրքերից: Սրտում էլ պետք է մի արևոտ կիրակի մաքրություն անել, միացնել Հախվերդյանի «Բարի լույս, տիկին

Արուսն» ու սրբել փոշիները սրտի: Եվ պիտի զգույշ ընտրել, թե որտեղ ու ոնց պետք է դնել սիրտը, պիտի զգույշ անցնել այն պահարանի կողքով, որի վրա սիրտն է դրված… Պիտի այնպես անել, որ չկոտրվի հանկարծ: Թեկուզ հենց նրա համար, որ տարբեր է սԻՐտը մյուս իրերից… Դրանից երկրորդը խանութներում չեն վաճառում:

Անահիտ Բադալյան

Ինձ մանկություն կտանե՞ք

Երբեմն ամենադժվարը հենց զգացածն արտահայտելն է, բայց, երբ թուղթը, գրիչն ու մի բաժակ տաք թեյը ձեռքդ առնես՝ կտրամադրվես: Ներսումս միայն մի ցավ է ապրում՝ կարոտի ցավ, շա՜տ կարոտի: Կարոտ առ անհոգ մանկություն, դեպի այնտեղ, ուր լաց էի լինում ծնկների ցավից, մի կոնֆետ ավել ստանալու, տատիկի հետ գնալու, կամ պապիկի մոտ մնալու համար, ջերմում էի, որովհետև աշխատանքի բերումով հայրիկը մի քանի շաբաթ պիտի բացակայեր երկրից:
- Մա՜մ, տվածդ միակ ապտակն եմ կարոտել, ապակեպատ մարմինս եմ կարոտել ու քո հեկեկոցն եմ կարոտել (էլ երբեք քեզ այդ վիճակում չտեսնելու մտքերով): Մա՛մ, մի անգամ էլ կապտակե՞ս, խնդրում եմ, ապտակիցդ մանկության հոտ է գալիս:
Ստեփանյան Մարիամին եմ կարոտել, նրա հետ արկածներս եմ կարոտել:
- Մա՛ր, կգա՞ս բարձրանանք ծառերի վրա, մի հատիկ խակ միրգ պոկելու համար: Կգա՞ս նորից մեր անձնական տունը կառուցենք՝ ճյուղերից, խոտերից ու այն ամենից, ինչ ձեռքներս կընկներ:
Էն անծանոթ տատիկին եմ կարոտել, որ ամեն անգամ փայտը ձեռքն առած, իր ծառերի միրգը փչացնելու համար, ընկնում էր մեր հետևից:
- Պա՛պ, նորից կզանգե՞ս ու հարցնես, թե ո՞ր գրիչներից եմ այս անգամ ուզում հետդ բերես աշխատանքից գալուց: Էլի ուսերիդ կդնե՞ս, որ ամբողջ աշխարհին վերևից հպարտ նայեմ:
- Հոպա՛ր, կարծում ես քեզ մոռացա՞: Չէ՛, կգա՞ս գնանք էլի մազերս գունավոր թելերով հյուսելու: Ինձ էլի կասե՞ս Չոչո, որ գժվեմ ու նեղանամ:
- Հո՞ր, քեզ ամբողջ մի մանկություն եմ պարտք: Հպարտանում էի, է, որ ասում էին՝ էս ի՞նչ նման ես հորաքրոջդ: Ասում էի՝ հեսա կմեծանամ, իրա նման սիրուն կդառնամ:
- Իմ Արև տատի, էն ի՞նչ տվեցիր ինձ ողջ կյանքում, երբեք, ոչ ոք չի կարող տալ, իմ արև: Ինձ սիրո՜ւն հեքիաթ ես տվել, տա՜տ: Հիշո՞ւմ ես՝ ոնց էի թղթիկները շրթներկոտ շուրթերով համբուրում, վերջում էլ բզեզիկներ նկարում ու Մոսկվայից ուղարկում Հայաստան:
- Պապի՛, հը՞, ո՞նց ես, հիմա ինչի՞ց ես բողոքում, փնթփնթանս: Ամբողջ աշխարհից հետս բողոքեցիր ու ինձ մի աշխարհ սեր ու ջերմություն տվեցիր:
Մանկությո՜ւն, մի անգամ էլ կգա՞ս, դե՛, թեկուզ երազում, թեկուզ սև ու սպիտակ, թեկուզ այն պահերով, որտեղ լացելու կադրեր են:
Էնքա՜ն փոքր էի, էնքա՜ն ուրիշ, հիմա արդեն մեծ եմ՝ չափահաս, հիմա արդեն կյանքս ուրիշ է, բարդ, ու էլ որոշումներս ընտանիքիս անդամները չեն կայացնում՝ գործս հեշտացնելով: Արդեն ինքնուրույն եմ… Արդեն ամեն ինչ գլխապտույտ բարդ է:
Ինձ մանկություն կտանե՞ք:

Մարիամ Աբրահամյան

Ես դեռ սպասում եմ

Շուրջ երկու շաբաթ է, ինչ գրում եմ ու ջնջում: Գրում եմ ու ջնջում... Քաջություն չի հավաքվում ներսումս, որ այս անգամ բարձրաձայնեմ կորստիս մասին:
Կորստիս:
Երբեք չեմ կարողացել խոսել իր մասին ինչ-որ մեկի հետ այնքան ազատ, որքան որ ինքս ինձ հետ ամեն գիշեր՝ քնելուց առաջ:
Ես կորցրել եմ նրան, ում երբեք չէի ցանկանա կորցնել, և իհարկե, երբեք մտքովս չէր անցնի, որ կյանքիս կարևորագույն շրջանում կկորցնեմ նրան և կորստից հետո անգիտակցաբար կամ գուցե և գիտակցաբար կփոխվեմ 180 աստիճանով: Որ կդառնամ ուրիշ մարդ, ով կսկսի պայքարել իր ապրած ամեն ժամի համար, որ կսկսի պայքարել միայն ու միայն՝ «լավ մարդ» տիտղոս թողնելու համար...
Մեր կյանքի ապրած ամեն շրջանում մենք կորցնում ենք, բայց մինչև թանկին չենք կորցնում, չենք հասկանում, որ մինչև այդ կորցրածները այդքան էլ կարևոր չէին, չնայած, կորուստները կարևոր կամ անկարևոր չեն լինում:
Ես այս անգամ, ներսիս ինչ-որ քաջության շնորհիվ կխոսեմ:
- Մարա՛լս, բան պետք չէ, արի՛ , նստի՛ր կողքս:
Հորեղբորս վերջին խոսքերն էին մեր տան մեջ, ու ձեռքս ամուր բռնած էր այն ժամանակ, երբ իրեն պետք է տեղափոխեինք հիվանդանոց...
Կորցրեցի նրան ինչ-որ անփույթ մեկի պատճառով, ու միայն ես չկորցրեցի, կորցրեցինք բոլորս, կորցրեցին նրանք, ովքեր ճանաչում էին և խոսել էին Տիգրանի հետ գոնե 5 րոպե, նրա հետ հաց կիսողը, մեկ բաժակ օղի խմողը:
Մանկությունից նրա հետ կապված ինչ-որ չվերջացող հիշողություններ կան իմ սրտում, որ անգամ քնածս ժամանակ եմ հիշում:
Մանկությունից մինչև պատանեկություն իր հետ, ու պատանեկությունից մինչև ամբողջ մի կյանք՝ առանց նրա:
Դժվար է, իհարկե, դժվար է մտնել այն տուն, որտեղ չկա նա, բայց ամեն անգամ մեր խոսակցությունների երկրորդ բառը սա է.
- Հոպարը, որ ասում էր, է՜...
Որ ասում էր...
Հորեղբայրս դեռ մանկուց ասում էր, որ պետք է մոդել դառնամ: 3-4 տարեկան հասակում հեռախոսով ես մոդա էի ցույց տալիս ու ամեն անգամ հորեղբորս գովերգող խոսքերը փոքրիկ Նինային էլ ավելի էին ուժեղ դարձնում, որ մեծանա ու դառնա մոդել...
Ես Տիգրանին չեմ համարել հորեղբայր. ես Տիգրանին համարել եմ ծնող, իմ երկրորդ հայրը, ով մինչև վերջին օրերը ինձ կողքին էր նստեցնում ու զրուցում, թե ինչպես էր անցնում իմ պարի մրցույթը Ծաղկաձորում, թե ինչպես էր ամեն անգամ ամառային արձակուրդների ժամանակ տան դռան դիմացից ժպիտով նայում, թե ինչպես եմ ինձնից մեծ ու ծանր ճամպրուկով բարձրանում տուն, թե ինչպես ենք երեք քույրերով հպարտ-հպարտ մտնում տուն: Հորեղբորս ամեն հայացքը խորհուրդ էր, ամեն բառը՝ վերլուծելու արժեք ունեցող ինչ-որ նվեր, և հետը մի բաժակ սուրճ խմելը հանգստություն:
Ամեն անգամ կոտրվելուց հիշում եմ իր խորհուրդները, թե ինչպես պետք է ինքնակամ վեր կենալ, թե ինչպես կարող եմ պայքարել ինքս ինձ համար, թե ինչպես կարող եմ նույնիսկ ծնողներիս ասել՝ ինչ անեն, որն է ճիշտ...
Ամեն անգամ ինչ-որ միջոցառում, ճամբար մասնակցելու հրավեր ստանալուց ուղեղումս Տիգրանն է, մտածում եմ.
-Կողքս լիներ, կգրկեր ամուր ու կասեր. «Բա, հոպար, առաջ եմ գնում, է՜»...
Առաջ եմ գնում...
Այո՛, բայց միևնույն ժամանակ, մտքումս միայն ու միայն Տիգրանի անունն է:
Երկու տարի է, ինչ կորցրել եմ, բայց դեռ սպասում եմ, որ ներս կգա, որ իր սթափեցնող հայացքով կնայի ինձ ու մի բաժակ դառը սուրճ կուզի...
Ես դեռ սպասում եմ:

Նինա Առուստամյան

Իմ «Տարվա մարդը». Դու կհաղթես, Արմեն

Մեր շրջապատում այնքա՜ն շատ են մարդիկ, որոնց լավ թե վատ առումով կարող ենք «Տարվա մարդ» համարել: Տեսնո՞ւմ եք այն սև վերարկուով տղամարդուն, ա՛յն, որ անկյունում ճգնում է ծխախոտ կպցնել իր երեքամյա որդուն գրկած. տիպիկ հայկական կերպար է, իսկական հայր, ով տարիներ հետո որդուն դնգստելու է ծխելու համար: Բայց մինչ այդ նա իր շրջապատում սիրված ու հարգված մարդ է: Հարցրեք ընկերներին, իրենց բակի ջահելությանը, բոլորը նրան լավագույն հատկանիշներով կնկարագրեն՝ իսկական «Տարվա մարդ»:

Էս էն մարդն է, ով միշտ ընկերների մոտ գլուխ է գովել, որ իր առաջնեկը տղա է, բա... Չէ՞ որ հայ տղամարդու առաջնեկը պետք է արու զավակ լինի, թե չէ՝ ի՞նչ աղջիկ: Լավ... Աղջիկն էլ հետո, տղայից հետո... Ծերության ժամանակ «ջուր տվող էլ է պետք»:

Բոլորը նրան իսկական լավ տղա գիտեն, սիրող ամուսին, հոգատար հայր, բայց ոչ ոք չի էլ մտածում, թե քանի անգամ է կնոջը ուղեկցել հիվանդանոց՝ աբորտ անելու...

Կարևորը՝ ինքը հեղինակություն է շրջապատում:

Բա համացանցի մյուս կողմում նստած, 25 տարի Ռուսաստանում բնակվող, Նիկոլին գովերգող մեկնաբանություններ գրող, մյուսների «տերը թաղող» հայրենասեր մորաքրո՞յրը... Մի հերոս էլ ինքն է:

Ախր, ինքը շատ հայրենասեր է, չէ՞ք տեսնում, համացանցում ամբողջ օրը հայրենիքի բարգավաճման մասին է գրում, մտածում, տվայտվում...

Երազում է, որ մի օր Հայաստանը դառնա հողագնդի ամենազարգացած երկրներից մեկը: Ու ինքը էն կինն է, ով 25 տարի առաջ ստիպեց ամուսնուն երկրից գնալ, որովհետև չէր ուզում, որ տղան ծառայի «էդ անտեր մնացած երկրին»...

Չէ՛, ինձ այդպիսի հերոսներ պետք չեն, նրանք իմ տարվա մարդիկ չեն: Իմ «Տարվա մարդը» փոքրիկ Արմենն է: Նրա նկատմամբ կյանքը դաժան է գտնվել, ու հիմա Արմենը պայքարում է քաղցկեղի դեմ: Արմենը ընդամենը 9 տարեկան է, բայց այնքա՜ն հասուն է, այնքա՜ն խելացի...

Նա ընդհանրապես չարացած չէ. ասում է, որ դա փորձություն է, ու ինքը կհաղթահարի այն:

Փոքրիկ մարտիկը ժպիտով է պայքարում: Հաճախ է ցավը տանջում տղային, փորձում ծնկի բերել, բայց նա չի հանձնվում, ասում է, որ այս պայքարում միակ հաղթողը ինքն է լինելու ու չի պատրաստվում մորը մենակ թողնել, ինչպես տարիներ առաջ հայրն էր լքել նրան:

Արմենը սիրում է նկարել: Նրա նկարներում միայն պայծառ գույներ են: Երփներանգ ծաղիկներ ու արև, արև...

Ամենից շատ մայրիկին է սիրում, ուսուցչուհուն ու... բուժող բժիշկներին: Հավատում է բոլորին, գիտի, որ մի օր Նարեկի, Արայի, Միհրի, Սուրենի, բոլորի հետ ֆուտբոլ է խաղալու, սար բարձրանալու ու դատավոր է դառնալու, արդարամիտ և խելացի դատավոր:

Իսկ մինչ այդ դպրոցն ու դասարանցիները, ողջ համայնքը գումար են փոխանցում նրա մայրիկի հաշվեհամարին: Արմենին արտերկիր կտանեն ու...

Նա է իմ «Տարվա մարդը»՝ քաջ ու անվախ Արմենը:

Գիտեմ, նա կիրականացնի իր երազանքը, նաև մեր երազանքը: Երազում ենք նրան առողջ տեսնել: Նա չի ծխի, վատ սովորություններ չի ունենա, և... 6 աղջիկ կունենա...

Սևակ Միրաբյան

Փայլուն աչքերով իմ սիրուն պապը

Վաղուց է, ինչ չեմ գրում, բայց երևի թե հիշում եք, որ տանել չեմ կարողանում բաժանումները, հրաժեշտները՝ ծանր ու կոկորդդ անզուսպ լացով խեղդող: Ոչինչ չի փոխվել. ես էլի նույնն եմ, ու ինձ բնորոշ հույզերս ինձ հավատարիմ են դեռ: Էլի չեմ սիրում բաժանումներն ու ավելի այն բաժանումները, որ խլում ու տանում են, տանում գուցե երկինք, գուցե դրախտ, կամ ծաղիկներով լի մի այգի, մի տեղ, որտեղից ֆիզիկական գոյությունդ հեռանում է կարոտդ առնելու պինդ կապից:
Վաղուց չեմ գրում, ու երևակայեք, թե ինչքան զսպված հույզեր կան սրտումս, ինչքան մտքեր, որ հիմա փորձում եմ մի կերպ իրար գլխի բերել ու գրել: Գրելն ինձ օգնում է, անկեղծ: Ու ես գրում եմ ոչ թե, որ ապացուցեմ իմ՝ գրելու, բառերն իրար կապելու ձիրքը ու ապրած դժվարությունների ծանրությունը, այլ գրում եմ, որովհետև ինչ-որ բանի, ինչ-որ մեկի մասին գրել, վերջացնելուց հետո ներսս թեթևանում է հենց այն թեթևությամբ, որ զգում եմ երկար ժամանակ աղոթելիս կամ եկեղեցուց դուրս գալիս: Չհարմարվեցի, չընկալեցի բաժանումները մինչև հիմա ու առավել ևս հիմա: Չվարժվեցի բաժանումներին անգամ այն դեպքում, երբ կարոտս առնելու տարբերակ միշտ կար: Ամեն անգամ, երբ իմ սիրած մարդկանց պիտի հրաժեշտ տայի, նորից հանդիպելու մեծ սպասումով ու պարտադիր պայմանով, անզուսպ լացում էի ու մի կերպ էի ինձ հավաքում:

Պապս՝ գյուղի պապս, որ ինձ համար ամեն առումով մարդ էր ու իր ապրած կյանքով տեղով մեկ մի ամբողջ կյանք, հիմա չկա: Շատ ժամանակ չեմ էլ գիտակցում գրածիս իսկությունը, հավատացեք: Ես, որ միշտ վախեցել, միտքս փախցրել եմ նման պահերին ինձ պատկերացնելուց, ես, որ պատճառ էի փնտրում, որ սկսեմ հուզվել, հիմա լացել չգիտեմ. մի տեսակ սառը գիտակցում կա, որ ստիպում է համակերպվել, ու ես պարտավորված եմ ինձ մեծ, գիտակից մարդու պես պահել, ինչքան էլ որ ներսում ես այն մարդն եմ, ով կորցնել չգիտեր, ով միշտ հեքիաթ էր համարում կյանքը: Թող ինձ ոչ մեկը չփորձի համոզել, որ կորստին սփոփանք կա, կամ որ լայն ժպիտով դեմքը չի կարող ներսից խեղդվել:
Տասնինը իմ սիրած թիվն էր: Հիմա չկա ոչ տասնինը թիվ և ոչ էլ օր. պապս մի ամիս առաջ տասնինի կեսգիշերին սառը ջուր ուզեց, հագեցրեց ծարավն ու գնաց իմ պատկերացրած, ֆիլմերում տեսած ու գլխումս երևակայած ճամփով՝ լուսավոր ու մաքուր մի ճամփով, ինչպիսին հենց ինքն էր ու իր ապրած ութսունմեկ տարիները:
Երբ որ ինչ-որ բանից բողոքում էի, հուզվում, նեղվում, սկսում էր իր դժվար մանկությունից կտոր-կտոր պատմություններ պատմել ու ջղայնանում էր.
- Հերիք ա, ա՛յ Շուշան, սու՛ս կաց...
Չէր սիրում, որ լացում էի, որ տան մեջ արագ-արագ էի քայլում ու որ մի րոպեում մի լեցուն աման կոնֆետները խժռում էի: Ինքը ամեն ինչում զուսպ էր, զուսպ էր իր ապրումներով ու իր տեսած անտանելի կորուստներով: Ուզում էր, որ մենք էլ զսպված ու կշռադատված լինենք ամեն ինչում:
Քո մասին անվերջ կարող եմ գրել, պա՛պս, ամենասիրուն, փայլուն աչքերով պապս, կարող եմ անվերջ գրել ու նույն հիացմունքով բոլորին պատմել քո տեսակի մասին: Ինչ-որ տեղ հիմա հանգիստ եմ, որ միշտ ասել եմ, թե քեզ ինչքան եմ սիրում, միշտ ուժեղ ու պինդ գրկել ու բոլորից շուտ առաջինը ես եմ քեզ համբուրել: Հանգիստ եմ, որ ասել եմ, թե ինչքան եմ հպարտանում քո անսպառ աշխատասիրությամբ, մեծահոգությամբ ու ապրածդ կյանքով:
Երազիս հաճախ ես գալիս ու ամեն անգամ իմ սիրած ձևով ես ինձ ժպտում: Գալիս ես, որ ավելի քիչ կարոտեմ քեզ:
Տասնինը էլ չեմ սիրում ու հիմա, ի զարմանս ինձ, սպասվածից ավելի ուժեղ եմ. պապս, որ ամենաուժեղ կարոտս ու ամենամեծ անկումս դարձավ, ինձ ուժեղ դարձրեց:
Քո մասին անվերջ կարող եմ խոսել ու խոսելու եմ քո մասին պատմություններ գրելով:
Դու միշտ ներկա ես ու սրտիս մեջ, փայլուն աչքերով իմ սիրուն պապ:

Շուշան Ստեփանյան

Անկապ նյութ

Բարև: Եթե դեմքս մոռացել ես, ոչինչ: Բայց էլ չկրկնվի:
Հենց հիմա դու «հառ ես եղել» տիեզերքի ամենածույլ մարդուն, դրա համար էլ կարդալու ես մի նյութ, որը գրվել է ու պիտի ուղարկվեր ամռանը: Կարող ես անգամ չկարդալ էլ, անիմաստ նյութ է (եթե իհարկե չի հետաքրքրում, թե որն է հավի ձվի ենթակճեպի ու կճեպի արանքում գտնվող փոքրիկ օդախորշի կենսաբանական նշանակությունը): Բրիտանացի գիտնականները պնդում են՝ եթե սոց. կայքերում բավականին ակտիվ, ամեն ֆստըֆլուշկայի արձագանքող աղջիկը (այստեղ կարող է լինել քո նախընտրած սեռը) դարձել է պասիվ օգտատեր, ու մինչև անգամ չի էլ մտածում. «մի բան պոստեմ, մարդիկ իմանան՝ սաղ եմ», ուրեմն արդեն երջանիկ է, գտել է իր կեսին: Կամ էլ ձիուկի պես սովորում է: Ձիուկը ո՞րն ա, կարգին նժույգի պես էլ սովորում եմ: Լա՛վ, իյա:
Մի խոսքով՝ ամեն հիմարության վերաբերյալ համացանցում հեղինակային կարծիք չեմ հայտնում միմիայն այն պատճառով, որ պարապում եմ հայոց լեզու, անգլերեն, կենսաբանություն: Ինչպես միշտ երկար ու լիքը բառերով գրված նախադասություններիցս երևի հասկացաք, որ լեզվիս հարցն առաջ չի գնացել: Միայն թե հիմա կարող եմ ասել, թե էդ ապուշ նախադասությունների մեջ քանի չափ ու քանակի մակբայ եմ անտեղի օգտագործել: Էն ժամանակ չէի կարող: Հա, մեկ էլ հարաբերական դերանվան «որ»-ը արդեն տարբերում եմ շաղկապի «որ»-ից: Բա դո՞ւ:
Հենց նոր ուսուցչիս՝ գյուղում գտնվող տնից եմ գալիս: Դե ոտքով եմ գնում, մի քանի կիլոմետր հազիվ լինի ճանապարհը: Ինձ ճանաչողները գիտեն, որ խելագարվում եմ գյուղի հանգստության ու ներդաշնակության համար, բայց էս մեր գյուղի ճամփին մի թաղամաս կա՝ մինչև անցնում ես, հոգիդ Աստծուն ես հանձնում. ողջ ճամփան թարմ, մխացող թրիքով է բուրում (ի դեպ՝ կմեռնեմ, թե չնշեմ՝ էս հայերը վառելու «մանյակ» են, զգացե՞լ եք, ամռանը գոմաղբ են վառում, աշնանը՝ տերև, իսկ կլոր տարի՝ իրենցից տարբերվողներին...):
Ու երբ Ռամշթայն լսելով, գոմաղբի հոտը հաղթահարելով անցնում ես էդ գրողի տարած թաղամասը՝ պիտի առնվազն երեք անգամ շնորհակալություն հայտնես Աստծուն, որ 5 րոպե քիթդ փակ կարողացել ես քայլել ու չես սատկել հենց էնտեղ: Էդքան չարչարանքից հետո ինքդ քեզ գովելու համար մոտակա ծառից մի փեշ շլոր ես քաղում ու սկսում ուտելով գնալ: Ճաշակում ես առաջինը՝ կես որդի հետ միասին: Արագ-արագ բերանիդ պարունակությունը դուրս ես հանում, հետո հիշում ռեգեներացիայի մասին: Թու՜հ:
Ուսուցչիս տունն իսկական դրախտ է, 18-19-րդ դարերի մեծահարուստի տուն ոնց որ լինի («թոքաթե» գիտեմ էդ դարերում մեծահարուստի տունը ոնցն ա եղել): Լողավազան, բիլիարդ, մեծ պարտեզ, տրոպիկական ծառեր, էն ամենաիհին հեռախոսներից: Ցանկացած ռետրո ոճի ծոխություն կգտնես ընկեր Մարգարյանենց տանը: Ո՜նց կմնայի էդտեղ մի քանի օր: Ու կմնայի հատկապես այն պատճառով, որ գիշերով տուն չգնայի: Իրականում ոչ մի արտասովոր բան, միայն թե դասատուս վերջում ասում ա՝ ամեն դեպքում զգույշ կլինես, շները չհարձակվեն: Հա՛, բա ոնց:
Ես՝ խեղճ, բազմազավակ ու միայնակ մայրս, վերադառնում եմ տուն, որտեղ ինձ են սպասում փոքրիկներս՝ մի քանի հաստափոր կենսաբանության շտեմարան, տետրեր, կենդանաբանության, բուսաբանության, բջջաբանության գրքերը: Իրականում իրենցից և ոչ մեկը փոքրիկ չի, բայց ոնց ասում են՝ ամեն մոր համար նույնիսկ իր 30 տարեկան «յեքա էշը» փոքրիկ է:
Կենսաբանություն ես սիրում եմ: Երբ գիտես, որ բջջի միտոքոնդրիումների ու պլաստիդների միջոցով ես էներգիա ստանում, երբ գիտես, որ մի փոքրիկ շարժում իրականացնելու համար ազդակը դառնում է գրգիռ, կենտրոնաձիգ նյարդերով փոխանցվում գլխուղեղի համապատասխան բաժին՝ մեծ կիսագնդեր՝ շարժողական գոտի՝ ճակատային բիլթ, հետո պատասխան ազդակը կենտրոնախույս նյարդերով ուղարկվում ծայրամասային օրգան՝ կմախքային մկաններ, ու վերջապես տեղի ունենում մկանների կծկում, երբ գիտես, որ երիկամում գտնվող նեֆրոնների պատիճներից դուրս եկող գալարուն խողովակը ծնկածալ է տալիս ու հենց էնտեղ էլ երկրորդային մեզ առաջանում, երբ գիտես, որ դու ընդամենը մեկ բջջից ես առաջացել՝ էն էլ ինչ դժվարությամբ՝ մեյոզ, միտոզ, գաստրուլացում, բլաստուլ, բջիջների մասնագիտացում, համապատասխան սպիտակուցների սինթեզ, քնած գեներ, մատրիցա... ու երբ գիտես, որ մատիտը, գրիչը կամ գնդասեղը չի կարելի մտցնել ականջի մեջ (պարապողները կհասկանան), մի տեսակ պատասխանատվություն է առաջանում մոտդ՝ կյանքդ լիովին ապրելու: Չէ՞ որ էդքան գործ են անում բջիջներդ: Միայն թե չգիտեմ էդ ամենի իմացությունը հոգեբանության բնագավառում ինչպես է պետք գալու ու ոնց եմ մտքերս հավաքելու՝ այցելուիս պրոբլեմները լսեմ, ոչ թե նկատեմ վահանաձև գեղձի մակերեսի մեծացումը ու առաջարկեմ յոդացված աղ օգտագործել:
Անգլերեն էլ շատ լավ գիտեմ: Կենսաբանության պարապմունքներն անգլերեն երգեր լսելով եմ անում: Դե, մերոնք չգիտեն, որ տանը Նապոլեոն են պահում: Թխվածք: Մեկ-մեկ պարապմունք անելուց առաջ նախապատրաստություն եմ տեսնում. համով բաներ եմ առնում, սուրճ եփում, ժամերով հարմար տեղավորվում անկողնուս վրա, խմում սուրճս, ուտում ռուլետը, պառկում քնելու: Հետո երազիս մեջ ուսուցիչներիս տեսնում, ովքեր ասում են «ծն ծն ծն, մարդ չդարձար»:
Ի, բայց ես հենց մարդ եմ ծնվել, ի՞նչ դառնալ, մի րոպե, դառնալը բաղադրյալ ստորոգյալի հանգույց չի՞, ողնուղեղային հանգո՞ւյց, զգայական նեյրոնի մարմի՞ն, «ստուկ» տված ուղե՞ղ: Կոֆե՞, քնե՞լ... Արժի:
Հ.Գ. Ձվի օդախորշում ընդամենը մեկ անգամ ներշնչելու օդ կա: Ձվից դուրս եկող ծագը ներշնչում է այդ օդը, էներգիա «ստանում», որ կարողանա կտուցով ջարդել կեղևն ու դուրս գալ: Սա էլ օդախորշի կենսաբանական նշանակությունը: Ինչքան մանրակրկիտ է մտածված աշխարհը, չէ՞...

Աստղիկ Հունանյան

Առաջին կուրսեցու անսովոր կյանքը

Սովորական է դարձել արդեն առավոտյան ուրիշ քաղաքում արթնանալը (ես Ջերմուկից եմ և հիմա սովորում եմ Երևանում), մեկ ուրիշի տանը մնալը, ուրիշ ծանոթ ու ամեն անգամ նորը բացահայտող փողոցների երկայնքով քայլելը, ամեն օր տասնյակ անծանոթ ու մեկ-մեկ էլ ծանոթ մարդկանց տեսնելը, բարև փոխանակելիս երբեմն հարցական հայացքներ ընդունելը, ուրիշ ընկերները ու շրջապատը... Հանկարծ հասկանում ես, որ արդեն ունես պատասխանատվության զգացում ինքդ քո ապագա ես-ի առաջ ու մեկ էլ հոպ՝ արդեն ոնց որ թե չցանկանալով, բայց ինքդ քեզ խոստովանում ես, որ մեծացել ես, ու ամենավատն էլ այն է, որ միայն դու չես մեծացել, ընկերներդ էլ են մեծացել ու ամեն մեկն իր անձնական գործը, զբաղմունքը, մի շարք նոր ընկերներ ու գլուխ ցավեցնող առօրեական դարձած խնդիրներ ունի: Անգլերեն պարապելիս շտեմարանում մի տեքստ կար, ու հիմա էլ կա երևի, որը պատմում է մարդկանց մոտ միջավայրը փոխելուց հետո առաջացող սթրեսի տարբեր փուլերի մասին: Մի պահ է գալիս, որ հասկանում ես, որ դու էլ ես այդ նույն փուլերով անցել ու արդեն վերջին փուլում ես: Երբ դեռ առաջին դասարանից, դպրոցի առաջին իսկ օրից չես սիրում դպրոցը ու ավարտելիս էլ լիակատար ուրախություն ես զգում, անկասկած դժվար է պատկերացնել, որ կգա մի ժամանակ, երբ կկարոտես այդ նույն դպրոցը: Դե հա, պատկերացնում ես դասընկերներիդ ու առհասարակ, մարդկանց կարոտելը, բայց ոչ երբեք այդ դպրոցի շենքը, միջանցքներն ու քո աթոռ-սեղանը: Դա գիտակցելու պահին էլ ինքդ քեզ քննադատում ես. «Չէ, դու հաստատ ցնդել ես»: Սիրում եմ Երևանը, մանավանդ գիշերային այս քաղաքը, քամոտ մետրոն, անցումն անցնելիս մարդկանց գրկախառնությունը և ուղղակի ճանապարհները: Բայց գիտեք, տխուր է, երբ հիշում ես, թե ոնց էիր քո փոքրիկ, բայց ջերմ քաղաքում գրեթե ամեն անցորդի ճանաչում, բակի տատիկներին տեսնելիս մեկ-մեկ հետները նստում ու պատասխանում իրենց հետաքրքրող բոլոր հարցերին (ի դեպ, ընդդիմանալն անիմաստ էր, իսկ ուղղակի իրենց «ռադարի» մոտով չանցնել երբեք չէր հաջողվի), հարևաններին առանց առիթի տուն էիր կանչում սուրճ խմելու ու մամայի՝

էս մի անգամվա սարքած խմորեղենը փորձելու, իսկ երբ բան չկար անելու, ինքդ էիր հյուր գնում նրանց: Ի՞նչ հարցնել, ի՞նչ բան, միանգամից մխրճվում էիր իրենց առօրյայի մեջ ու դառնում էդ պահին իրենց տան մի մասնիկը: Նոր տարվա մասին էլ չեմ խոսում... Ինձ համար այն յուրահատուկ տոն է՝ կախարդական, երբ բոլորը բոլորի հանդեպ բարի ու ջերմ են, հյուրընկալ ու երջանիկ: Երևանում այդ տոնը նշելը սկզբում հետաքրքիր էր, ու մեծ սպասումներ կային, բայց ինչպես միշտ, իմ բախտը չբերեց, ու սպասումներս նորից չարդարացրին իրենց:

Մի խոսքով, գրեցի առաջին կուրսի ուսանողի կարոտի մասին, որ երևի զգում են շատերը: Գրեցի նրա մասին, որ ինձ նման մարդկանց համար դժվար է իրենց փոքրիկ գյուղից, կամ հեքիաթային քաղաքից հետո սիրել Երևանը ու հարմարվել նրա ռիթմին, նրա ամեն օրվա նորության ու ոչ միշտ ժպտերես ու բարև տվող մարդկանց: Վերջ:

Յ.Գ. Այնքան կուզեի տեսնել իմ ուսուցիչների դեմքերը, երբ կարդան, որ ես կարոտել եմ դպրոցը (դա ֆանտաստիկայի ժանրից էր)...

Նանե Եղիազարյան

Զինվորի ընկերուհու անկեղծ խորհուրդներ

Բանակի մասին շատ են խոսում. հայոց զինվոր, զենքեր, հայրենասիրություն, հայրենիքի պարտքը տալ... Իսկ բառն իր ամբողջ էությամբ հասկանում են միայն սպասողներն ու սպասՎողները: Բանակը դառնում է մի մարդ ու վերաիմաստավորվում: Էդ գրողի տարած «դեմբլերն» ես քաշում հեռախոսիդ մեջ, ու սկսում են 2, կյանքիդ երևի ամենաաթրեսային ու տխուր տարիները: Ու, որպես «վաստակավոր» զինվորի ընկերուհի, էկել եմ՝ փորձառությունս պատմելու ու մի քանի խորհուրդ տալու:
Խորհուրդ առաջին. երբեք մի սկսիր հարաբերություններ դեռ բանակ չգնացած տղայի հետ: Իսկ եթե արդեն էդ վիճակի մեջ ես...
Բանակը սկսում ա էն օրից, երբ վերջին անգամ գրկում ես, արցունքներով ամբողջ վերնաշապիկը թացացնում ու քեզնից գոհ ճամփում ծառայության: Փքված աչքերով ու ներքին հպարտությամբ՝ վերջը զինվորի ընկերուհի ես, կապ չունի, որ նոր շարժվեց մեքենան: Դուք՝ որպես հասուն մարդիկ, ձեր արևին արդեն պատկերացնում եք՝ ինչ դժվար ա լինելու, իրար երդումներ եք տվել, որ ինչքան էլ բարդ ու ցավոտ լինի՝ կդիմանաք, ու կսպասես իրեն: Բայց բաներ կան, որ մինչև մաշկիդ վրա չզգաս, ոչ հասկանալ կարող ես, ոչ էլ պատկերացնել: Հեռավորության վրա հարաբերությունները հենց էդ «բաներից» մեկն են:
Սկզբից հավես ա: Ընկերուհիներդ քեզ են ձեռք առնում, դու՝ իրենց:
- Բա իմ մարդը գնա բանակում ծառայի, «պախատ լինի», որ դու ստեղ իմ սիրած շամպունո՞վ գլուխդ լվանաս,-անընդհատ ու ամեն առիթի կկրկնես ու կզարմանաս, թե էդպես հումորով ում ես քաշել:
Հետո դանդա՜ղ հումորը գլխիդ սև կլինի, որովհետև հանկարծ սկսելու ես դատարկություն զգալ ու անտանելի կարոտել: Սկսում ես հիշել իր ցանկացած հպումը, ասած բառերը, ապուշ ու ցինիկ հումորները, ուշանալուդ պատճառով նվնվալը, հոտին ես կարոտ մնում, երեխայական կռիվներին... Իր հետ կապված ամեն բան ցավ ա պատճառելու: Իսկ դու մազոխիստի պես ձեր նկարներն ու ղզիկ տեսանյութերը օրվա մեջ երևի մի 100 անգամ կնայես, հետո կպաչես հեռախոսիդ էկրանը (իբր իրեն), ու տեսադարանը փակելով դեմբլեր կմտնես: Թու, հլը 0,000013% ա անցել...
Փլեյլիստդ համալրվում ա «Թռչեի մտքով տուն», «Վեր կաց, եղբայր իմ» ու նման երգերով, բառապաշարդ՝ անվանականչ, օրապահ, նարյադ, պոլկ, կարաուլ... Քեֆերին՝ զինվորի կենացը խմելիս, անտարբեր չես նստում ու սպասում՝ երբ են երգ միացնելու, հելնես, մարդավարի պարես, ընդհակառակը՝ ոտքի ես կանգնում, ներքին հպարտությամբ լսում, թե ոնց են մեծարում զինվորներին, վրա-վրա մի քանի բաժակ էլ գինի ես խմում (ինչո՞ւ ոչ) ու սրբում այտերդ խուտուտ տվող արցունքները:
Որ ասում են՝ ժամանակի ընթացքում հարմարվում ես, չհավատաք: Եթե իրոք մինչև վերջին ատոմովդ էլ սիրում ես իրեն, օր օրի կարոտն էլ ավելի ա շատանալու: Սերն էլ:
Հետո ընկերոջդ մոտ մշակութային շոկ ա սկսելու (գնա՝ գալիս եմ): Բոլորից հեռու, նոր շրջապատ, նոր ապրելակերպ ու օրենքներ, նոր ընկերներ, որ չգիտես ովքեր կլինեն ու ինչ ազդեցություն կունենան իր մարդ տեսակի ձևավորման վրա: Ինքն ուրիշ ուղղությամբ ա փոխվելու, դու՝ ուրիշ... Բանակն իրոք փոխում է, լրջացնում ու ավելի հասուն դարձնում: Ասենք, կարող ա խոսելիս

ասես՝ տկլոր մատ, էլ չծիծաղի: Ու դու նեղվես: Հետո կամաց-կամաց էդ փոփոխություններն էնքան են շատանում ու կուտակվում, որ բանակ ծամփած ընկերոջիցդ գրեթե ոչինչ չի մնում: Միայն էն սիրուն աչքերը, որոնցով աստղազարդ երկնքի տակ էդքան «անկշտորեն» քեզ էր նայում: Շփումը, հատկապես, շատ զույգերի մոտ բարդանում է, էնտեղ շատանում են կարծրատիպերը, քո առջև դրվող արգելքները (դեռ չեմ հասկացել՝ ինչից): Ու եթե մի քիչ ազատ մարդ ես, ինքն էլ մի քիչ խանդոտ, էդ անտանելի ա դառնում: «Ինքը, ախր, առաջ տենց չէր, ուրիշ էր, իդեալական էր, փոխվել ա...»,- կմտածես դու ու կանես ամենամեծ սխալը՝ անընդհատ կբողոքես, կռիվներ կսարքես ու կբաժանվես: Է, փոխվել էր, բա ի՞նչ աներ... Իսկ էստեղ կարևորը համբերատար լինելն ա ու հասկանալը, որ իր համար շատ դժվար ա 18 տարվա շրջապատից կտրվելն ու հազարավոր կիլոմետրեր հեռու ծառայության գնալը: Ժամը 6-ին արթնանալն էլ: Ու հենց էստեղ ա երևում, թե ինչքանով ես «շաքարիկս, ինչքան էլ բարդ լինի, ես քեզ չեմ թողնի, կսպասեմ» ապուշ բառերիդ տերը: Ու երբ արդեն անտանելի ա դառնում շփումը, ուղղակի պիտի էնքան ուժեղ գտնվես, որ ներողամտաբար ձեռքն էլ ավելի ամուր բռնես (օդային), ու ցույց տաս, որ իրոք կողքին ես: Սերը պայքար ա: Բանակում հարաբերությունները իմունիտետ չունեն. ցանկացած աննշան կռիվ կարող է ուղղակի վերջնականապես փչացնել ձեր շփումը: Իսկ կռիվները քչացնելու ու ընկերոջդ ծառայությունը թեթևացնելու համար ուղղակի պիտի չաքլորանաս (գոնե էդ 2 տարին): Երբեք ու երբեք պիտի չստես կամ չթաքցնես արածդ սխալը, որովհետև եթե հեռավորության վրա էլ չվստահի քեզ, կորած եք: Մեկ-մեկ կոպիտ լինելը չպիտի սկանդալ սարքես, պիտի գիտակցես, որ էդ խեղճ տղան երկու գրողի տարած տարի ոչ աղջկա դեմք ա տեսնելու, ոչ էլ քնքշություն զգալու: Հազարավոր տղաների հետ էդքան ժամանակ միայն «ախպերս», «ընգե», «ապե» և այլ բառերով խոսելուց հետո մի քիչ դժվար ա քեզ «բոքոնիկս» ասելը: Այ, երկու տարին կանցնի, հանգի՜ստ կարող ես սևը տալ՝ ամեն ասած կոպիտ բառի համար:
Եթե շատ սենտիմենտալ ես (ինչը նորմալ ա), գիշերները թանկանոց կրեմ քսիր դեմքիդ, որ ափսոսես կրեմը, քեզ ստիպես չլացել: Եթե ուզում ես ինչ-որ չափով մոտ գտնվել իրեն, սկսիր «Բանակում»-ը նայել, շատ լավ ձև ա: Բանակ գնալուց առաջ օրագիր նվիրիր, որ գլխով անցածը, զգացածը էնտեղ գրի, դու էլ էստեղ քոնը պահիր. գրելը կօգնի թեթևանալ ու կռիվներ չսարքել, երբ ինչ-որ բան սրտովդ չլինի: Ես համոզված եմ, որ հարաբերություններն ավելի լավը դարձնելու ջանքերդ ու դժվար պահին կողքին մնալդ մի օր գնահատելու ա, ու քեզ էլ երբեք բաց չթողնի:
Սիրելի, հարգելի, պաշտելի (չէ, պաշտելին միայն մեկն ա) զինվորներ, դուք էլ փորձեք ձեր ընկերուհիների դրության մեջ մտնել: Հասկացեք, որ իրենց կյանքը ձեզնից հեռու մեկ ա շարունակվում ա, մեկ ա իրենք անընդհատ սեր ու ջերմություն ստանալու պահանջն ունեն, ու եթե սիրված, գնահատված զգան իրենց, ձեր պահանջներից ու խնդրանքներից շատ ավելին կանեն ձեզ համար:
Աղջիկներն ավելի հիշաչար են ու ավելի զգայուն: Զգույշ ընտրեք ձեր բառերն ու գործողությունները. ներելը՝ կներեն (երևի), իսկ այ, մոռանալ... Եվ բացի այդ, ինչքան էլ գիտակցեն, որ ձեզ համար դժվար ա, մեկ ա՝ անտարբերությունը ծնում ա անտարբերություն:
Ու վերջում մի փոքրիկ հավելում. ինչքան էլ բարդ ու ցավոտ ա էս ամենը, ու ինչքան էլ մեծ լինի իրարից հեռանալու, իրար կորցնելու հավանականությունը, ես շատ ուրախ եմ, որ մեր սերը էսպիսի դժվարությունների միջով ա անցնում, որովհետև միայն լավ պահերին իրար հետ լինելով՝ էդպես էլ չէինք գնահատի ու

սիրի իրար ամենաիսկական ձևով:

Հ.Գ. Թե հավես անես, նյութս կարդաս, իմացիր՝ սիրում եմ քեզ, հոգուդ ցավը տանեմ: Դիմացի, 30.332809%-ն անցել ա արդեն...

Անանուն հեղինակ

Երկրի ափի մեջ. ճամփորդական օրագիր

Երբևէ այնքան անմիտ ու ինքնավստահ չէի եղել, քան այն օրը, երբ սկսեցի իմ 2 ամիս պլանավորած ճամփորդությունը (Դանիա-Շվեդիա-Նորվեգիա)՝ ունենալով ընդամենը 1 տոմս՝ Ցվիկաու քաղաքից դեպի Դրեզդենի գնացքի կայարան:
Մինչ օրս զարմանում եմ, թե ոնց էինք համարձակվել երկշաբաթյա ուղևորության համար, որը ներառում էր Ցվիկաու-Դրեզդեն-Կոպենհագեն-Մալմո-Ստոկհոլմ-Նարվիկ-Ցվիկաու ուղղությունները, չունենալ մնալու տեղի որևէ ամրագրում, իսկ տոմսերից ունենալ միայն դեպի Դրեզդենինը:
Ինչևէ, ես փայլուն աչքերով էի, գարունը նոր էր սկսվում. դե, նոր էի Հայաստանից տեղափոխվել, ու շորերիս վրայից դեռ չէին մաքրվել գյուղի՝ փետրվարը մարտ ամիս հիշեցնող օրերից դեռևս ինձ մնացած հազիվ նշմարվող կանաչի հոտը, իսկ միտքը, որ ես մեկնում եմ Սկանդինավներ, ինձ հիշեցնում էին այն օրերը, երբ դպրոցում կանգնում էի դասարանի անկյունում, իսկ աշխարհագրության դասատուն ցույց էր տալիս քարտեզից տարբեր կետեր, ու ես պետք է կռահեի, իսկ վերջում հարցնում էր՝ հը՞ն, հիմա ո՞ր երկիրն ես քո ամենասիրելին դարձրել:
Ինչ խոսք, շատ անհավատարիմ ու դավաճան աշակերտ էի, ամիսը մեկ մի նոր երկիր էի շատ ուսումնասիրում ու որոշում, որ ես սիրահարվել եմ (ինչ տխմարն էի, գոնե էդ տարիներին Վալենտինը կտոնեի, էլի):
Ինչևէ, ժամանակն էր երբեմնի սերերիս այցելելու:
Էլի մի ամբողջ գիշեր քնեցի ֆլիքսբասում: Մի անհայտ ծագման էակ որոշել էր, որ գիշերվա 3-ին տհաճ հոտով ուտելիքներ ուտելը լավ գաղափար է, իսկ քնելիս ինձ վրա գլուխը հենելը՝ կատարելությանը հասնելու միակ ուղին:
Ուղևորությունը պահի տակ ընդհատվեց, ինչ-որ փակ տարածք էինք մտել, որից մի 3 ժամ քնած մարդը հազիվ էլ թե գլուխ հաներ: Իջանք բասից ու սկսեցինք բարձրանալ տարօրինակ աստիճաններով: Պարզվեց, մտել էինք նավ ու 2 ժամ Բալթիկ ծովի վրա պետք է անցկացնեինք: Ես աղոտ հիշում էի, որ երբևէ չեմ դավանել հեթանոսություն, բայց չգիտես ինչու՝ մի 10 րոպե մտքումս գոռում էի. «Աստվածնե՛ր, ինչի պետք ա նավերից վախեցողին ասեին, որ ինքը 2 ժամ պետք ա մնա բաց ծովում»:
Վերջապես երևաց դանիական դրոշը, ու ես Դանիայում էի, էն լեգոների երկրում, որի անունը ինձ հանդիպած բոլոր գրքերում մարկերով ընդգծել էի, որի թաց կանաչն ինձ աշխարհագրության գրքերի հոտն էր հիշեցնում, որի մայրաքաղաքում ես ինձ զգում էի ոչ թե ձուկը ջրում, այլ հենց ջուրը՝ որպես օվկիանոս:
Էդքան քաղցր ու ժպիտով ազգ դեռ չէի տեսել, անընդհատ ժպտում էին, ցանկացած հարցով օգնում, ստիպում էին,որ սիրահարվես...
Կոպենհագենում ես առաջին անգամ կորա: Տարօրինակ ցանկություն էր միշտ մեջս առաջանում. մի կողմ դնել քարտեզը և ուղղակի սրտիս թելադրածով քայլել, մի երկու հատ կրուասան առնել ու գնալ առաջին իսկ պատահած կամրջի վրա նստել ու ամեն անցորդի մասին փորձել կարծիք կազմել՝ ելնելով դիմագծերից:
Էդ կամրջին նստած էի, երբ մի

աշտարակ նկատեցի հեռուներում ու որոշեցի, որ պետք է բարձրանամ ու էդտեղից քաղաքը վայելեմ: Խարխուլ փողոցներով մեկ ժամ տևած ճանապարհից հետո, մի կղզուց մյուսը չհասկանալով անցնելուց հետո, վերջապես հասա նպատակակետիս:
Բայց նորից հիշեցի, որ ես անմիտի մեկն եմ: Ախր, ո՞վ էր տեսել Եվրոպայում երեկոյան ժամը 6-ին բաց եկեղեցի, քիչ չի, մի հատ էլ` կողքի աշտարակը բարձրանալու հնարավորություն: Շատ էի նեղվել, երևի թե անգիտակցաբար մի քանի անգամ նույն ճանապարհով անիմաստ քայլեցի ու վերջապես գլուխս վեր բարձրացրի:
Մթնում էր, ու ես չգիտեի, թե քաղաքի որ մասում եմ: Ինձնից գոհ հանեցի հեռախոսս, որ հասկանամ, թե ուր եմ գնում, ու 10%... Ես նորից հիշեցի, որ հեթանոս չեմ եղել երբևէ, բայց «աստվածներ» ասելուց հետո, քարացած կանգնել էի անհայտության եզրին, և ունակ էի էնքան բարձր գոռալու, որ Կոպենհագենի կենտրոնից հասկանան, որ օգնության կարիք ունեմ:
Միակ բանը, որը կարողացա ինքս ինձ հասկանալ, դա այն էր, որ ես քաղաքի արևմուտքում եմ, ու պետք է քայլել, շատ արագ քայլել: Բարեբախտաբար ճիշտ էի գնում, անընդհատ զգում էի, որ մոտենում եմ կենտրոնին: Ինձ մոտ էդ բնազդը միշտ ուժեղ էր, քաղաքների կենտրոնները աչքերս փակ էլ զգում էի, թե որ ուղղությամբ կլինեն: Ու հենց էդ զգալու գաղափարը, ու էն, որ ես 2 ժամ նավով ծովում եմ եղել ու հաղթահարել եմ վախս, ինձ ուղղակի տանում էին առաջ: Վերջապես մի զույգ տեսա, բարի-բարի հարցերիս պատասխանեցին, ու պարզվեց, որ ես էդ անտեր հյուրատան անունը սխալ եմ հիշում: Էդ կրկնակի շոկ էր, որ ես քաղաքի կենտրոն հասնելուց հետո էլ նույնիսկ չգիտեի, թե ուր գնալ:
Անընդհատ մի կղզուց մյուսն էի անցնում, հետ էի նայում, ժպտում, հասկանում, որ ես իրոք ադրենալին եմ ստանում էս ամենից, հիշում, որ ի վերջո, հենց էս է ինձ մեծացնելու, ու էդպես մեծանալով, բայց փոքրացող քայլերով գնում էի առաջ: Չերկարացնեմ, ի վերջո երեկոյան ուշ գտա իմ մնալու տեղը, ես երջանիկ էի ու... Ոչ թե նրա համար, որ գտա, այլ նրա համար, որ ես անցա էդ ճամփով: “The Mountain between us” ֆիլմն էր մտքիս, թե ոնց էին անհայտ լեռներում երկու անծանոթ մարդ դեգերում` վայելելով էդ լեռների անտանելի սիրունությունը ու վերջում գտնում ճիշտ ճանապարհը:
Իսկապես, ես խելառ ու հիմար էի: Բայց քանի՞ անգամ ենք մենք հիշում էն օրերը, երբ մենք «նորմալ» էինք:
Բայց ես զգացի Կոպենհագենը: Էդ քաղաքը քեզ պետք է կուլ տա, որ դու ներսից տեսնես իր բարությունը, պետք է էդ քաղաքում շենքերին չնայես, պետք է էդ շենքերի մեջ քո պատկերը գտնես ու նայես, որ քեզ հասկանաս: Պետք է դուրս գաս քեզանից, որ դատարկվես, որ մաքուր քաղաքի մարդասեր ժպիտները դատարկությունդ լցնեն, իսկ դու քեզ վերադառնաս միայն կեսիդ չափով, բայց էն կեսիդ, որն ամեն դժվարությունից առաջացած մաղձը դուրս է նետել բաց օվկիանոսի մեջ, ու հիշես, որ էդ քաղաքում դու քեզ չէիր էլ զգում ջուրը` որպես օվկիանոս, այլ ջուրը` որպես քո մտքերի մաքրման միջոց:
Իմ հուշերի մեջ շատ բան դաջեց էդ քաղաքը: Ես երբևէ էդքան իրականությանը առերեսված չկայի: Ես վախի նոպայով ինձ հետ էի պահել մի բանից, որը կոչել եմ կոպենհագենյան իրականություն: Ես գտել էի վերջապես էն կետը, որը միշտ քարտեզի վրա հեռվից հեռու գտնում էի: Ես գտել էի, որ էդ քարտեզի առաջ եթե ես կանգնեի մի քանի տարի ու հպարտանայի, որ ակնթարթում գտնում եմ իմ ուզած երկրները, ես առաջ չէի գնա, այլ միայն կբոյովանայի, իսկ էդ կետին հասնելու համար մի հասարակ քայլ էր պետք: Դրա համար էլ մինչ օրս ցանկացած նոր քաղաքում լինելիս իմ ամենաառաջին նպատակն է` քայլել այդ քաղաքում նվազագույնը 30 կիլոմետր մեկ օրվա ընթացքում:
Սկզբից ուզում էի ամբողջ ճամփորդության ընթացքը գրել, բայց հետո հասկացա, որ մտքերս թաքնված քարանձավից դուրս եկան, ես էլ անթաքույց կերպով ապրած օրերս գրչով թղթին հանձնեցի, որ էդ քարանձավը ինչքան էլ փակվի, տարիներ հետո թղթերը մի ակնթարթում բացեն:
Ես հասկացա, որ մտքերս շատ են, իսկ շարունակությունը` չգիտեմ էլ երբ, բայց օրերից մի օր կգրեմ:

Հայկ Քալանթարյան

Ինչքան օտար, նույնքան էլ հարազատ

Բարև,
Գրում եմ տանից 3780 կիլոմետր հեռավորության վրա, օտարության մեջ՝ Պունե, Մահարաշթրա, Հնդկաստան, ու դե իհարկե, կարոտը սրտումս, բայց մեկ է, տանը: Պարադոքս կթվա, բայց արդեն սովորական բան է:
Էստեղ ամեն ինչ տարբեր է, ամեն-ամեն ինչ: Նույնիսկ տրանսպորտն է հակառակ կողմից:
Էստեղ ես չեմ կարող ազատ, երբ սիրտս տա, դուրս գալ եղևնիների տակ քայլել, որովհետև նախ ապահով չի, հետո ժամանակ չունեմ, ու հա, մեկ էլ եղևնիներ չկան: Փոխարենը՝ ջունգլիներ են, որոնք արդեն հարազատացել են:
Ժամանակն էլ է տարբեր: Ճիշտ է, մեծ չի տարբերությունը, բայց մեկ է, տարբեր է: Ու որ ամենակարևորը՝ էստեղ մամա չկա, որ ինձ ամեն առավոտ արթնացնի, ես էլ ասեմ.
- Է՜, մամ, լավ էլի, թող մի քիչ էլ քնեմ:
Ինձ էստեղ հիմնականում արթնացնում են տանիքիս վրա վազվզող կապիկները:
Էստեղ մամայի եփած համով ճաշիկներն էլ չկան: Փոխարենը, կան տարօրինակ անուններով ուտելիքներ, ու հա, երևի հասկացաք, որ դրանք էլ են հարազատ դարձել:
Մեկ էլ կա Լիլիթը, ում հետ միշտ փորձում ենք համով բաներ պատրաստել, դե իհարկե, չի ստացվում, բայց մենք մեզ համոզում ենք, որ «տուն տանելու աղջիկներ ենք»:
Կա լիքը-լիքը կարոտ ու էմոցիաներ, որոնք հաճախ չեմ կարողանում կառավարել: Էստեղ լսում եմ երգեր, որոնք տանը հաստատ չէի լսի, ու եթե նույնիսկ ինչ-որ մեկը լսեր, կամ կխնդրեի, որ անջատեն, կամ էլ ականջակալներս կդնեի, կսկսեի իմ երգերը լսել: Հա, ու ասեմ, Թաթայի երգերի մեջ էլ շա՜տ հարազատություն կա: Դե կարոտն է, ի՜նչ կարող եմ անել:
Մի սենյակում ապրում եմ Մեքսիկայից, Սլովենիայից ու Հնդկաստանից սենյակակիցներիս հետ, ովքեր արդեն դարձել են քույրեր, և ում հետ ամեն շաբաթ կիրակի փոփքորն ենք սարքում ու Նեթֆլիքս նայում, որ ցրվենք դասերի թոհուբոհից:
Ամեն առավոտ դասի գնալու ճանապարհին, ծանոթ մարդկանց տեսնելիս չեմ ասում «Բարև», էստեղ բարևին փոխարինում է «Նամաստե»-ն: Ճիշտ է, դա էլ է հարազատ դարձել:
Հնդկաստանը էն Հնդկաստանը չի, որը պատկերված է հնդկական սերիալներում, և որոնք մեր պապիկ-տատիկները մեծ հետաքրքրությամբ նայում են: Թաջ Մահալից բացի, էստեղ շատ ու շատ սիրուն բաներ կա տեսնելու:
Համարյա 7,5 ամիս էստեղ ապրելու ընթացքում հասցրել եմ տեսնել անթիվ անհամար տաճարներ ու թագավորական պալատներ, փորձել եմ մրգեր, որոնց անունն էլ չգիտեի, հանդիպել եմ մարդկանց, ում փոքր ժամանակ ես ու մանկությանս ընկերները, եթե հանդիպեինք կասեինք՝ «հելոներն» են: Էստեղ տեսել եմ աշխարհի ամենասիրուն ու ամենատպավորիչ արևածագերն ու մայրամուտները, չնայած, ո՞ր արևածագը կամ մայրամուտը չի տպավորիչ: Արշավ չի եղել քոլեջի կողմից կազմակերպված, որ բաց թողնեմ: Ունեցել եմ անթիվ, անհամար քննարկումներ տարբեր թեմաների շուրջ:
Երբեք չէի պատկերացնի, որ 17-ամյակս կնշեմ տանից շատ հեռու, մի բլրի վրա (քոլեջիս ֆիզիկական տեղակայմանը էդպես ենք ասում), ընկերներիս հետ, էնպիսի երկրներից, ինչպիսիք են՝ Մեքսիկան, Սլովենիան, Հնդկաստանը, Նիկարագուան, Սիրիան, Չինաստանը, Նամիբիան, Տաջիկստանը ու էլի շատ երկրներ:
Չէի պատկերացնի, որ մի սենյակում կունենամ իմ անկյունը՝ զարդարված սպիտակ լույսերով ու ընկերներիս նկարներով, որպեսզի թեկուզ նկարներից կարողանամ կարոտս առնել:
Երբեք չէի պատկերացնի, որ ուսուցիչներիս անունով կդիմեմ ու դասերից հետո թեյ կխմեմ իրենց հետ: Կամ չէի պատկերացնի, որ 16 ժամ գնացքով ճամփորդելիս, մեր դպրոցի Գլոբալ քաղաքականության դասատուին կպատմեմ Ապրիլյան հեղափոխության ժամանակ ունեցածս արկածների մասին:
Չէի պատկերացնի, որ կանցնեմ էնպիսի առարկաներ, որոնց մասին երազում էի Հայաստանում սովորելու ժամանակ, օրինակ՝ Ֆիլմ կամ Հոգեբանություն: Հա ու մեկ էլ չէի պատկերացնի, որ իմ դպրոցում կլինի ուսուցիչ, ով համագործակցում է ՆԱՍԱ-ի հետ:
Շատ կուզեի էս փորձը կիսել ընթերցողներիս հետ, բայց դեռ տեխնիկան էդքան չի զարգացել:
Չգիտեմ՝ էլ ինչ գրեմ: Մի բան հաստատ գիտեմ՝ ես տանն եմ, ինչքան էլ տանից հեռու եմ:
Էս ժամանակը աճելու, կրթվելու, զարգանալու ու ավելի ինքնուրույն դառնալու ժամանակ է: Հա, ու արդեն մի քիչ ինքնուրույն եմ. առաջին անգամից հետո Երևան-Շարժա-Մումբայ, հետո էլ 5 ժամ դեպի քոլեջ ճանապարհը կարողանում եմ մենակ անցնել առանց վախենալու:
Անչափ հպարտ եմ, որ ունեմ հնարավորություն ներկայացնելու հայրենիքս օտարության մեջ, ինչը բավական մեծ պատասխանատվություն է: Ճիշտ է, դրսում հայ աղջիկ լինելը շատ դժվարություններ ունի, բայց, իհարկե, հաղթահարելի դժվարություններ են:
Դե ինչ ասեմ, գնամ հոգեբանությանս թեստի համար պարապելու:
Երբ նորից մաման զանգերիս չպատասխանի, ես էլի կուզեմ զգացմունքներս արտահայտել ու կգրեմ հոդված:
Մամ, դե պատասխանի, էլի՜...

Մարիամ Միքայելյան

Տարվա վերջին նյութս, բայց առաջին անգամ բանակից

Չգիտեմ՝ որ նախադասությունից, որ բառից կամ մտքից սկսեմ գրել: Որտեղից գրեմ, որպեսզի լինի կարճ, հակիրճ, հասկանալի, խնդիրն այն է, որ պատմելու շատ բան կա, բայց նաև՝ քիչ ժամանակ:
Ուզում եմ սկսել հենց նրանից, որ առանց ոչ մեկին զգուշացնելու, առանց ցտեսություն ասելու անսպասելիորեն մեկնեցի զինվորական ծառայության:
Նախատեսված օրվանից՝ մեկուկես տարի անց, նույն 2019թ. ամռանը՝ հուլիսի 24-ի երեկոյան իմացա, որ պետք է գնամ պարտքս տալու, իսկ գնալուս օրը՝ հուլիսի 26: Երևի արդեն պարզ է, թե ինչու առանց ոչ մեկին նախազգուշացնելու, որովհետև կար ընդամենը մեկ օր պատրաստվելու համար, իսկ երկրորդ օրն արդեն՝ բարի ծառայություն: Սա է այն գլխավոր պատճառը, որ մինչև հիմա չես կարդացել իմ նյութերը, տեսել ֆոտոները և, ի վերջո, անպատասխան են մնացել քո նամակները:
Հուլիսի 28, օր, երբ արդեն պարզ էր, թե ես ուր եմ ընկել և որտեղ եմ անցկացնելու իմ ծառայությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Մարտակերտ, 5-րդ Պաշտպանական շրջան:
Առաջին անգամ դարպասներից այն կողմ որ մտա, կարծես գունավոր կյանքից տեղափոխվեի մեկ այլ՝ ուրիշ կյանք, որտեղ գույները երեքն են՝ կանաչ, դարչնագույն և սպիտակ: Դրանք գույներ են, որոնք ամենուր են՝ հագուստից սկսած մինչև շինություններ:
Մինչև զինվորական երդում տալու արարողությունը ծառայությունը նման էր ճամբարի, որտեղ դու օրվա յոթանասուն տոկոսը անում ես շարային պատրաստություն՝ ճիշտ կանգնել, քայլել, աջ-ձախ դարձ, ու թվում է, թե երդման արարողության ժամանակ կգան ընտանիքիդ անդամները, հետո իրերդ կհավաքես և կգնաս տուն: Բայց դե չէ, այդ ամենից հետո, երբ վերադառնում ես, տեսնում ես, որ չէ, ամեն ինչ լուրջ է, ի՞նչ ճամբար: Դու արդեն տվել ես հայրենիքդ պաշտպանելու երդում, ունես քեզ կցված զենք և, ինչու չէ, նաև պատիվ՝ սահման պաշտպանելու: Արդեն սկսում ես խորանալ մարտավարական, մարտավարամասնագիտական առարկաների, մասնագիտական զենքի, ֆիզիկական պատրաստության և ցանկացած դժվարություններ հաղթահարելու ուղղությամբ: Առավոտյան 06:40՝ մարզանք, մութ, առանց վերնաշապիկի, 3կմ վազք, մարմնամարզություն, քամի, հետո արագ անկողինների հարդարում, լվացվել, շարվել դեպի ճաշարան ու՝ ըստ օրվա կարգացուցակի: Եղել են պահեր, երբ հոգնում էի, ասում՝ հոգնել եմ ոչ թե ֆիզիկապես, այլ հոգեպես՝ այս կրկնվող առօրյայից: Հաճախ, երբ չուզելով էի վազում առավոտվա մութ ժամին, սկսում էի ինքս ինձ հետ զրուցել: Տրտնջում էի՝ ինչո՞ւ, սա, ախր, լավ չի է, շատ երկար ա: Գոնե էսօր չվազենք կամ քիչ մարզվենք: Բայց մի օր հասկացա, որ վազելը դարձել է հասարակ մի բան: Ու նաև հասկացա, որ ցանկացած դժվարություն հաղթահարելի է, պետք է միայն ժամանակ: Հետո, ինչու չէ, նաև սկսում ես լավ զգալ, որ ֆիզիկական տվյալներիդ մեջ առաջընթաց կա: Դե չասեմ նաև այն, որ հենց այդ առավոտյան մարզանքները, տքնաջան պայքարելը և լավ արդյունքին ձգտելն էր, որ քննության ժամանակ հանձնաժողովի կողմից բարձր գնահատվեց… Այդ ժամանակ հասկանում ես, թե ինչու պիտի առավոտյան հաղթեիր ծուլությունդ ու վազեիր:
Բանակը դա մի վայր է, որտեղ դու անցնում ես փուլեր, ու այդ փուլերը քեզ տալիս են պայքարելու և նպատակին հասնելու կարողություն: Հասկանում ես, որ «չեմ կարողանում» չկա, այլ կա «չեմ ուզում»: Գնահատում ես քաղաքացիական կյանքը, և ինչու չէ, նաև սկսում են հեշտ թվալ մի շարք խնդիրներ, որոնք ժամանակին համարել ես իբր թե չլուծվող: Եթե առաջ 09:45 մի կերպ եմ արթնացել, որ գնամ դասի, հիմա արթնանում եմ 06:20, արագ ու 45 վայրկյանում հագնվելով: Երբ գնում էի համալսարան, սմարթֆոնի և իմ դիմաց դրված թղթերի ու մատիտների օգնությամբ գծագիր էի գծում ու գալիս տուն, ասում էի՝ ի վիճակի չեմ, հոգնած եմ, չեմ կարող դաս անել, իսկ էստեղ այդ վաղ առավոտյան մարզանքից հետո, ոչ թե սմարթֆոնով, այլ ամենապարզունակ ֆունկցիաներով հեռախոսով, որով մեկ տառ գրելու համար պետք է կոճակը սեղմես գոնե 3 անգամ, ոչ թե քո ուզած, այլ զինվորական հագուստ, ու ոչ թե բոթասներ, այլ մեծ ու

ծանր սապոգներ հագած, և, ամենակարևորը, ոչ թե նստած աթոռին՝ կարկինը ձեռքիդ, այլ փորի վրա պառկած հողին, զենքը ձեռքիդ ու սողեսող առաջանում ես դեպի նշված վայրը: Ու այդպես մինչև օրվա ավարտ:
Դե արդեն երևի պատկերացրեցիք, թե ինչպես կշարունակեմ ուսումս բանակից հետո: Այո, միանշանակ առանց ալարելու կամ ասելու, թե հոգնած եմ, չեմ կարող դաս անել: Բանակում ես դառնում տղամարդ, քո ստեղծած հարցին տալիս քո ստեղծած լուծումը, և եթե ամեն ինչ ճիշտ ես արել, ապա սկսում ես լավ զգալ, որ ճիշտ քայլ արեցիր: Իսկ հակառակ դեպքում՝ դաս քաղում, չկրկնում հաջորդ անգամ, և նաև բոլորից հեռու ու միայնակ լինելով, ճանաչում ես քեզ: Բանակային կյանքը նաև ինչ-որ տեղ նախապատրաստում է քեզ քո ապագա կյանքին: Այնպես չէ, որ ծառայության ընթացքում սովորածդ պետք է միայն այդ երկու տարվա համար: Այդ երկու տարվա փորձը կարող է պետք գալ նաև այն ժամանակ, երբ կունենաս ընտանիք ու, հարկ եղած դեպքում, գիշերը չես քնի կամ առավոտյան շատ շուտ կարթնանաս, որպեսզի կարողանաս վաստակել օրվա հացդ և պահես ընտանիքդ: Եթե անկեղծ խոսենք, ես չեմ ցանկացել ծառայել: Ոչ թե այն պատճառով, որ ուղղակի չեմ ուզել կամ վախեցել եմ, ինչպես երևի հիմա ոմանք մտածեցին: Չէ, ես սահմանամերձ գյուղից եմ, ու ներկայիս զորամասից, որտեղ ծառայում եմ, դիրքերը չեն երևում, մինչդեռ իմ տան հյուրասենյակից երևում էին ադրբեջանական դիրքերը, որտեղից ամեն պահի կարող էր կրակ բացվել ու հաճախ էլ բացվում էր:
Իսկ չէի ուզում ծառայել, որովհետև այս երկու տարվա ընթացքում կարող էի ուսումս շարունակել, խորանալ մասնագիտությանս մեջ և նման մի շարք բաներ... Բայց բանակ գալուց հետո փոխել եմ կարծիքս: Հիմա վստահ եմ, որ այս հինգ ամիսներն ինձ այնպիսի բաներ են տվել, որոնք շատ կօգնեն ողջ կյանքում: Դժվարությունները հաղթահարելուց հետո է կյանքը դառնում հաճելի ու հեշտ, եթե չանցնես այդ ամենի միջով, անգամ այդ հաճելի և հեշտ կյանքը քեզ կարող է թվալ վատ ու ձանձրալի:
Գալիս է մի պահ, որ ոչ բանակի առօրյան, ոչ անհարմար հանդերձանքը, ոչ մազերիդ բացակայությունը, ոչ էլ մի ուրիշ բան, անսովոր չեն թվում: Բայց այստեղ է, որ քեզ այցելում է կարոտը: Կարոտ՝ քո բակում աճող ծառի, աղմուկի, քաղաքի քո ամենասիրելի փողոցի և ամենակարևորը, քո հարազատների հանդեպ: Գիտեմ, կարող է ծիծաղելի թվալ, բայց զորամասի խանութում աշխատող կնոջը նմանեցրել եմ տատիկիս, նայել իրեն՝ հիշել տատիկիս: Քիչ էր մնում գնայի, այդ անծանոթ կնոջից իրեն գրկելու թույլտվություն խնդրեի: Անծանոթ մարդկանց սկսում ես նմանեցնել մտերիմներիդ, ու ամեն իրենց տեսնելիս հիշում տվյալ ծանոթիդ, որ թվա, թե տարածքում հարազատ մարդ կա: Երբ փոքր երեխա էի տեսնում, ուզում էի հետը խաղալ, քաղցրեղեն նվիրել ու հարազատի հետ շփվելու պակասը լրացնել: Այսպես անցկացրեցի ուսումնական գումարտակի հինգ ամիսները և վերադարձա տուն՝ տասը օր արձակուրդ: Հիմա արձակուրդիս վերջին օրն է: Մնացած օրերը ինձ համար եղել են շռայլին, անսովոր, ու էնպիսի տպավորություն էր անգամ, որ ես իմ ամբողջ կյանքում բանակում եմ եղել: Արձակուրդիս երրորդ օրը միայն ամեն ինչ ընկավ իր տեղը: Չկար էնպիսի օր, որ մեր տուն հյուրեր չգային: Ինչ խոսք, հաճելի էր: Ուզում էի ժամանակը կանգնեցնել, բայց դե անհնար է, անցնում է ու մի բան էլ երկու անգամ ավելի արագ, քան զորամասում: Բայց ինչքան էլ արագ անցներ, մեկ է, ես որոշել էի, որ պետք է մի օր հատկացնեմ Բաղանիսից Երևան գալուն. այցելել համալսարան, տեսնել քաղաքի ծանոթներիս, քայլել ամենաշատ քայլածս փողոցով, որտեղ հինգ ամիս չէի քայլել:
Արձակուրդիս վերջին օրն է, այսինքն օր էլ չկա արդեն, կեսգիշերն անց է, բայց դե չէի կարող չգրել: Մի քանի ժամից լույսը կբացվի, ու ես կգնամ: Շատ հնարավոր է անգամ չկարողանամ տեսնել իմ նյութը կայքում տեղադրված, բայց ինձ թեթևացած եմ զգում հիմա, որ գրեցի, կիսվեցի և որոշ չափով պատմեցի: Էլի կան պատմելու բաներ, զվարճալի պահեր, բայց ռազմական գաղտնիք ասածը պահպանելով, ուզում եմ հենց էս նոտայի վրա էլ ձեզ «հաջող անել»:
Ինձ սպասվում է մեկ այլ ծառայություն, որի անունն է մարտական հերթապահություն՝ դիրքեր: Այդ ծառայությունը տարբերվելու է իր բնույթով, լրջությամբ և պատասխանատվությամբ, և իհարկե, հպարտությամբ ես գնում մի զորամաս, որտեղ Քառօրյայի ժամանակ քաջարի մահով են ընկել Ռոբերտ Աբաջյանը, Քյարամ Սլոյանը, Արմենակ Ուրֆանյանը, Անդրանիկ Զոհրաբյանը և մի շարք առյուծ տղաներ, որոնց սխրանքների շնորհիվ է, որ այսօր մեր դիրքերն անառիկ են:
Չգիտեմ հաջորդ անգամ երբ կգրեմ, մյուս արձակուրդի՞ն, մինչ արձակո՞ւրդ, թե՞ ծառայությունն ավարտելուց հետո, բայց մինչ այդ ու մինչև զորամաս գնալս ուզում եմ ասել, որ երկիրը սահմանից է սկսվում, իսկ սահմանը հենց այն գոտին է, որտեղ դու պարտքդ ես տալիս և պաշտպանում քեզ, հարազատներիդ, ընկերներիդ, ընկերուհուդ և ի վերջո, հայրենիքդ, որը երկու տարի անց պիտի շենացնես արդեն քո ստեղծարար աշխատանքով:

Սերյոժա Առաքելյան

Ֆրանսիական օրագիր

Հունվարի 12-ին, ֆրանսիականի 29 ուսանող պարունակող ինքնաթիռը վայէջք կատարեց Փարիզի Շառլ դը Գոլ օդանավակայանում: Մենք եկել էինք պատրաստված, երկար այստեղ գալու մասին մտածած ու այս օրվան սպասած: Պատմությունը սկսվում է այնտեղից, որ ՀԲԸՄ-ը մեր համալսարանի մի շարք ուսանողների ֆինանսավորում է՝ Ֆրանսիայում, Շվեյցարիայում և Բելգիայում պրակտիկա անցնելու համար: Այս համագործակցությունները ձեռք են բերվել երկար տարիների ու մեծ աշխատանքի շնորհիվ, իսկ հիմա մենք տեսնում ենք դրա թեթև ու պարզ մասը: Մեզ ուղարկում են աշխատանքի հայտարարություններ՝ տարբեր կազմակերպություններում ու տարբեր քաղաքներում: Մենք ընտրում ենք, թե դրանցից որոնց ենք համապատասխան, որոնք են մեզ դուր գալիս, ու դիմում ենք: Դիմելու գործընթացի մեջ մտնում է մոտիվացիոն նամակ գրելն ու լավ ինքնակենսագրական ներկայացնելը: Համալսարանում անցկացված հարցազրույցների, մեր նամակների ու գնահատականների արդյունքում էլ կազմվում է այն ցուցակը, որը որոշում է, թե ով որտեղ է աշխատանքի ընդունվել: Էդպես էլ 17-ցիներից երեք հոգի նույն ինքնաթիռում հայտնվեցին նույն քաղաքում ստաժավորման գնալու:

***

Աշխատանքային ամեն շաբաթվա ավարտին հաջորդում են երկու մշակութային օր, որոնց ընթացքում փորձում ենք այցելել որքան հնարավոր է շատ թանգարան կամ ցուցադրություն: Ու հավատացեք, երկու օրը շատ քիչ է այդ ամենի համար: Մեկ օրում չհասցրինք տեսնել այստեղի ամենահայտնի Օրսե թանգարանի բոլոր կտավներն ու քանդակները:
Ու չնայած ամեն օրվա երեկոն անցկացնում եմ ընկերներիս հետ, միևնույնն է, երեկոյան, երբ գործից հետո նստեմ հետդարձի մետրոն, էլի կսկսեմ փնտրել մի ծանոթ հայացք, աչքեր, խոսք, ինչու չէ՝ քիթ: Մի նշան, որն ինձ կհուշի, որ դիմացինս հայ է: Երբեք չէի մտածի, որ կարոտը կարող է այսպես դրսևորվել: Ամեն անգամ փորձում եմ ճանապարհս այնպես գծել, որ անպայման անցնեմ հայ ուսանողների հանրակացարանի մոտով, որ կարդամ հայերենով գրված «Հայ ուսանողների տուն» գրվածքն ու ինձ էլի մի քիչ մոտ զգամ հայրենիքիս: Դժվար է տնից հեռու ապրելը: Համենայնդեպս, ես շատ եմ կարոտում:
Ըհը, այս շաբաթն էլ վերջացավ: Մնաց հինգը:

***

Տպավորիչ բաներից պիտի խոսեմ Նուբար Փաշայի հիմնած գրադարանի մասին, որը Փարիզի կենտրոնին մոտ մասում է, կարելի է ասել սրտում (սիրտն էլ ուղիղ մեջտեղը չի, դե): Ներկայիս տնօրենի անունն ու ազգանունը չեմ հիշում, չնայած հատուկ հարցրել էի: Շատ հետաքրքիր մարդ էր, երևի իդեալական էր իր գործի համար: Էնքան կյանք կար էդ մարդու մեջ, էնքան էր հպարտանում իր պահած գրադարանով: Պատմեց գրադարանի սենյակների կառուցվածքից, ասաց, թե ոնց են գիրքը գտնում իր «հասցեով», ցույց տվեց արխիվից նկարներ, լուռ հանդուրժեց, երբ մենք չտեսների պես թերթում էինք պատահած ամեն մի գիրք, օրաթերթ, օրագիր: Ամեն ինչին կպել ենք, ամեն դարակ քաշել ենք, ամեն նկարի նայել ենք, հանգի՛ստ եղեք:

***

Այս երեքշաբթի հրավիրված էինք Ֆրանսիայում Հայաստանի դեսպանատուն, որտեղ մեզ դիմավորեցին Ֆրանսիայում Հայաստանի դեսպան տիկին Տոլմաջյանը և Ֆրանսիայում Արցախի ներկայացուցիչ պարոն Գաւրգյանը: Ջերմ զրույցներ, տպավորություններ աշխատավայրերից, համեղ քաղցրավենիք և ֆոտո դրոշի մոտ:

Կարճ ժամանակով մեզ տանը զգացինք։ Հաճելի էր, ինչ խոսք։

***

Գրում եմ Երևանից՝ իմ սիրելի համակարգչով, իմ սիրելի բազմոցին իմ սիրելի դիրքով նստած։ Դեռ ճամպրուկս էլ նույնիսկ չեմ քանդել դասավորել, որովհետև չեմ շտապում, տանն եմ, էլ ի՞նչ կարող է պատահել։ Շնորհակալություն, եթե հետևում էիք մեր ստաժին։ Էդ դեպքում մի քիչ ամփոփեմ ու պատմեմ, թե ինչպիսի մեծ գործ է անում ՀԲԸՄ-ն մեզ համար։
Իսկապես, ամեն ինչ կազմակերպված էր հիանալի։ Նույնիսկ այն, թե ինչպես են մեզ օդանավակայանից տուն ու տնից օդանավակայան տարել, դրա մասին նույնպես ՀԲԸՄ-ն հոգացել էր։ Մենք իսկապես զգում էինք, ինչպես են մեր մասին հոգ տանում ու ուզում, որ մեզ համար միայն լավ լինի։ Ոչ միայն ուզում, այլ նաև անում էդպես։ Ցանկացած հարցով զբաղվում, ցանկացած պրոբլեմի համար լուծում փնտրում։
Այս ստաժը մեզ իրականում մի քիչ ավելին տվեց, քան թե մենք հասկանում էինք։ Տվեց հնարավորություն տեսնելու նոր քաղաք, նոր մշակույթ, ինտեգրվելու, ապրելու այդ մշակույթում ու կարոտելու քոնը։ Սովորեցինք շփվել ավելի շատ մարդկանց հետ, լինել ավելի քաղաքավարի, ավելի գլուխ հանող, ավելի ինքնավստահ, պատրաստակամ ու պատասխանատվությունից չխուսափող։ Կապվեցինք ու բարեկամացանք շատ մարդկանց հետ, ապրեցինք ինքնուրույն, դարձանք ինքնուրույն ու մի քիչ ավելի մեծ, ավելի հանգիստ, կշռադատող, լուծումներ գտնող։ Զարգացանք որպես անձ ու մի քանի արժեքներ երևի վերադասավորեցինք։ Սիրեցինք ու կարոտեցինք, որ հետ գանք ու էստեղ էլ սիրենք ու կարոտենք։ Բայց, կնախընտրենք իհարկե այդպես՝ ապրել Հայաստանում ու ժամանակ առ ժամանակ կարոտել մեր Փարիզը, մեր ընկերների հետ այնտեղ անցկացրած ժամանակը, ընկերուհուդ հետ քնելուց առաջ փոխանակած մի քանի բառով հազարավոր թեմաներն ու զզվելի համով ֆասթ ֆուդը։
Մայրիկս երեկվանից պարբերաբար նայում-նայում է ինձ ու ասում՝ վայ, աչքերիս չեմ հավատում, որ եկար հասար տուն։
Եկել հասել եմ։ Վերադարձանք։

Սիրով՝ փարիզյան հայեր։

Անետա Բաղդասարյան
Անուշ Դավթյան
Մարիամ Նալբանդյան

Այն մասին, թե ինչ է նշանակում սովորել հաշվապահություն

Վերջին մասնագիտությունը բժշկից հետո, որ կուզեի սովորել, հաշվապահինն է: Չեմ սիրում գրասենյակային աշխատանք, երբ ամբողջ օրը սենյակում նստած պետք է անհետաքրքիր թվերի ու փաստաթղթերի հետ գործ ունենաս: Այսպես էի մտածում, երբ նոր էի սկսում սովորել հաշվապահությունը: Առաջին բանը, որ սովորել եմ՝ փաստաթուղթը լրացնելուց պետք է շատ զգույշ լինել ու գումարի թիվը գրելուց չսխալվել:

Լինում են դեպքեր, երբ 0 թվի սխալներ են լինում: Նաև կարող է փաստաթղթում գրված լինել, որ հաշվարկը հազար դրամով է կատարվում: Ու այդ դեպքում 50 հազարի փոխարեն պետք է գրել 50: Ֆրանսիական քոլեջում սովորելու առաջին տարվա ընթացքում մտածում էի, որ երբ ավարտեմ սովորելը, հաշվապահությունից ամեն ինչ կիմանամ: Եթե անգամ այդպես լինի, հաշվապահ չեմ դառնա, որովհետև ձանձրույթից կմեռնեմ:

Երկրորդ բանը, որ սովորեցի՝ ակտիվ= պասիվ+սեփական կապիտալ: Կազմակերպության ակտիվները միշտ հավասար են պասիվներին: Ակտիվները կազմակերպության միջոցներն են, իսկ պասիվները՝ դրանց ստացման աղբյուրները:

- Կազմակերպությունում ճանճը տզզաց, հաշվապահը պիտի գրի,- ասում է ընկեր Կիրակոսյանը:

Սովորեցինք՝ ինչպես լրացնել հաշվապահական փաստաթղթեր: Փաստաթղթավորումը սովորելու շնորհիվ հաշվապահությունն սկսեց որոշ չափով հետաքրքրել ինձ: Թվերը ոչ միշտ են անհետաքրքիր կամ տխուր լինում: Օրինակ՝ երբ բալանսում ակտիվի ու պասիվի թվերը համապատասխանում են, ունենում ես նույն զգացողությունը, ինչ մաթեմատիկայի դժվար խնդրի լուծումն ու ստացածդ պատասխանները համընկնելիս:

Բայց կան նաև վատ կողմեր: Այն ահավոր զգացողությունը, երբ աշխատավարձից հանեցի բոլոր հարկերը ու ստացա «կեղտոտ» աշխատավարձի թիվը:

Կյանքից սկսեցի հիասթափվել այն ժամանակ, երբ իմացա հարկային օրենսդրության մասին: Հարկերը պետության բյուջեի հիմնական մասն են կազմում: Կան հարկերի շատ տեսակներ, որոնք պետք է բոլոր կազմակերպությունները վճարեն: Սկզբում ինձ թվում էր, որ հաշվապահ լինելը հեշտ է, բայց հենց իմացա հարկային տեսչության մասին, հասկացա, թե իրականում ինչ պատասխանատու մասնագիտություն է:

Երրորդ կուրսում սկսեցին կասկածներ առաջանալ՝ արդյո՞ք այն, ինչ սովորում եմ, բավական է հաշվապահ դառնալու համար: Հարցիս պատասխանը ստանալու համար գնացի «Եվրասիա համագործակցության հիմնադրամ»՝ այնտեղ պրակտիկա անցնելու:

Ես չէի փոխել իմ միտքը, որ գրասենյակային աշխատանքն անհետաքրքիր է, մինչև չզգացի, թե ինչ լավ մթնոլորտ է ներսում: Իմ սեփական սեղանին համակարգիչ, նոթատետր, կպչուն թղթեր ու գրիչներ ունենալն ինձ շատ դուր եկավ: Ուզում էի որքան կարելի է շուտ գործի անցնել:

Ես ակնկալում էի, որ իմ ստացած գիտելիքներն ու պրակտիկայի ժամանակ արած աշխատանքը կարող են տարբերվել: Համակարգչով աշխատելը շատ հավես էր: Քոլեջում սովորել էինք ինչպես կազմել փաստաթղթերը թղթով և գրիչով: Կազմակերպությունում դա անում էի համակարգչով:

Նաև սովորեցի Excel ծրագրի բանաձևեր, որոնք օգնում են աղյուսակներ կազմելիս և հաշվապահության մեջ:

Կային աշխատանքներ, որոնք այնքան էլ հաճելի չէին: Օրինակ՝ անցած տարիների փաստաթղթերը դասավորելը կամ ՀԾ ծրագրի և Excel-ի աղյուսակները համեմատելը: Ու էլի ունենում էի խնդրի պատասխանը ստուգելուց առաջ կասկածի զգացողությունը: Ուզում էի, որ բոլոր թվերը համապատասխանեն:

Հաշվապահությունում ամենաշատը ինձ դուր չի գալիս այն, որ օրենքներն անընդհատ փոխվում են: Օրենքները այնքան բարդ են գրված, որ մի քանի օր հետազոտություն պետք է անել, որ հասկանալ, թե այդ երկար ու բարդ բառերի տակ ի՞նչ պարզ նախադասություն է թաքնված:

Հիմնականում հաճույք էի ստանում աշխատանքից ու մթնոլորտից: Հասկացա, որ սովորելը բավական չէ մասնագետ դառնալու համար: Տարիների պրակտիկայի միջոցով է կարելի դառնալ մասնագետ:

Երևի վերջին մասնագիտությունը, որ կուզեի սովորել բժշկից հետո, հաշվապահինը չէ:

Լիլիթ Վարդանյան

Դատարկ ափսեներ

«Իրանն անպայման հակահարված կտա Ամերիկային»:
«Ամերիկան երկու տրիլիարդին համարժեք զինամթերք է գնել»:
Արդեն մեկ շաբաթ է, ինչ լսում ու կարդում եմ նման բովանդակության նյութեր ու լուրեր համացանցում, ու անհնար էր պատկերացնել համաշխարհային քաղաքականությունն ու պատերազմներն առանց մեր միջամտության: Ցավոք, թե բարեբախտաբար՝ միայն համացանցի նյութերի մեկնաբանություններում:
Բոլորս պարտադիր կերպով ինչ-որ կողմի ենք սկսում աջակցել, ասում ենք, որ պարտադիր պետք է մյուս կողմի վրա ատոմային զենք գցել, կամ պարտադիր այն մի երկիրը պիտի խառնվի ու հարցը լուծի: Չենք հասկանում մի բան, որ երկիրն առանց որևէ պատերազմի արդեն իսկ կործանման եզրին է:
Պատերազմը բնական երևույթ է՝ առանց որի դժվար է պատկերացնել առաջխաղացում, բայց պատերազմները հին ժամանակներում ծագում էին այն ժամանակ, երբ բնակչությունը խաղաղ էր ու մոլորակին, կարծես թե, ոչ մի բան չէր խանգարում ապրել:
Մեր օրերում պետությունների գլուխ կանգնած մարդիկ իրենց անձնական շահերից ու քմահաճույքներից ելնելով խաղում են այլ մարդկանց ճակատագրերի հետ, մտածելով գրպանների պարունակության մասին՝ վերացնում են կյանքի՝ մեզ դեռևս միակ հայտնի կետը, իսկ հետո հպարտ հայացքներով ու խրոխտ ձայնով ելույթ են ունենում ու սպառնում, թե կարող են կոճակի մեկ հպումով վերացնել յուրաքանչյուր պետություն, որը կկանգնի իրենց ճանապարհին: Նման իրավիճակում որևէ պետության կողմից լինելն ու շահերը պաշտպանելն առնվազն անմտություն կլինի: Մի դարում, որտեղ խոսքերն ավելի շատ են, քան գործերը, անհրաժեշտ է կանգնել ու լուռ գործել: Որտեղ մարդիկ ավելի շատ բղավում են բնական աղետների ու գլոբալ տաքացումների մասին, քան գործում՝ անհրաժեշտ է ներդրում ունենալ վիճակի բարելավվման մեջ: Որտեղ մարդիկ անելանելի վիճակից սկսում են պատերազմներ ստեղծել, անհրաժեշտ է ոչ մի կողմին էլ չաջակցել, որովհետև մենք ներկա պահին մեզ պատերազմ թույլ տալ չենք կարող:
Եթե սկսվի երրորդ համաշխարհային պատերազմը, ապա դրանից չի տուժի երկու կամ չորս պետություն: Կտուժի մի ողջ մոլորակ, և պատերազմից հետո «կյանքը երկրի վրա» հասկացությունը կդրվի հարցականի տակ: Ուրախանալ այն փաստից, որ որևէ երկիր տնտեսապես կթուլանա՝ այն էլ պատերազմի միջոցով, անթույլատրելի է:
Ցավոք, երկրների գլուխ կանգնած են այնպիսի մարդիկ, ովքեր տեսնում են միայն իրենց ափսեի պարունակությունը, ու մտածում են միայն դրա անվերջ լինելու մասին, իսկ լցված ափսեներից այն կողմ ապրող մարդիկ իրենց դատարկ ափսեների պարունակությունից սկսում են որևէ ելք փնտրել՝ հաճախ ինչ-որ պետության քաղաքականությանն աջակցելով, հույս ունենալով, որ գոնե որոշ չափով իրենց ափսեն կլցվի:
Ու դատարկ ափսեներից հետո նրանց էլ մեղադրել չենք կարող...

Ջուլիա Աբրահամյան



«Թատրոնն անընդմեջ ստեղծագործական ընթացք է».

Երվանդ Մանարյանի հիշատակին

- Մենք կարդացել ենք, որ Դուք ծնվել եք Իրանում և Հայաստան եք գաղթել երիտասարդ հասակում: Գաղթելու որոշումն ու՞մն էր, Հայաստանը Ձեզ դուր եկա՞վ, ինչպե՞ս էր արդյոք հարմարվել Հայաստանի պայմաններին:

-Գաղթել եմ 21 տարեկան հասակում: Հայաստանը սկզբից էլ ինձ շատ դուր եկավ: Աստված մարդուն այդպես է ստեղծել, նա պետք է հայրենիք ունենա, որտեղ նրա պապերն ու պապերի պապերն են ապրել: Պարսկաստանում մենք շատ լավ էինք ապրում, պարսիկները շատ լավ մարդիկ են: Մեզ միշտ լավ են վերաբերվել, ուղղակի նրանք տան տերերն էին, դա էր միակ տարբերությունը: Մենք հյուր էինք, նրանք մեզ լավ էին վերաբերվում, բայց ուզում էինք մերն ունենալ: Եկանք Հայաստան և ունեցանք հայրենիք: Դժվարությունները չափազանց շատ էին: Երիտասարդը հենց դրանով է լավ, որ դժվարությունները հաղթահարել կարողանում է, չի նկատում դրանք: Միշտ եղել եմ Հայաստանում, լքել եմ միայն զինվորական ծառայության ժամանակ և մի քանի անգամ աշխատանքային գործուղումների պատճառով:

- Ինչու՞ որոշեցիք ընդունվել թատերական ինստիտուտ:

- Ծնողներս դերասաններ էին: Եվ հայրս, և մայրս պարսկահայ բեմի գործիչներ էին: Մորաքույրս այստեղ էր ապրում: Վանաձորի թատրոնում էր աշխատում, հանրապետության ժողովրդական արտիստուհի էր: Այդ միջավայրում եմ ես մեծացել, հակումներ էլ կային: Շատ լավ բան է դերասանությունը: Թատրոնը և ուրախ տեղ է, և շատ պատասխանատու: Օրինակ՝ երբ նստած են երեխաները և ներկայացում են նայում, շատ հեշտ է նրանց ապակողմնորոշել, սովորեցնել այնպիսի բաներ, որ հետագայում իրենց պետք չի գա, կամ կխանգարի: Այդ առումով շատ պատասխանատու բան է թատրոնը:

- Կպատմե՞ք ձեր ուսանողական տարիներից մի հատված, որը վառ է մնացել ձեր հիշողության մեջ:

- Իմ երիտասարդության տարիների բոլոր հիշողությունները ես աշխատում եմ շատ վառ պահել մտքումս: Աշխատում եմ չմոռանալ և լավ, և վատ դեպքերը: Կյանքը այսպես է. և դառնություններ են լինում, և ուրախություններ: Դրանք բոլորը քոնն են, ավելի շատ ինքդ պետք է կողմնորոշվես, թե որը շարունակես, որից հրաժարվես: Դժվար բան է, բայց լավ է, երբ արդեն կյանքիդ երկրորդ կեսն է սկսվում, և հետ նայելով տեսնում ես, որ վատ բաներն ավելի քիչ են: Պետք է սովորել դժվարություններին, իմանալ, որ դու ունես քո կեցվածքը և ինքդ քեզ պետք է չդավաճանես, չխաբես: Դա է ամենակարևորը: Եթե ինքդ քեզ խաբեցիր, գործերդ շատ վատ կգնան, զղջալուդ ժամանակը շատ շուտ վրա կհասնի, իսկ ուղղել հնարավոր չի լինի այլևս, որովհետև Աստված ոչ մեկին հնարավորություն չի տալիս ամեն ինչ նորից սկսել:

- Դուք աշխատել եք թե Պարոնյանում, թե Սունդուկյանում, որոնք ժանրային առումով շատ տարբեր թատրոններ են: Որտե՞ղ եք Ձեզ ավելի լավ զգացել:

- Սունդուկյանում իմ աշխատանքն այլ բնույթի էր: Վարդան Աճեմյանը թատրոնի տնօրենն էր, իսկ ես՝ նրա ասիստենտը: Դա ուրիշ տեսակի աշխատանք է: Այդտեղ մի հետաքրքիր դեպք պատահեց: Այն ժամանակ այսպես էր՝ կենտրոնական կոմիտեից պետք է գային, ներկայացումը դիտեին և հավանություն տային, մանավանդ եթե ժամանակակից պիես ես բեմադրում: Այսինքն քո թատրոնի համար գրված պիես է, քո ժամանակի մասին: Բեմադրում էինք կոլխոզի գյուղական ակումբի մասին ինչ-որ պիես: Եվ մի տեսարան կար, որ պետք է զուռնա-դհոլ մտներ բեմ: Երբ եկավ այդ պահը, ես շատ մեծ ոգևորությամբ երաժիշտներին (դրսից եկած երաժիշտներ էին) նշան արեցի, որ դուրս գան բեմ, իրենք էլ ոգևորված միանգամից զուռնան փչեցին և շատ բարձր երաժշտությամբ դուրս եկան բեմ: Շփոթություն առաջացավ և բեմի վրա, և դահլիճում: Առաջին քարտուղար Թովմասյանը շատ վրդովվեց, Աճեմյանի հետ ծանր խոսակցություն ունեցավ: Արդյունքում ներկայացումն արգելեցին: Մոտ մի ամիս անցավ, որպեսզի նորից թույլ տային, ուղղակի երաժշտությունը մի քիչ մեղմ պիտի բեմադրվեր: Նման դեպքեր շատ են պատահել: Թատրոնի աշխատանքն ինձ համար շատ հետաքրքիր աշխատանք է: Ամեն կերպար

մի մարդ է, իսկ թատրոնում աշխատող դերասանը քանի կերպար է կերտում, այդքան մարդ է ներկայացնում հասարակությանը: Դա բարդ աշխատանք է: Լուրջ աշխատանք է կատարվում և, երբ հասարակությունը որևէ դերասանի հավանում է, ի վերջո նրա համակրանքը կանգնում է այն դերասանի վրա, ով կարողանում է կյանքը ճիշտ ներկայացնել: Սուտը հետք չի թողնում, իսկ ճշմարտությունը՝ ներկայացված ուրախ, կամ տխուր տարբերակով, հետք թողնում է:

- Դուք աշխատել եք և թատրոնում, և կինոյում: Ո՞րն է Ձեզ ավելի հոգեհարազատ:

-Թատրոնը: Թատրոնն արվեստի որևէ այլ ճյուղի հետ դժվար է համեմատել: Կինոյում ինչ-որ դեր են հանձնարարում, կատարում ես: Եթե ռեժիսորը չի հավանում, նորից ես փորձում: Սկզբունքը դա է, և դերասանը ներքին զգացողություն ունի, գիտի, որ եթե սխալ բան արեց, հնարավոր է ուղղել: Իսկ թատրոնում հնարավոր չէ ուղղել: Դուրս եկար բեմ՝ վերջ: Հանդիսատեսը՝ նստած, լույսերը՝ մարած, և բոլորը սպասում են, թե դու ինչ պիտի անես: Եվ դու պիտի անես այն ամենն, ինչ կարող ես, ինչ ճիշտ ես գտնում: Պատասխանատվությունը շատ մեծ է: Թատրոնում աշխատանքը անընդմեջ ստեղծագործական ընթացք է, որը ընդհատումների ենթակա չէ:

- Ե՞րբ որոշեցիք դառնալ դերասան:

- Ես աչքերս բաց անելու պահից սկսած դերասանություն եմ տեսել: Երբ ես և եղբայրս փոքր էինք, դերասանները գալիս, մեր տանն էին փորձերն անում, մենք էլ դիտում էինք: Այդ ժամանակվանից արդեն որոշել էինք դառնալ դերասան: Հայաստան գաղթելիս ես ծնողներիցս մի քանի ամիս առաջ եմ եկել, և դրվածքն այնպես էր, որ ես կարող էի էլ չտեսնել նրանց: Հայրս վատառողջ էր, ինձ խնդրեց, որ անեմ՝ ինչ ուզում եմ, միայն թե թատրոնի հետ գործ չունենամ, որովհետև դերասան մարդը, ընդհանրապես, շատ է տուժում: Արտաքինից միայն ուրախությունն է երևում, բայց իրականում այդպես չի, ծանր կյանքով է ապրում թատրոնի մարդը: Ես այստեղ ընդունվեցի համալսարան և իմանալով, որ թատերական խմբակ կա, ցանկացա մասնակցել: Մի քանի անգամ մտա ռեկտորի՝ Հրաչիկ Բունիաթյանի մոտ, որ հարցնեմ, թե երբ է սկսվելու խմբակի աշխատանքը: Ըստ երևույթին, նա հասկացավ, որ ես սխալ, պարտադրված ընտրություն եմ կատարել: Երբ նույն խնդրանքով երրորդ անգամ մտա նրա մոտ, իմ ներկայությամբ զանգեց թատերական ինստիտուտի ռեկտորին և ասաց, որ Պարսկաստանից մի երիտասարդ սխալմամբ իր մոտ է եկել, պիտի նրա մոտ գնար: Եվ ինձ ուղարկեց թատերական ինստիտուտ: Գնացի ռեժիսուրայի ֆակուլտետ: Իմ շրջապատում ես միակն էի, որ ռեժիսուրայի ֆակուլտետ ընդունվեցի: Իմ մյուս Պարսկաստանից եկած ընկերները՝ Զարեհ Տեր-Կարապետյանը,

Հայկ Վարդանյանը և Իշխան Ղարիբյանը, դերասանականում էին: Ավարտելուց հետո երկար աշխատել եմ Գորիսի թատրոնում: Երբ առիթ եղավ Սունդուկյանում ասիստենտ աշխատելու, իսկ հետագայում նաև տիկնիկային թատրոնը գլխավորելու, ես անմիջապես ընդունեցի այս առաջարկը: Գնացի և մնացի այդ արվեստի ասպարեզում մինչ այսօր: Այս ասպարեզը շատ բարդ է, որովհետև երեխային խաբելը հանցագործություն է, իսկ նրան ընդառաջ չգնալը՝ անհնար: Շատ հետաքրքիր է նաև նրանով, որ երեխա հանդիսատեսը եկել է թատրոն և պետք է դիտի ներկայացումը: Ինչ էլ եղած լինի, նրան հետաքրքիր չէ: Նա եկել է, և դու պետք է բեմադրես այն, ինչ ուզում է նա տեսնել:

- Դուք աշխատել եք որպես դերասան, ռեժիսոր և սցենարիստ: Ո՞ր աշխատանքն է Ձեզ ավելի դուր գալիս:

- Իհարկե, դերասանի աշխատանքը հիմնական աշխատանքն է: Եթե դերասանը չլինի, մյուս բաներն ավելորդ են: Դրամատուրգը գրում է պիեսը, բայց դերասան չկա, որ խաղա, պիեսն արդեն ավելորդ է: Թատերական ինստիտուտի մեր դասախոսներից մեկի՝ Լևոն Քալանթարի, իր ուսանողների հետ ունեցած հենց առաջին զրույցն այդ մասին էր: Օրինակ բերեց այսպես՝ ասենք թե Մոսկվայից մի խումբ պիտի գա ներկայացում խաղալու: Խումբը առանձին մեքենայով է գալիս, իսկ դեկորները և մյուս պարագաները՝ այլ: Ճանապարհին ինչ-որ բան է պատահում, և դեկորները տեղ չեն հասնում: Դերասանները կան, մի բան խաղում են, և հանդիսատեսը դա տեսնում է: Ասենք թե հակառակն է լինում: Դեկորները գալիս են, իսկ դերասանները չկան: Ո՞վ պիտի խաղա: Ներկայացումը չի կայանում: Այս փոխհարաբերությունը, այս դրվածքը թատրոնում զգալի երևում է: Երբ դերասան ես, դու զգում ես, որ դու ես պատասխանատուն, հանդիսատեսի և դրամատուրգի, բեմադրիչի միջև կապը: Եթե դու չլինես, հանդիսատեսը չի գա, նստի դահլիճում: Դերասանությունը մեր ժողովրդին շատ վաղուց է ծանոթ: Մովսես Խորենացին նկարագրում է, որ բամբիռը ուսներին գցած, գյուղից գյուղ, քաղաքից քաղաք էին շրջում ստեղծագործողները և երգով, պարով ինչ-որ բան էին ներկայացնում: Դա հենց դերասանությունն է: Եվ դա առավել տարածված է եղել Ագուլիսի, Նախիջևանի շրջաններում: Իսկ եթե հայրդ արմատներով այդ շրջաններից է, քեզ կարող է թվալ, ինչպես ինձ է թվացել, որ իմ նախնիներից մեկը այդպիսի մարդ է եղել, թափառել է գյուղից գյուղ: Ինձ հետ շատ հաճախ է պատահել, որ, ունենալով իմ հիմնական աշխատանքը Երևանում, թողել գնացել եմ շրջանային թատրոն: Շրջանային թատրոնում հետաքրքիր է շատ, որովհետև շրջում ես գյուղից գյուղ, ավանից ավան: Շաբաթը մեկ անգամ ներկայացում ես բեմադրում Գորիսում, իսկ մյուս օրերը՝ գյուղերում: Իսկ գյուղերում ներկայացում բեմադրելը շատ հետաքրքիր է, որովհետև այնտեղի հանդիսատեսը շատ անկեղծ, լավ հանդիսատես է: Նրան թվում է, որ այն, ինչ դու բեմի վրա ցույց ես տալիս, իրականում տեղի է ունենում: Դերասանի մասնագիտությունը նաև շատ հետաքրքիր է նրանով, որ դու ցույց ես տալիս տարբեր կերպարներ: Ուրիշ ոչ մի մասնագիտություն այդ հնարավորությունը չունի:

- Դուք աշխատել եք Ձեր եղբոր հետ: Տարաձայնություններ ունենու՞մ էիք, արդյոք դժվար չէ՞ր:

- Տարաձայնություններ շատ հաճախ էինք ունենում: Եթե դու քո գործին նվիրված մարդ ես, կատարում ես այն, ինչ քեզ է Աստված տվել: Դու քո ցանկություններն ունես, իսկ եղբայրդ՝ իրենը: Չես կարող նրան ընդառաջ գնալով մի տեսարան գրել, որը գիտես, որ պետք չէ: Պետք է գալ ընդհանուր հայտարարի, գտնել ոսկե միջինը և ստեղծել: Երբ այդպես չես վարվում, խոտան ես ստեղծում: Իսկ հանդիսատեսն անմիջապես նկատում է խոտանը: Դեպքեր են լինում, որ ֆիլմը նկարելուց հետո հանդիսատես չի լինում: Իսկ պատճառն այն է, որ անկեղծ չէր: Հետաքրքիր է միշտ անկեղծությունը:

- Ինչո՞ւ որոշեցիք թատրոնն անվանել «Ագուլիս»:

- Ծնողներս Ագուլիսից են: Ագուլիսն առայժմ մեզնից հեռացած շրջան է, բայց դա մեր Գողթան գավառի շեն կենտրոններից մեկն է եղել: Ցանկացա այդպես անվանել թատրոնը:

- Ինչո՞ւ որոշեցիք հիմնել հենց տիկնիկային թատրոն, ե՞րբ և ինչպե՞ս ստեղծվեց «Ագուլիսը»:

- Տիկնիկային թատրոնում դու ես ամեն ինչն անում: Դա շատ հետաքրքիր գործ է: Ամենամեծ թատրոնում, ենթադրենք, կա հիսուն կամ վաթսուն դերասան, որոնք

կարող են ստեղծել երկու հարյուր, կամ երեք հարյուր կերպար: Իսկ տիկնիկային թատրոնում, եթե պետք լինի, կարող ես հազար կերպար ստեղծել: Տարբերությունը դա է: Մի բան է, երբ դու խաղում ես և տեսնում ես քո հանդիսատեսին, մեկ այլ բան, երբ դու զգում ես նրան: Շատ հետաքրքիր պրոցես է, երբ ձեռքդ բարձրացրած տիկնիկին ես խաղացնում և չես տեսնում հանդիսատեսին, այլ զգում ես նրան: Տիկնիկային թատրոնի դերասանի ամբողջ էությունը գալիս, մատների ծայրին է հավաքվում: Ընդհանրապես, ստեղծագործական առումով, տիկնիկային արվեստը շատ հետաքրքիր արվեստ է, հանդիսատեսին շատ բան կարող է ասել:

- Դուք աշխատել եք շատ դերասանների հետ: Արդյոք դժվար չէ՞ր նրանց հետ լեզու գտնել:

- Դերասանների հետ լեզու գտնելը շատ դժվար բան է: Նրանցից յուրաքանչյուրն անհատականություն է: Որքան էլ տարօրինակ է, հետաքրքիր է աշխատել այն դերասանի հետ, որը վիճում է: Ասածներդ կատարող դերասանը հետաքրքիր չէ, իսկ վիճողը՝ շատ հետաքրքիր է, իհարկե, դա էլ իր չափը պիտի ունենա: Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում մի դերասան ունեինք՝ Պավլուս անունով: Նա տիկնիկային արվեստի մեծ երախտավորներից էր, հայրենադարձ էր: Բեմադրում էինք «Ականա երաժիշտները», ինքը էշի դերակատարն էր: Փորձի ընթացքում ինչ-որ բան արեց, չհավանեցի, դիտողություն արեցի: Չընկալեց, կամ չցանկացավ անել: Վիճեցինք, կերպարը ստեղծվեց վիճելու պրոցեսում, ի վերջո ես կարգադրեցի: Ասացի՝ ես կարգադրում եմ, որ սա այսպես պետք է անես: Վեճը վերջացավ: Սկսվել է ներկայացումը, նայում եմ, այդ տեսարանից հետո ինչ-որ անիմաստ դադար կա: Գնացի բեմի հետևը, հետաքրքրվեցի: Վիրաբ Հարությունյանից, ով թատրոնի տեր-տնօրենն էր, հարցրեցի, թե ինչու՞ է այդ տեսարանում անհարկի դադար: Ասաց, որ ես եմ մեղավոր: Ես Պավլոսին դիտողություն եմ արել, նա այդ դիտողությունը չի ընդունել և ամեն անգամ այդ խոսքերն ասելուց հետո, ցածրաձայն ավելացնում է. «Այսպես է կարգադրել գլխավոր ռեժիսոր Երվանդ Մանարյանը»: Շատ հետաքրքիր անձնավորություն էր Պավլոսը:

- Մեր հասարակության մեջ այժմ շատ հաճախ է հանդիպում անտարբերությունը: Ինչպե՞ս եք վերաբերվում անտարբերությանը:

- Չեմ սիրում անտարբեր մարդկանց: Նրանց հետ չես կարող վստահ աշխատել: Հետաքրքիր մարդիկ չեն: Քաղաքացիական կեցվածք ունեցող մարդանց հետ շատ հետաքրքիր է գործ ունենալ, թեկուզ, եթե հակոտնյա դիրքերում կանգնած լինեք:

- Դուք ակտիվ քաղաքացի եք, ինչու՞ երբևէ չեք զբաղվել քաղաքականությամբ:

- Քաղաքականությամբ զբաղվելը շատ լուրջ մասնագիտություն է: Քաղաքականությամբ զբաղվել՝ այսինքն, դառնալ քաղաքական գործի՞չ: Ոչ, պետք չի, ես դերասան եմ, ես թատրոնի մարդ եմ: Բայց, իհարկե, որպես քաղաքացի անտարբեր չեմ: Երբ տեսնում եմ, որ ինչ-որ բան իմ կարծիքով սխալ է, ասում եմ դա: Երբեմն էլ գնում եմ հանրահավաքների, ելույթ եմ ունենում: Կարծում եմ, որ դա ճիշտ է: Իմ ընկերներից ոմանք կարծում են, որ պետք չէ դերասանը մասնակցի քաղաքական կյանքին, իսկ ես գտնում եմ, որ իրենք սխալ են, ես եմ ճիշտ: Ամեն մեկս մեր դիրքորոշումն ունենք:

Հարցազրույցը գրի առավ՝ Մարիամ Նալբանդյանը
2013թ.



Հայաստանի պատանի թղթակիցների ցանց